

Գիրքը լուսապատճենահանվել է

A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from [www.A-PDF.com](http://www.A-PDF.com) to remove the watermark

# "ՀամաՀայկական Էջ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ Ընթացական է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ԱՌԵՎՈՐԴԻ ԿԱՐՈՒՅՈՒՆ ԱՌԵՎՈՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱՎԱԼԻՔՆԵՐԻ ՏՐԱՋՈՒՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԽԱՐԱՐ  
ԸՆԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՄ

ԹԵՎԱԿ ՊՐԵՄԻ ԽԵՂԱՄԻ ՄԱՆՏՈՎԱԿԱՆ ԿԱՐՈՒՅՈՒՆ  
ԽՈՎԱՐ, "ԽՈՎԱՐԵՎԱԿԱՆ ԽԵՂԱՄԻ ԽՈՎԱՐԻ" ԽՈՎԱՐ


[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՐՈՒՅԹ ԱՅ, ՈՐ ՕԳՏԱԼԻ ԵԶ ՄԵՐ ԿԱՅԵՑ  
ԾԱԿՈՎԱԿԻ ԵՎ ՀՈՎԵԼԻ ԸՆԴՐՈՒՅԹՆԵՐԻ



ՀԱՇ ՄԻԱ: [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

Է. Ա. ՄԵՐՐԱՔԲՅԱՆ



Հրայր Աբգյան

Լուսապարբեր՝ Կ. Պատարյան  
Փոտոգրաֆին Յ. Կազեբլու



Եթե ասեմ՝

Խոց կլիմի,

Եթե չասեմ՝

Խոց կլինի...

Ինքը ասա.

Ես ի՞նչ անեմ,

Բա իմ բանը

Ո՞ց կլինի:




Այն, ինչ կոշշում է գրականություն,  
Հեսպանատո՛մ չէ,  
Որ զգաս — խորհե՛ն — մտածես մի բան  
Եվ այլ բան ասես:

Э.А. МЕГРАБЯН




**СЛОВА  
С ТОБОЙ**



„ПАРБЕРАКАН“  
ЕРЕВАН - 1990

Է.Ա.ՄԵՐՐՎԱՐՅԱՆ

ԱՐԴԻՇ  
ԾԵՎ  
ZTS



„ՊԱՐՔԵՐԱԿԱՆ“  
ԵՐԵՎԱՆ - 1990

ԳՄԴ 88. 847

Ն 900

Առաջարանը՝  
բանահրական գիտությունների դոկտոր  
**Դ. Վ. Գասպարյանի**

**Предисловие —**  
доктора филологических наук  
**Д. В. Гаспаряна**

Մ 4608020102  
709 (01) — 90 № 8 — 90

© Անրայան Է. Ա., 1990  
© Է. Ա. Մեղրաբյան, 1990







## ՈՐՊԵՍ ՍԿԻԶԲ

Երևանից Պարույր Սևակի ծննդավայր մեկնելիս, բանաստեղծի անվան հետ կապվող առաջին սրբատեղին նրա հուշաքարն է՝ կանգնեցված այնտեղ, ուր 1971 թ. հունիսի 17-ին ավտովթարի հետևանքով նա կնքեց իր մահկանացում: Հուշաքարից ձախ՝ խանձված լեռնալանջերի փեշերին կառուցված տներով ու այգիներով երևում է բանաստեղծի անունով մկըրտված մի նորաշեն բնակավայր, որ կարծեք հուշաքարի հարևանությամբ խորհրդանշում է մահվան և հարության առասպելը: Հուշաքարն ազդարարում է, որ բաղձալի լույս լինելու փոխարեն եղավ ողբերգական խավար: Իսկ այս շենքը մի նոր միտք է հուշում՝ կապված ստեղծման ու ծնունդի հետ: Աչքիդ առաջ կանգնում է ի չգոյե գոյ ածյալ մի բնակավայր և անունը՝ Սևակ: Սա արդեն այն է, ինչը հուշաքարից ճանապարհ է հարթում դեպի ապրող հիշատակը:

Բայց նույն ճանապարհը դեռ շարունակվում է և գնում դեպի բանաստեղծի ծննդավայր: Գրեթե միաժամանակ երևում են երկու ցուցանակ. մեկը՝ աջ թևի վրա, որ գյուղի անունն է, մյուսը՝ ձախ, որի վրա գրված է՝ Պարույր Սևակի տուն-թանգարան: Ճանապարհը, մի կողմից գյուղը շրջանցելով, շարունակվում է դեպի հարավ, իսկ մյուս կողմից շեղվում է և որպես նպատակակետ ու վերջնական հանգրվան կանգնեցնում Պարույր Սևակի տուն-թանգարանի առջև: Թանգարանից ներքև բանաստեղծի տունն է՝ կառուցված իր նախագծով ու իր ձեռքով և այգին, որի ծառերը տնկել ու մշակել է դարձյալ ինքը:

Այգում նրա շիրմաքարն է: Շիրմաքարի տակ հանգչում է նաև կինը,որը մահվան մահճում անգամ բախտակից եղավ նրան: Կողքին թաղված են ծնողները: Ամեն ինչ կողք-կողքի է, որ ակամա հիշեցնում է ասված խոսքը. խառնվեց հողին՝ իր իսկ ծնողին:

Այստեղից լայն տեսադաշտով երևում է ամբողջ գյուղը, որ գոգահովտով տարածվել է լեռնապարի ափի մեջ: Պ. Սևակի տոհմական տունը, ուր ապրել են պապերն ու հայրը, գյուղի խորչում է: Իսկ ինքը ահա այս հողակտորը վերցրել է գյուղի ծայրին, բարձունքի վրա, ծաղկեցրել վայրի խոպանը, որը հիմա եկող-գնացողի հիացմունքն է շարժում, բայց որը ինքը այդպես էլ չվայելեց: Ուրեմն՝ իրենը աշխատանքն էր, տառապանքն ու ողբերգությունը:

Հիմա այդտեղ մշտապես այցելուներ են լինում, իսկ նրա մահվան օրը վերածվել է պոեզիայի ավանդական օրվա, ուր իրենց խոսքն են ասում գրչակից բարեկամներն ու երկրպագուները: Տուն-թանգարանում նրա կյանքն ու գործը հիշեցնող մասունքներ են՝ լուսանկարներ, դիպլոմներ, շքանշաններ, անձնական իրեր, գրքեր ու ձեռագրեր: Պատին մեծ որմնանկար է, ուր դարձյալ բանաստեղծն է իր համագյուղացիների և ընկերների շրջապատում, իր բան ու գործի մեջ, ավա՞ն, նաև իր մահվան պահին ու անմահության սկզբին:



Պարույր Սևակը 1950—1960-ական թվականների հայ պոեզիայի առաջատար դեմքն է, որն իր ստեղծագործությամբ որակական մի նոր աստիճան նշանավորեց գեղարվեստական մտածողության պատմության մեջ: Իր առաջին բանաստեղծությունները նա թղթին հանձնեց նույն այն տարիներին, երբ կյանքի վերջին օրերն էր ապրում իր մեծագույն նախորդը՝ Եղիշե Զարենցը: Կարծեք մի ներքին նախախնամությամբ փոխանցվում է հնամյա ցեղի ստեղծագործ հանճարի ժառանգորդական գիծը: Այդպես էլ կար: Ահա իր իսկ խոստովանությունը. «Յոթ-ութերորդ դասարանում ես որոշեցի մի չտեսնված գործ կատարել՝ հայ ժողովրդի պատմությունը չափածո շարադրել... Գյուղում գիտեի Եղիշե Զարենցի անունը: Սուրխաթյանի դա-

սագրքից գիտեի Չարենցի մասին... Ուստի շատ ցավեցի, երբ իմացա, որ Չարենցի գրքերը հանելու են գրադարանից, և «Գիրք ճանապարհիի» մի օրինակը գողացա ու տուն տարա: ... Եվ իմ առաջին լուրջ փորձերը գալիս էին Չարենցից» («Ինչ-ը, ինչպես-ը, որպես-ը»):

Հետո Չարենցի անվան կողքին պիտի ավելանային Գրիգոր Նարեկացու, Դանիել Վարուժանի, Ատոմ Յարճանյանի (Սիամանթո), ապա և՝ Ուոլթ Ուիթմենի ու Վլադիմիր Մայակովսկու անունները, և Սևակը իր մեջ պիտի համատեղեր հայ և համաշխարհային պոեզիայի նորարական շունչը՝ որոնումն ուղղելով դեպի գրականության հավերժական Անհայտը, որը Մարդն է՝ իմանալի-բացահայտված, բայց առավել չափով անհմանալի-չբացահայտված իր ոգեղեն անսպառ գոյությամբ:

Ամբողջ ստեղծագործական կյանքում Սևակը գնաց խիզախսման՝ հանուն դժվարի, բարդի ու նորագույնի, ժխտելով հեշտն ու պարզունակը, գոհության կողքին դնելով մեծ դժգոհությունը, համակերպությանը՝ հակադրելով ընդդիմությունը, անտարբերությանը՝ վառվող հոգին: Դա նա ապացուցեց իր անձնական ճակատագրով, գրական գործունեությամբ, մտավոր-մշակութային զարգացման մեջ ունեցած դերով ու նաև, ինչո՞ւ չէ, սեփական արժեքի ու նշանակության հասարակական, գրապատմական բարձր գիտակցությամբ:

## ԿՅԱՆՔԸ

Դժվարին կյանքի ուղի է անցել Պարույր Սևակը՝ Հայաստանի հեռավոր գյուղերից մեկից ճանապարհ հարթելով դեպի... Պառնաս, դեպի Մուսաների հավիտենական ընկերությունը, որը և երաշխիք է անմահության: Այդ ճանապարհը պիտի անցներ Երևանով ու Մոսկվայով, պիտի վերուվար աներ անձնական և ստեղծագործական կյանքի տեղատվությունների ու մակընթացությունների մեջ: Նա՝ պիտի ելք որոներ ստալինյան շրջանի մոլավանջից, պիտի տեսներ ու լիասիրտ ողջուներ խրուշչովյան տարիների ազատությունը և ողբերգականորեն կյանքն ավար-


տեր բրեժնեկան օրերի լճացման ու բարոյական անկման պայմաններում: Այս ամենը նա պիտի ապրեր որպես մարդկային մի կյանք՝ խավարի մեջ երազելով լուս, այս ամենի մասին նա պիտի գրեր՝ հաշտության եզրեր որոնելով ինքն իր երկատված էության հետ, և այս ամենը նրա մեջ գնալով պիտի ահագնացներ արդարության բաղձանքը:

Ահա, այս ամենով, ո՞վ էր Պարույր Սևակը, որտեղից էր գալիս և ո՞ւր էր գնում:

1965-ի դեկտեմբերին գրած և միայն վերջերս տպագրված «Անցյալը ներկայացած» ինքնակենսագրականով («Սովետական գրականություն», 1988, № 1), 1967-ի հունիսին իր իսկ ձեռքով լրացրած անձնական թերթիկով ու կենսագրական այլ



Բանաստեղծի հայրը՝  
Ռաֆայել Ղազարի  
Սողոմոնյան  
(1892—1975)  
  
Օтец поэта—  
Рафаэл Казарович  
Согомонян  
(1892—1975)



Պ. Սևակի հայրական տունը Չանախչիում (ՀԽՍՀ, Արարատի շրջան,  
գ. Սովետաշեն)

Отчий дом П. Севека в Чанахчи (с. Советешен Араретского  
района Арм. ССР)

տեղեկանքներով, ապա և հարցազրուցներով, այլոց լրացում-  
ներով փորձենք ներկայացնել նրա կյանքի ուղին:


Պարույր Ղազարյանը ծնվել է 1924 թվականի հունվարի 24-ին, Վեդու (այժմ Արարատի շրջանի Չանախչի (այժմ Սովետաշեն) գյուղում: Հայրը՝ Ռաֆայել Ղազարի Սողոմոնյանը (1892—1975), որը գրաճանաչ էր և մայրը՝ Անահիտ Գասպարի Սողոմոնյանը (1894—1982), որը տառերն անգամ չէր զանազանում, աստվածավախ ու բարեպաշտ մարդիկ էին, զբաղմունքով՝ հողագործներ ու անասնապահներ: Նրանց նախնիները 1828-ին գաղթել էին Պարսկահայաստանի Սալմաստ գավառի Լավթավան գյուղից և բնակություն հաստատել կենտրոններից կտրված այդ հեռավոր լեռնային գյուղում: Բանաստեղծի նախնիների ազգանվանը իր իսկ վկայությամբ «սերնդեսերունդ» կպած է եղել «Տեր»-ը, որ հոգևոր դասի տիտղոսն էր: Նրանք գրագետ մարդիկ էին, որ ուսանել էին եջմիածնի



Մարտին Ամազելիս Գևորգյան (1894—1982)  
Մայ — Աննա Գալերյան (1894—1982)

Դեղուան ճեմարանում: Համագյուղացիները նույնիսկ կասկածել են, թե ապագա բանաստեղծի հորենական պապը կարդալուց... գժվել է: Իսկ հետո էլ ճշտել են իրենց. «ոչ թե խելագար էր, այլ... համարյա թե մարգարե, որովհետև «Օղորմածիկը ինչ որ ասում էր՝ կատարվեց» («Անցյալը ներկայացած»): Գրագիտության այս գենը պիտի որ չկորչեր: Եվ հենց դա է, որ ժառանգաբար փոխանցվում է պատաճի բանաստեղծին՝ որպես ոգեղեն ապացուց նրան հասցնելով տոհմական նարեկը:

Վեց տարեկանից, արդեն գրաճանաչ ու «համարել» իմացող, հաճախել է գյուղի միջնակարգ դպրոցը: Թեև դպրոցը զուրկ էր որակյալ ուսուցիչներից, և ֆիզկուլտուրայի դասատում տասներորդում նույնիսկ գրականություն էր դասավանդում, թեև դժվար էին ճարվում դասագրքեր, գրենական պիտույքներ, բայց և մեծ էր ուսման տենչը: Նա հավասարապես սիրում է



Միջնակարգ դպրոցի  
ավարտական վկայա-  
կանը

Свидетельство  
об окончании  
средней школы

և՝ բնական, և՝ հումանիտար առարկաները և այդ սիրով էլ գերազանց առաջադիմությամբ ավարտում է դպրոցը:

Մանկուց եղել է գաղտնապահ, բայց ոչ ծածկամիտ: Այդ տարիներին էլ ձևավորվել են բնավորության գծերը, որոնց բնորոշ է եղել բոնկուն տարերքը, անկեղծությունը, ուղղամտությունը, անսեթենթ պարզությունը: Մանկուց եղել է նաև շատ ընթերցասեր, կարդացել է այն ամենը, ինչ հնարավոր էր ճարել գյուղական գրադարաններում: Ընթերցանությունն էլ նրա մեջ արթնացրել է գրելու պահանջ: Առաջին բանաստեղծությունը թողին է հանձնել Ի. Տուրգենևի «Առաջին սեր» պատմվածքի հերոսուհու՝ Զինափեայի կերպարի ներշնչանքով: Այս տարիներին էլ նա երազում է գրող դառնալու մասին և մինչև անգամ համոզված էր, որ կդառնա «Էն «Գիշորը» գրողի պես մարդ»: Այդ մեծ հույսով դպրոցի պատի թերթում Պարույր Արեգունի ստորագրությամբ հրապարակում էր իր առաջին բանաստեղծությունները:

1939 թվականից Պարույր Ղազարյանը Երևանի համալսարանի բանասիրական բաժանմունքի հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանող է: Համալսարանը նրան ուշքի է բերում և ստիպում գիտակցել իր իմացությունների ու գրական պատկերացումների անլիարժեքությունը: Այստեղ, վերաքննության ենթարկելով ինքն իրեն, նա ոչ միայն հասկանում է, որ ինքը թերուս է, այլև, որ ինքը «... բանաստեղծ չե»: Հասկացնողը Չարենցն էր, որի արգելված գրքերն էլ սեղանի գիրք էին դարձել նրա համար: Այս տարիներին էլ նա սկսում է զանազանել ճշմարիտ պոեզիան բառերի կեղծիքից և հասկանում, որ «բանաստեղծությունը շղթայել օրացուցին նույնն է, թե Բախի խորալը նվագել ստադիոնում կամ «Խորհրդավոր ընթրիքը» փակցնել բաղնիքում, որ ճշմարիտ բանաստեղծություն գրելը պիտի լինի ինքնազատագրության պես բան և ոչ թե թամադայություն, որ բանաստեղծը ներքին այրման շարժիչ է և ոչ թե ջրաղացի անիվ՝ օտար մի ուժով պտտվող («Անցյալը ներկայացած»): Հասկանալով գրելու ու գրելացավի տարբերությունը՝ ուսանող Պարույրը որոշում է այլևս չգրել: Դրա փոխարեն խորացնում է գիտելիքները գրաբարի, հայ բազմադարյա գրականության ուսումնասիրության ասպարեզում և իրեն նախապատրաստում բանասիրության ու գրականագիտության:

Բայց և բանաստեղծության բոցը այդքան հեշտ չէր մարել: 1941—1942-ին նա վերստին սկսում է գրել և... տպագրվել: Գրում էր «Ռեզվիեմ», «Սոնետներ», «Աղոթքներ» շարքերը, «Լուսին» պոեմը: «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի 1942 թ. № 7-ում լույս է տեսնում նրա «Անխորագիր» վերնագրված առաջին քերթվածը, իսկ նույն թվականի № 8-ում «Փճորումներ», «Զղջում», «Պատերազմի դաշտում զոհվածներին» բանաստեղծությունները: Ամսագրի խմբագիրը Ռ. Զարյանն էր, որը և Պարույր Ղազարյանին մկրտում է Պարույր Սևակ գրական անունով: Սկիզբը անսովոր էր ու խոստումնալից: Խոստումնալից-ին ուշադրություն չդարձրեցին, բայց անսովոր-ը չվրիպեց գրական պահպանողականների ուշադրությունից, և 18-ամյա բանաստեղծը դարձավ Վտանգավոր հարձակումների թիրախ, մեղադրվեց զանազան իզմերի մեջ: Այդուհետև նա այլևս չտպագրվեց մինչ 1948 թ.: Նա դատապարտվեց վեց տարվա հարկադիր լոռության, իսկ ամսագրի խմբագիրը նաև Պ. Սևակի բանաստեղծությունների տպագրության համար հեռացվեց աշխատանքից:

Բանաստեղծ, թե՛ գիտնական երկրներանքը այս տարիներին լուծվեց ինքնաբերաբար: 1945 թ. գերազանց առաջադիմությամբ նա ավարտում է համալսարանը (դիպլոմ № 389030) և 1946-ին ընդունվում ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայ հին գրականություն մասնագիտությամբ: Նրա գիտական դեկանական էր Կ. Մելիք-Օհանջանյանը, թեման՝ «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում»:

Նույն այս տարիներից էլ սկսվում է նրա աշխատանքային գործունեությունը: 1945—1946 թթ. որպես գյուղական երիտասարդության բաժնի վարիչ աշխատում է «Ավանգարդ» թերթում, 1946—1947 թթ. որպես մամուլի բաժնի ավագ ոեֆերենտ՝ Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերությունում, 1949—1951 թթ. վարում է «Գրական թերթի» պոեզիայի բաժինը:

1947 թ. մարտին Մոսկվայում մասնակցում է երիտասարդ գրողների համամիութենական խորհրդակցությանը, հուլիսին՝ Հայաստանի երիտասարդ գրողների համաժողովին, լսում է Հ. Զոշարի կարծիքը իր մասին, ուր կար և՝ գնահատություն, և՝

կշտամբանք՝ հատկապես անսովոր մտածողության համար։ Մասնակցում է գրական այլ միջոցառումների՝ երեկույթներում կնարդում է բանաստեղծություններ, ելույթներ ունենում քննարկումների ժամանակ, հանդես գալիս գեկուցումներով։ 1949-ի մարտին ընդունվում է ԽՍՀՄ գրողների միության շարքերը։

Ամբողջ 1940-ական թվականները նրա համար լինում են հասունացման, հոգևոր ամրացման, առաջին հաջողությունների ու առաջին հիասթափությունների տարիներ։ Չափով է բանաստեղծը վերհիշում ետպատերազմյան տարիները. «Անառողջ էր կյանքն ու իրականությունը։ Եվ դա առավել սուր զգացվում էր արվեստի աշխարհում... Բոլոր թվերից երջանկագույնը դարձել էր երեքը, որովհետև դա էր խորհրդանիշը Նորին Մեծություն Միջակության։ Լավագույն անտառի նմուշը... գաղոնն էր։ Արվեստագետի ստեղծագործությունը նմանվել էր թվաբանական խնդիր լուծող աշակերտի գործի. խնդրագրի վերջում տրված էր խնդրի պատասխանը. արվեստագետի գործն էր ամեն ինչ անել, որպեսզի ստացվի նախապես տրված պատասխանը։ ...Մինչդեռ բանաստեղծության աշխարհում կարող է տեղ ունենալ ամեն արարած, բացի թութակից։ ...Սեփական կարծիք ունենալը հավասարվել էր հերետիկոսության։ Չեր կարելի ունենալ նույնիսկ սեփական բառապաշար. հոմանիշների խրձից ընդունելի էր միայն մեկը՝ այն, որ մաշվում էր լրագրերի մեջ. հարյուրավոր բառերի և դարձվածքների վրա դրված էր տաբու, այդ թվում նա «ես»-ի՝ իր բոլոր հոլովածներով։ ...Սկսած 1942-ից, ալսինքն՝ իմ գիտակցական կյանքի սեմից, ես կյանքին ու աշխարհին նայում էի այնպես, ինչը հետագայում (20-րդ համագումարի որոշումներով) դարձավ համընդհանուր կանոն մեր կյանքի ու երկրի համար։ Շնորհիվ այս բանի էլ, իմ շատ գրչակիցների համեմատությամբ, ես կարողացա խուսափել շատ մեղքերից։ ...Այդ տարիներին ես հասկացա, որ մի բան մտածել և այլ բան ասելը անբարոյականության վատթարագույն տեսակն է» («Անցյալը ներկայացած»)։

Իսկ սրանք նրա մտավոր թոհիչը տարիներն էին։ Նա գրեց շատ, բայց տպագրեց քիչ։ Երջանիկ բարեպատեհություն էր առաջին գրքի հրատարակությունը։ «Անմահները հրամայում են» վերնագրով այն լույս տեսավ 1948-ին (խմբագիր՝ Գ. Բորյան,



Մար հնաւ  
С материю

տպաքանակը՝ 3000, ծավալը՝ 2 հետինակային մամուկ): Գիրքը արդար խղճի, հասուն ձիրքի և անդավաճան գրական սկզբ- րունքների արտահայտություն էր: Առաջին փորձությանը Սևակը դիմացավ և դուրս եկավ հաղթանակով:

Բայց և ժամանակին գիական (ավելի ստույգ՝ հակագրական) բարքերը՝ անկոնֆլիկտայնության տեսություն, կյանքի գունա- զարդում, անհատի հոգեբանության անտեսում, ազդեցին նաև նրա վրա, որի արդյունքը եղավ «Անհաշտ մտերմություն»՝

պոեմը (գրել է 1947—1952 թթ., առանձին գրքով լույս է տեսել 1953-ին (խմբագիր՝ Ս. Տարոնցի, տպաքանակը՝ 3000, ծավալը՝ 5,2 հետինակային մամուլ): Նրան ստիպեցին պոեմը չորս անգամ մշակել, իսկ դրանից հետո էլ «Հայպետհրատը» պատրաստի շարվածքը ցրեց: Պոեմը նախ լույս տեսավ Մոսկվայում «Դրոզյա ից Սովետաշենա» (1953 թ., թարգմանիչներ՝ Վ. Զվյագինցևա, Լ. Լենկովսկի) և ապա Երևանում: Ստիպողաբար ծայնը փոխելու, գոմի և պալատի միջև երկընտրանք կատարելու («Անհաշտ մտերմությունը» նախապես վերնագրվել է «Գո՞մ, թ՞ե պալատ»), «անհնարը հնարավոր դարձնելու տաճաշալից ինքնախաբեռությանը» և արհեստական բախումներին վերջ տալու, հանգավորված ուսպորտաժի ու չափածու թղթակցության վրա ձիրքը չվատնելու, սուտը ճշմարտի տեղ չսաղացնելու և գրական կեղծիքին չհամակերպվելու մտադրությամբ Սևակը փորձում է ելք որոնել այս հարկադիր պայմաններից: Նա զգաց, որ տեղի է տալիս, բայց և չնահանջեց իր սկզբունքներից: 1948-ին, ընկճված տրամադրությամբ նա այսպիսի օրագրային գրառում է արել. «Առավել ևս ուրախալի է, որ Խորհրդային Միությունը Հայաստանով, և Հայաստանը գրողների միությունով չի սահմանափակվում»: Այս տողերը միշավայրի նեղվածքից ելք որոնելու տագնապներ ունեն ու նաև փրկության ճանապարհի հույս:

Հանուն այդ սկզբունքների պաշտպանության և ընդդեմ իր շուրջ ստեղծված գրական անցանկալի մթնոլորտի Սևակը թողեց Երևանը և մեկնեց Մոսկվա՝ ուսանելու: 1951—1959 թվականները նրա կյանքի մոսկովյան տարիներն են՝ նոր միջավայր, նոր հետաքրքրություններ և նոր կյանք:

Համալսարան և ասպիրանտուրա ավարտած, թեկնածուական դիսերտացիան գրած երիտասարդ գիտնականը, առաջին գիրքը տպագրած երիտասարդ բանաստեղծը նորից նոր նըստում է ուսանողական նստարանին: 1951—1956 թթ. նա ուսանում է ԽՍՀՄ գրողների միությանը կից Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի պոեզիայի բաժնում և այն գերազանցությամբ ավարտում գրական աշխատողի որակավորումով (դիպլոմ՝ Ի № 119627):

Այս տարիներին լույս է տեսնում նաև նրա երրորդ ժողովածուն՝ «Սիրո ճանապարհ» (1954 թ., խմբագիր՝ Ս. Տարոնցի,

տպաքանակը՝ 3000, ծավալը 3,2 հեղինակային մամուլ), որի մեջ զետեղված բանաստեղծությունները գրել էր (1946—1953 թթ. և որից դժգոհ էր. «Երբ լուս էր տեսնում իմ երրորդ ժողովածուն, ես արդեն լքել էի ինքս ինձ՝ խճճվելով մի այնպիսի ճգնաժամի մեջ, որ առավել անտանելի է, քան տնտեսական կոչվածը, որովհետև կոչվում է հոգեկան» («Անցյալը ներկայացած»): Այսուհանդերձ, գիրքը ուներ բավականին ուշագրավ էջեր: Հոգեկան ճգնաժամն այս դեպքում վերաբերում է ոչ այնքան ստեղծագործությանը, որքան անձնական կյանքին: Խզվել էին նրա կապերը առաջին կնոջից, որից և բաժանվում է 1954-ին և ամուսնանում երկրորդ կնոջ հետ, որին ճանաչել էր դեռևս 1952 թվականից: Անհավասարակշիռ, ջղային կացությունը այս տարիներին նրան հանել էր հունից:

Սևակի ինքնահիասթափությունը խորացել էր նաև այն պատճառով, որ Մոսկվայում նա վերջնականապես որոշել էր գրական հարցնրում այլևս չդիմել ոչ մի համակերպության և լիածայն ասել այն, ինչ որ հուշում էր միտքը: Ինքն իր մեջ հաղթահարելով սեփական ձայնը եթե ոչ կեղծելու, ապա օրերի թելադրանքին հարմարեցնելու գայթակղությունը՝ նա ընտրում է ուղիղ ու անսայթաք մի ուղի, որը և նրան այդուհետև պիտի տաներ գրական վերելքների ճանապարհով: Մոսկվայում Սևակը հաղթահարում է իր մեջ տեղ գտած երկվությունը, միաժամանակ՝ ընդարձակում իր գրական գործունեության շրջանակները: Նախ, 1955-ին փորձեր է անում վիպակ գրելու գյուղական կյանքի մասին՝ նյութ ունենալով գյուղերի մեծացման խնդիրը: Այդ առթիվ կատարել է գրառումներ, շարադրել որոշ էջեր: Եվ ապա՝ ուսումնառության շրջանն ավարտելուց հետո, Մոսկվայի նույն գրականության ինստիտուտում նա անցնում է մանկավարժական աշխատանքի՝ որպես թարգմանական գրականության ամբիոնի հայոց լեզվի ավագ դասախոս (1957-ի սեպտեմբերից մինչև 1959-ի սեպտեմբերը): Այնուհետև՝ թարգմանության տեսաբանը այդ տարիներին զբաղվում է նաև թարգմանական բուռն գործունեությամբ՝ հայերեն հնչեցնելով Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Բոյուսովի, Բլումի, Մալակովսկու, Եսենինի, Ժամանակակից ոռւս և խորհրդային բազմաթիվ հեղինակների, նաև Ա. Միջնիսի, Զ. Բոտսի, Յ. Ռայնիսի, Զ. Ռոդարիի առանձին պոեմներ ու բանաստեղծություններ, ինչ-



Կողք՝ Նելլի Մենաղարիշվիլու հետ  
Ը ժոհոյ, Խոլլի Մոնագարիանի

պես նաև նմուշներ չինական, ճապոնական, կորեական, չիլիական, իսպանական, ապա և՝ վրացական, տաջիկական, ուկրաինական պոեզիայից: Սա ծանր ու բազմակողմանի հմտություն պահանջող աշխատանք էր, որ Սևակն իրականացնում է վարպետությամբ՝ գեղարվեստական չափանիշը ամեննին էլ չիշեցնելով հացի խնդրի պահանջներին: Այո՛, հեռուներում ևս ապրել էր պետք, դրա համար անհրաժեշտ էր աշխատել, գրել ու թարգմանել, բայց բնավ չկորցնելով գրական խիդճը: Երկընտրանքն ու գայթակղությունը Սևակն արդեն իսկ հաղթահարել էր:

1957-ին լույս տեսավ Սևակի գրական մեծ շրջադարձն ազդարարող «Նորից քեզ հետ» ժողովածուն (գրվել է 1946—1956 թթ., խմբագիր՝ Ս. Տարոնցի, տպաքանակը՝ 3000, ծավալը՝ 4 հեղինակային մամով): Գրքում զետեղված գործերը թեև գրվել են տարբեր տարիների, բայց կատարվել էր ճիշտ ընտրություն: Գիրքը լույս տեսավ երկրում տիրող քաղաքական-մշակութային վերելքի տարիներին, երբ հաղթահարվել էր անհատի պաշտամունքը, երբ տեղի էր ունեցել 20-րդ համագու-



Երեխաների՝ Հրաշիկի և Արմենի հետ  
С сыновьями — Грачиком и Арменом

մարը: Ինչո՞ւ «Նորից քեզ հետ», ահա հեղինակի բացատրությունը. «Առերևույթ կարելի է կարծել, որ խորագիրը վերաբերում է քնարական հերոսուհուն: Չեմ ուզում ժխտած լինել, բայց կուզեի ավելացնել, թե դա առավել վերաբերում է իմ էռլեյանը, որ փախստական էր դարձել և իմ ձայնին, որ փոխել էի ջանացել» («Անցյալը ճերկայացած»):

Սոսկվայում նա գրում է մոտ 6000 տողանոց «Մարդը ափի մեջ» շարքը: Այդ վերնագրով 1960 թ. Սոսկվայում հրատարակում է մի ժողովածու, բայց շարքը հիմնականում տեղ է գրտնում համանուն հայերեն գրքում: Պ. Սևակի անունն աստիճանաբար դուրս է գալիս Միութենական ասպարեզ, հոլովվում գրական բանավեճերում և ասուլիսներում: Դրան նպաստում է նաև «Ուշացած իմ սեր» պոեմի ոռւսերեն թարգմանությունը (Դարգմանիչ՝ ԵՎ. Եվտուշենկո), որը «Դժվար խոսակցություն» վերնագրով տպագրվում է «Նովի միր» ամսագրի 1959 թ., հունիսյան համարում, տեղիք տալով գրական-բարոյախոսական բնույթի կրօնու խոսակցությունների: «Նովի միր» ամսագրից (1956, № 10) բանավեճը ծավալվում է «Կոմսոմոլսկայա,

պրավդա», «Լիտերատուրնայա գազետա», «Մոլոդայա գվարդիա» պարբերականների էջերում:

Մոսկվայում 1957—1958 թթ. Սևակը գրում է և 7000 տողանոց «Անլոելի զանգակատունը» ու մեծ հաղթանակով վերադառնում Երևան: Պոեմը լուս տեսավ 1959-ին (խմբագիր՝ Հ. Սահյան, տպաքանակը՝ 5000, ծավալը՝ 9,5 հետինակալին մամուլ) և միանգամից նրա անունը թնդացրեց ժողովրդի մեջ: Այդ գըրքով Եկավ Սևակի ժողովրդականությունը: Ու թեև քմահաճ քննադատներից ոմանք փորձեցին նսեմացնել նրա արժեքը, բայց գրական հանրությունը ընդհանուր առմամբ բարձր գնահատեց բանաստեղծի սխրանքը: Իրոք՝ սխրանքը, որովհետև «Գրել Կոմիտասի մասին, հավասարազոր էր գրել հայ ժողովրդի վերջին հարյուր տարվա պատմությունը՝ ժողովրդի կյանքով ու երազանքներով, կենցաղով ու գոյամարտով, երգով ու լացով, եվրոպական դիվանագիտությամբ ու թուրքական բարբարոսությամբ, ազգագրությամբ, անցյալով և ներկայով» («Անցյալը ներկայացած»): Բեյրութում, Թեհրանում, Երևանում գիրքը ունեցավ նոր հրատարակություններ, զետեղվեց հատորյակների մեջ:

Մոսկվայից վերադառնալով Երևան՝ մի որոշ ժամանակ Սևակն գրադարձում է միայն գրական աշխատանքով, իսկ 1963 թվականի հունվարից ավագ գիտաշխատողի պաշտոնով՝ աշխատանքի անցնում ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ միջնադարյան գրականության բաժնում: Գիտնական Սևակը հնարավորություն է ստանում ըստ ամենայնի ի հայտ բերելու իր բանասիրական հակումները: Արդյունքը լինում է «Սայաթ-Նովա» մենագրությունը (1969 թ., խըմբագիր՝ Խ. Սարգսյան, տպաքանակը՝ 15.000, ծավալը՝ 19, 1 հետինակալին մամուլ): Մինչև տպագրությունը՝ 1967 թ. հունիսի 27-ին, գրականության ինստիտուտի գիտխորհրդում նա պաշտպանության է ներկայացնում իր աշխատությունը և միանգամից ստանում բանասիրական գիտությունների դոկտորի գիտական անտիճան: Գիտխորհրդի 24 անդամներից ներկա են եղել 19-ը և բոլորն ել միաձայն քվեարկել նրա օգտին: Նրա գիտական ընդդիմախոսներն եին բանասիրական գիտությունների դոկտորներ Ա. Մնացականյանը, Ս. Աղաբաբյանը, Ռ. Զարյանը և ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Հասրաթյանը: Վերջինիս 40



Էջանոց ընդհիմախոսությանը՝ Սևակը պատասխանում է 45 էջանոց պաշտպանական խոսքով։ Սևակի ղիսերտացիան բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովը հաստատեց բավականին ուշացումով՝ 1970-ի փետրվարի 13-ին։

Գիտնական Սևակը շարունակում է իր աշխատանքը Սալյառ-Նովայի և հայ միջնադարյան տաղերգության կապերի ուսում-



Բանառտեղի ծննդավայրի ընդհանուր տեսքը  
Общий вид родного села поэта

Եասիրության ուղղությամբ, գրում թագմաթիվ էջեր, որոնք ոչ  
իր կամքով մնում են անավարտ: Սևակի գրականագիտական  
հակումները ի հայտ են եկել Եակ Մաշտոցի, Նարեկացու, Պե-  
շիկթաշլյանի, Դուրյանի, Վարուժանի, Թումանյանի, Տերյանի,  
Չարենցի մասին գրած ուսումնասիրություններում: Իսկ իր քըն-  
նադատական հոդվածներով նա ուղղություն էր տալիս ամրողը

60-ական թթ. գրականությանը: Բանաստեղծ Սևակը իր սկզբանքները հաստատում է տեսական և գործնական խիստ արդիական նշանակություն ունեցող «Տերյանը պահանջում է» (1960), «Դեպի մեծ ուղեծիր» (1961), «Հանուն և ընդդեմ «ուելիզմի նախարիմքեր»-ի» (1965), «Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն» (1966), «Դժվարը իրենից հասուն լինելն է» (1969) ուղենչային հոդվածներով:

1960-ական թվականները դառնում են նաև Պ. Սևակի բանաստեղծական մեծ հաղթանակների տարիներ, որոնք նշանավորվում են «Մարդը ափի մեջ» (1963 թ., Խմբագիր՝ Լ. Այվազյան, տպաքանակը՝ 15.000, ծավալը՝ 10,5 հետինակային մամուլ) և «Եղիցի լուս» (տպագրվել է 1969-ին, վաճառքի է հանվել ետմահու՝ 1971-ին, Խմբագիր՝ Մ. Սարգսյան, տպաքանակը՝ 25.000, ծավալը՝ 10,9 հետինակային մամուլ) ժողովածուների հրատարակությամբ:

Ոմանք կարծում էին, թե «Անլուի զանգակատան» հաջողությունից հետո Սևակը կգնար ժողովրդին հաճոյանալու, ժողովրդականության արդեն իսկ իր կողմից գտած ճանապարհով: Բայց նա, ինչպես նախկինում, հիմա ևս ընտրեց դժվարին ուղին և... նորից հայտնվեց գրական հանրության տարակարծությունների, ընթերցողների թեր և դեմ կարծիքների ցանցում: 1964 թ. փետրվարին գրողների տանը կազմակերպվում է «Մարդը ափի մեջ» գրքի հրապարակային քննարկում: «Ավանգարդում» տպագրվում են ընթերցողների կարծիքներ, որոնց «Իմ ընթերցողներին» պատասխան խոսքով անդրադառնում է բանաստեղծը: Խոստովանելով ընթերցողից չհասկացվելու իր «քաջուն կամ բացահայտ վախը», նա բացատրում է իր սկզբունքները և հասնում այսպիսի ընդհանրացման: «Բանաստեղծը խոսում է իր լեզվով, բայց մարդու անունից, իր կողմից, բայց կյանքի մասին, իր տրամադրությամբ, բայց դարի հրամայականով: ...Եվ միայն անլուրջ չէ, այլ նաև լաց լինելու չափ ծիծաղելի է չհասկանալ, որ բանաստեղծությունը մի քիչ ավելին է, քան ինքնակենսագորությունը»: Ստեղծված տարակարծությունների պատճառն այն էր, որ Սևակն ասպարեզ էր հանել ոչ թե բանաստեղծական ծանոթ պատկերացումներին համընկնող գործեր, այլ այդ պատկերացումներին նոր ընթացք տվող, միտքն

ու գրական ըմբռնումները նոր ու անսովոր ուղղությամբ շարժող այնպիսի մի ժողովածու, ինչպիսին էր «Մարդը ափի մեջ»-ը: Եվ հենց այս գրքից սկսած՝ Սևակը դարձավ գրական նոր որոնումների առաջնորդը, այս անգամ ևս հաղթահարեց շհասկացված լինելու վտանգը և գնաց նոր սխրանքի: Գրական հանրությունը կասկածեց, երկմտեց, բայց և հավատաց ու վերջնականապես ընդունեց նրան: Ընդունեց, որովհետև առանց դիմադարձ հարվածից վախենալու, Սևակը կանգնեց բոլորի առջև և հրապարակավ ասաց՝ «Կարեւի է ամեն ինչ լինել, բացի ժամանակավրեալ լինելուց... պարզապես շատ քիչ է ատավիզմ համարել միայն պոչ ունենալը: Միլիոնից մեկն է պոչով ծընվում, մինչդեռ ուղեղային պոչավորների անունը լեզեռն է» («Անցյալը ներկայացած»): Այս ասելու հետ մեկտեղ նա նաև մեկնաբանեց իր խոսքը, որը խոսք չեր սոսկ, այլ օդափոխությամբ ստեղծված սառն ու սթափեցնող, բայց նաև առողջարար մթնոլորտ. «Եվ անհամեստություն կհամարվի, եթե ասեմ, որ այսօրվա մարդը առավել բարդ չենք, քան նույն այդ արքայազնի զրուցակիցը՝ գերեզմանափորը կամ խեղկատակը: Գոնե սիտի ամաչել այդ գերեզմանափորից ու խեղկատակից և XX դարի բանաստեղծությունը չըմբռնել իբրև խաղիկ-ջանգյուղումների բազմահատկություն: Խորայներ են դոդանչում մեր հոգում, իսկ մեզ ուզում են հաճույք պատճառել ճաշարանային նվագախմբով, ռեքվիեմների կարիքն է մեզ տանջում, իսկ մեզ խորհուրդ են տալիս գնալ պարային հրապարակ, սիմֆոնիաների են ծարավի մեր ականջները, իսկ մեր նույն այդ ականջները քաշում են հենց այդ պատճառով և ականջներից քաշելով ստիպում լսել հովվական այն շվին, որ ընդամենը երկու ծակ ունի՝ մեկի անունը «Հույզ», մյուսի մականունը՝ «Սիրտ»: Վաղուց է եկել ժամանակը մտածող-մտավորական-իմացականությամբ լեցուն հերոսի՝ լինի դա քնարական հերոս, թե հերոս վեպ ու վիպակի» («Հանուն և ընդդեմ «ռեալիզմի նախահիմքեր»-ի»):

Ահա այսպես Սևակը բացում էր նոր պոեզիայի ճանապարհը, որը անհատի ու հասարակության մեջ բացված սուր երկխոսության ձևով ավելի խորացավ «Եղիցի լույս» գրցում: Գիրքը թեև լույս տեսավ ետմահու, բայց նրանում գետեղված առանձին



Գրական ավագանու հետ  
Со старейшинами литературы

բանաստեղծություններ տպագրվել էին 1960-ական թթ. մամուլում և ուղղություն տվել գեղարվեստական զարգացմանը:

Անտեղի չե ասել, որ հնացած պատկերացումներից, մտքի լճացումից Սևակը փորձում էր ազատել նաև մանկական բանաստեղծությունը: Վկայությունը ետմահու հրատարակված «Ձեր ծանոթները» ժողովածուն է (1971 թ., խմբագիր՝ Ա. Ղուկասյան, տպաքանակը՝ 10.000, ծավալը՝ 1 հետինակային մամուլ):

Սևակի բուռն ու արգասավոր գործունեությունը կարծեք թե բերում էր սպասված պահը՝ վաստակի գնահատությունը:

1966 թ. նոյեմբերին Հայաստանի գրողների 5-րդ համագումարում ընտրվում է ՀԽՍՀ գրողների միության վարչության քարտուղար, 1967-ին «Անլուկի զանգակատուն» պոեմի համար արժանանում ՀԽՍՀ պետական մրցանակի, ընտրվում ԽՍՀՄ 7-րդ գումարման Գերագույն խորհրդի դեպուտատ, պարգևատրվում Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, Աշխատանքային

արիության համար մեղալով: 1966 թ. հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 25-ը Բուդապեշտում մասնակցում է բանաստեղծերի եվրոպական համաժողովի աշխատանքներին: Նրա բանաստեղծություններն արդեն թարգմանվում էին ԽՍՀՄ և աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներով:

Թվում եր, թե, իրոք, եկել է գնահատության պահը, բայց գնալով ավելանում էր ն հոգու տառապանքն ու ցավը: 1969 թվականին տպագրված «Եղիցի լուսը» զանազան պաշտոնյա անձանց քմահաճությունների պատճառով չէր հանվում վաճառքի: Շատ ծանր տրամադրությամբ էր նա մասնակցում Հայաստանի գրողների 6-րդ համագումարի աշխատանքներին, որ հրավիրվեց 1971-ի հունիսի 1—3-ը: Ոչ միայն մոայլ էր ու դժգոհ, այլև հրաժարվեց ԽՍՀՄ գրողների 5-րդ համագումարին մասնակցելու առաջարկից՝ հանեց իր թեկնածությունը պատվիրակների կազմից:

Թվում եր, թե եկել է պահը, բայց և այդ պահը ողբերգաբար ընդհատեց նրա կյանքը: Հայրենի գյուղից Երևան վերադառնալու ճանապարհին, 1971 թ. հունիսի 17-ին նրա վարած մեքենան գյուղից ոչ շատ հեռու շուրջ եկավ. Վլարին զոհ գնաց ժամանակի մեծ բանաստեղծը: Ամբողջ Երևանը իր ձեռքերի վրա նրան հասցրեց հայրենի գյուղ ու պահ տվեց սեփական այգու սեփական ձեռքերով փխրեցրած հողին:

Նրա մահը սգացին շատերը, բայց առավել ազդեցիկ հնչեց հայ մշակույթի նահապետի՝ Մ. Սարյանի ձայնը.

### «Սիրելի Պարույր.

Այսպիսի վիշտ, գոնե կյանքիս վերջին տարիներին, ես չեմ ապրել: Չեի ել պատկերացնում, թե ի՞նչն այլևս կարող էր ինձ այսքան ցնցել...

Դու ընդամենը անհատ էիր, բայց ինչպիսի՝ անհատ: Նման էիր լեռնային մի աղբյուրի, որն իր ուժը բնության ընդերքից է առնում ու բնության ուժն է բերում ժողովրդին: Եվ սիրում էինք քեզ, որովհետև չենք կարող բնությունը չսիրել:

Ժողովուրդը քեզ ծնեց մաքառման գնով, ծնեց ժամանակին, որպեսզի քո միջով երգեր իր ցավն ու ուրախությունը: Այդպիսի անհատների ժողովուրդը հեշտությամբ չի ծնում և չի կարող հեշտությամբ բաժանվել նրանցից:

Պարույր, սիրելի՝ զավակս, դու շատ լավ գիտեիր այս բոլորը, որ դու միայն քոնը չես: Դա պիտի գիտակցեն շատերը, դա պիտի լինի մեր առաքելությունը, մեր մտածողության արմատը: Եվ ճակատագիրը այդքան դաժան չպիտի լիներ քո հանդեպ, ժողովրդի հանդեպ»:

## ԳՈՐԾԸ

Պ. Սևակի երկերի վեցհատորյակի հրատարակությունը (1972—1976, կազմող՝ Ա. Արիստակեսյան, տպաքանակը՝ 50.000, ընդհանուր ծավալը՝ 94 հետինակային մամուլ) ի մի բերեց ոչ միայն նրա ստեղծագործությունը, այլև մի ընդհանուր հայտարարի բերեց այն բոլոր տարատեսակ կարծիքները, որ տարիներ շարունակ ուղեկցել էին նրա գրական որոնումներին: Սևակի ստեղծագործությունը, որ ետպատերազմյան տարիների հայ խորհրդային պոեզիայի ակնառու երևույթներից է, վեցհատորյակի մեջ երևաց իր ամբողջ հարստությամբ, և բոլորի կողմից Սևակը միաբերան հոչակվեց հայոց նորագույն բանաստեղծության այն խոշոր դեմքը, որի ընթացքում կանգնած էր Ե. Չարենցը, իսկ առջևում՝ բուռն րւ վարար կյանքը: Այն կյանքը, որի թաքնված բանաստեղծությունը հայտնաբերել էր պետք:

Ինչո՞ւմն էր Պ. Սևակի բերած նորությունը: Կենսական ի՞նչ ճշմարտություններ բացահայտեց նա, որ կարողացավ նվաճել իր ժողովրդի սերը և նորարար, մեծ ու առաջնակարգ բանաստեղծի համբավ վաստակել:

Հասարակական կյանքի պատմական գարգացման ամեն մի ժամանակաշրջանում ընդհանուր գեղագիտական ճաշակի փոփոխությունների հետ մեկտեղ փոփոխվում է նաև գեղարվեստական խոսքի դերի, նշանակության, ասելիքի և խոսքարվեստի ամբողջ համակարգը: Այդ փոփոխությունները պայմանավորվում են տվյալ իրականության հոգեւոր հարստության, կյանքի իմաստի և արժեքի գլխավոր, արմատական սկզբունքների հայտնաբերմամբ: Գլխավոր նպատակը դառնում է տվյալ իրա-

կանության գեղարվեստական յուրացման հարցը: Իսկ ամեն իրականություն, ամեն ժամանակաշրջան պահանջում է հատկապես ա՛յն խոսքը, որը պետք է ստեղծվի, որպեսզի ձևակերպվի տվյալ իրականության ու ժամանակի ոգին: Ամեն բանաստեղծի (ընդհանրապես՝ գրողի և արվեստագետի) կոչման գերագույն նպատակը պետք է լինի ժամանակի հոգևոր պատմության խոր ու ճշմարտացի կերտումը, ժամանակի էռությունը գեղարվեստորեն բանաձեռնության անկասելի ցանկությունը, որը կարող է իմաստավորել նրա նկատարած գործը և արժեքավորել նրա տեղը հասարակության մեջ:

Նորագույն շրջանի հայոց բանաստեղծության պատմության մեջ հասարակական կարևորության տեսակետից այդպիսի արժեքավոր և իմաստավորված տեղ է վերապահված Սևակին: Իր ապրած ժամանակի ոգու, հասարակական ապրումների ու տրամադրությունների բացահայտումը, առանց նրա ստեղծագործությունների, շատ կողմերով կլիներ պակասավոր, աղավաղված ու անկատար: Եվ այդ ամենը շնորհիվ այն բանի, որ Սևակը իր ուսերը չդրեց հեշտ բեռան տակ: Ինչպես հունական դիցարանության հերոսները, որ իրենց ուսերին երկնակամար էին պահում, ինքն էլ կամավոր զինվորագրվեց այն նվիրյալների շարքը, որոնք կյանքի գնով անգամ բարձր են պահում ճշմարտությանը ծառայելու իրենց պարտականությունը («Ճշտի համար աքսոր չկա — ստի հանդեպ ինչո՞ւ լոել»): Դա կոչվում է ժամանակի խիղճ, հավատարմություն՝ լինելության սեփական կերպին: Նա այդ ամենը ոչ միայն խոստացավ, այլև կատարեց՝ հավատամքը դարձնելով գործունեության ամենօրյա ծրագիր.

Խոստանում եմ  
Լինել ո՛չ թե հարկահավաքը,  
Այլ զավա՛կը  
Դժվար դարի,  
Ինչպես նրան՝ և ինքըս ինձ  
Հավե՛տ մնալ հավատարիմ...

...Բայց, ա՛յ խնդրեմ.  
Խոստանում եմ պարապ մնալ  
Եվ կամ տրվել խաղ ու պարի,  
Թան թե դառնալ ագիտատոր  
Վնասակար գաղափարի:

Սևակը, ինչպես ամեն մի ճշմարիտ բանաստեղծ և, առաջին հերթին, ինչպես իր մեծագույն նախորդը՝ դարաշրջանի ընդգրկումով չափող է. Չարենցը, փորձեց գտնել իր օրերում ապրող մարդկանց էլույան մեջ ձևավորվող, հասունացող այն ապրումներն ու խոհերը, փորձեց հայտնաբերել այն գլխավոր հոգեբանական վիճակները, հարաբերությունները և կենսական մտահոգությունները, որոնցով ապրում են իր ժամանակակիցները՝ XX դարակեսի մարդիկ: Մարդիկ, որոնց և կյանքն է նոր ու տարբեր, և կյանքի հանդեպ ունեցած պատկերացումներն ու մտածողության ձևը:

Սևակը այն արվեստագետներից էր, որոնք գրականություն են ստեղծում որոշակի, անհատական դիտողականությամբ, որոնք իրենց կյանքի փորձը, զգացածն ու տեսածն են փոխարկում բառի և ոչ թե կողոպտում «գեներալ դասականներին» և շարժվում սովորութի ուժով: Փաստորեն նա գրականություն բերեց նոր կենսական նյութ և վերարտադրեց ժամանակի խոհերով, հոգեբանությամբ, հոգսերով ու տրամադրությամբ ապրող մարդու էլույունը, մի խոսքով՝ ստեղծեց բանաստեղծական հերոսի արդիական նկարագիրը: Այս առումով Սևակը մեր ժամանակակիցն է և մեր ժամանակի մտայնության արտահայտիչը այնպես, ինչպես իր ժամանակի մտայնության արտահայտիչն էր Չարենցը: Ահա սրանով էլ Սևակը շարունակում է չարենցյան ավանդությունները, որի առաջին պատգամը նախ և առաջ իր ապրած ժամանակի հետ սերտորեն կապված լինելն է, ներկայով ապրելը, այդ ներկայի պոեզիան պեղելն ու ներկայի նյութը պոեզիա դարձնելը: Այսպես պետք է դիտել բանաստեղծների առնչությունը և ոչ թե մի բառի կամ պատկերի նմանությամբ: Սևակը իր բանաստեղծական աշխարհընկալմամբ անշափ մոտ է կանգնած ստեղծագործական խառնվածքի չարենցյան նկարագրին: Ինչպես Չարենցը կարողացավ ստեղծել իր օրերի մարդու հոգեբանական կերպը, սիրո, թախծի, տառապանքի զգացողությունը, դրանով իսկ ամբողջացնելով իր օրերին հատկանշական հայրենասիրության կերպը, այսուհետեւ տառապանքի զգացողությունը, դրանով իսկ ամբողջացնելով իր օրերին հատկանշական բանաստեղծության հերոսի նկարագիրը, այնպես էլ Սևակը կարողացավ ի հայտ բերել զգայական-մտածական համակցության այն առանձնահատուկ կողմերը, որոնք բնորոշ են այսօրվա մարդուն:



Երիտասարդ գրողների հետ  
С молодыми писателями

Սևակի հերոսի հայրենասիրությունը, սերը, տառապանքը, բարոյական նկարագիրը, աշխարհի հետ ունեցած հարաբերությունը միանգամայն այլ որակ է, քան Զարենցինը։ Սևակը շարունակեց Զարենցին և այն, ինչ Զարենցը արեց իր օրերի համար, նույնն արեց նաև Սևակը ի՞ր ապրած ժամանակի համար։ Ահա սա է պոեզիայի ժառանգորդական կապը։

Սևակը կարողացավ խորությամբ պատկերել իր օրերի մարդու հոգեբանությունը, ապրումների աշխարհը։ Այս առումով հատկապես առանձնանում է նրա «Եղիցի լուս» գիրքը, որը և, թվում է, ճիշտ կլինի համարել նրա պոեզիայի գլուխգործոցը, թեև այս գիրքը ոչ թե ինքնակա երևույթ է, այլ խորությամբ և էապես պայմանավորված նրա նախորդ գրքերով ու, ընդհանրապես, ստեղծագործական կողմնորոշմամբ ու ծրագրերով։ Այդ գրքում իր հոգու փակագծերն են բացում XX դարակեսերի մարդը՝ անորոշության ու կասկածների մեջ խարիսխող, հին կուտքերի հանդեպ հավատը՝ կորցրած և իր համար կյանքի նոր իմաստ որոնող մարդը։ Մի մարդ, որի թափանցող հայացքը ճշմարտության դաժանությամբ գունազրկում է

իրականությունը, պատում տոնականության կեղծիքը և կանգնում կյանքի սովորական, կեղեքող պատկերի առաջ, փոխանցվող անկեղծությամբ քննում ինքն իրեն, խոստովանում իր ցավերը, իր տագնապները և «դժգոհություններից դժգոհ», ամեն ինչի իմաստի մեջ թափանցելու աշխատանքից դժգոհ, փորձում անեղծ ճշմարտությամբ նախ ճանաչել ինքն իրեն և ապա իր համար ապրելու ուղիներ որոնել:

Սևակի նպատակը նախ և առաջ մարդուն իր ճշմարիտ պատկերը ներկայացնելու է, ինքն իրեն բնական վիճակում ճանաչելը: Այս զգացողությունը խոր արնատներ ունի նրա ստեղծագործության մեջ և աստիճանաբար զարգանալով ու կարևորություն ստանալով՝ սկզբնական շրջանի պարզ ինքնաճանաչումից հետո հետագայում արդեն դառնում է գեղագիտական դավանանք և մարդու նկարագրի ճշգրտման չափանիշ:

Լուսնմ եք ինձ:  
Բավակա՛ց է,  
Հանեցե՛ք ձեր դիմակները:  
Հանեցե՛ք,

Որ քամու ձեռքով  
Ձեզ կարոտած օդն ապտակի  
Ձեր իսկական դեմքը տխեղծ...

...Ինքնե՛րդ ասեք.  
Բավական չէ՝  
Դուք ձեզանից ձեզ գողանաք  
Եվ տեղն ուրիշ մեկին դնեք ձեր փոխանակ:

## Եվ ապա՝

Մենք ուզում ենք գործի լեզուն,  
Բայց ո՞չ իբրև երկանք ստի  
Ու ջրաղաց խաբեության:  
Դժվար բան է սուտ ասելը,  
Բայց սուտ ասելու ավելի է հեշտ ու դյուրին,  
Բան թե անվերջ սուտ լսելը:  
Ուստինաձև սուտ ծամելուց մենք զգվել ենք:  
Լավ ապրանքը ինքն է ծախվում,  
Ու վատն է, որ պիտի գովես:  
Խսկ մենք դեմ ենք ամեն տեսակ փերեզակի...

ՄԵԾք ծնվել ենք, աշխարհ եկել  
Ո՛չ թե թվալերևալու խարեւությամբ,  
Այլ լինելո՛ն,  
Այս լինելու, ինչ կանք իրոք:

Բանաստեղծն զգում է, որ Էռլայն մաքուր դրսենորումը կարծեց փոխարկվում է վարագուրված կեղծիքի և կյանքը դառնում անտանելի մի դիմակահանդես: Մի դիմակահանդես, որին այս կամ այն չափով մասնակցում են բոլորը. և ոչ միայն մեզանում, այլև՝ ամենուր: Այս տեսակետից հեռվից հեռու ակնհայտ հարազատություն կա Սևակի և մեր ժամանակի ու իրականության մեկ ուրիշ բանաստեղծի՝ է. Մեժելայտիսի խոսքերի միջն. «Պոկենք այդպիսի մարդկանցից դիմակը: Ի՞նչ կտեսնենք: Նոր դամակ: (Դիմակը դիմակ է քողարկում՝ ահա շեքսպիրյան ողբերգություն)»: Գրում է Մեժելայտիսը և այնուհետև ավելացնում. «Եղիր այն՝ ինչ կաս, հակառակ դեպքում կլինես ոչինչ»: Ու նա՝ ժամանակի զգայարանը դարձած բանաստեղծը, XX դարի թերզող միջօրեին մարդկանց փախստական էռլայունը վերադարձնելու կոչ է անում, մարդուն մարդ մնալու պատգամներ հղում, մարդուն մարդ պահելու ուղիներ որոնում.

Հաշվեցե՛ք նաև, մի վերջի՞ն անգամ,  
Թե այդ ի՞նչ ձևով,  
Ի՞նչ մեքենայի օգնությամբ բարի  
Դեռ կարելի է մարդուն մա՛րդ պահել  
Եվ կամ նո՞ր միայն մարդուն դարձնել Մա՛րդ:

Մարդկայնության պաշտամունքը Սևակի ստեղծագործության մեջ ոչ թե պատահական երևույթ է կամ որոշակի նյութ, այլ եթե կարելի է ասել, համատարած խոհ, ապրում, համատարած միտք, որն իր բազմածն դրսենորումն է գտել նրա տարբեր բնույթի գործերի մեջ: Մարդկայնության պաշտամունքը նրան մղում է կյանքում որոնելու այն գլխավոր նախադրյալները, որոնց միջոցով հնարավոր լիներ ընդհանուր պատկերացումն ու զգացմունքային բռնկումը դարձնել որոշակի ու իրական: Այդ նախադրյալները գնում հասնում են ամենահինավուրց, բայց բոլոր ժամանակների համար առաջնահերթ ու կենսունակ բարոյական այնպիսի ըմբռնումների, ինչպիսիք են՝ ազնվությունը, անկեղծությունը, ճշմարտախոսությունը, մաքրությունը և այդ ամենի ամենանախնական խորհրդանշանը՝ Լուսը:



Ұнтаңдағы рұсақабы әмбі...  
Мир творчества...

Սևակը ոչ թե այն բանաստեղծն էր, որ գունազարդեր կյանքը կամ անտարբեր անցներ կյանքի ուրախ ու տխուր, լավ ու վատ, սովորական ու դրամատիկ երևությների կողքով («Անտարբերության թշնամին եմ ես, Անհա՛շտ-անզիջո՛ւմ-մոլի՛ ոսոխը»), այլ այն բանաստեղծը, որն իրեն կոչված էր համարում լրջորեն բացահայտելու իր ժամանակի հոգևոր, բարոյական, սոցիալական հարաբերությունների ամբողջ հարստությունը («Թեթևության համար դարը մեզ չի ներում, Ինչպես որ չենք ներում ինքներս մեզ») և հավատարիմ մնալու ազնվության («Ամբողջ կյանքում ես եղել եմ ազնիվ, ինչպես... խաղալիքը»), անկեղծության («...Անկարող եմ ինձանից վանել Դմ երկվորյակին՝ Անկեղծությո՛ւնը») ու ճշմարտության այն պահանջներին, որոնց բավարարումը թեև գնալով ավելի է դժվարանում, բայց առանց որոնց չի եղել և չի կարող լինել ծանրակշիռ գրականություն:

Նախ և առաջ ճշմարտություն, ահա սկզբունքների սկզբունքը: Այդ հարցին Սևակն անդրադարձել է թե՝ պոեզիայի հարցերի վերաբերյալ ունեցած իր տեսական խորհրդածություններում՝ խոսքի կենսական ճշմարտացիությունը հակադրելով գեղեցիկ սուստի տեսությանը՝ «Սո՞ւտ է այս «գեղեցիկ սուստը»: Եվ այս սուստ բանաձևումն էլ խեղում է բանաստեղծությունը...: ...Մինչդեռ իսկական բանաստեղծությունը պետք է դառնամիայն ճիշտն ու ճշմարիտը, առողջն ու արդարը» («Հանուն և ընդդեմ «ուեալիզիմի նախահիմքեր»-ի», թե՝ բանաստեղծական խոստովանությունների մեջ.

*Հրաժարվում եմ  
Ինչից որ կուզեց՝  
Նույնիսկ սեփական հպարտությունից:  
Բայց ո՞չ թանկ նստող ճշմարտությունից:*

Եվ միայն այս դեպքում է, որ անհրաժեշտություն է դառնում բանաստեղծությունը և որպես ճշմարտության դրոշակ պարզվում ժամանակի մեջ: Նա մեկ ինքնահաշտեցման եզր է որոնում («Բարեխոս եղիր իմ և իմ միջև»), մեկ մանրամասնորեն քննում հոգին ծվատող մենությունը («Աշնանային վալս»), մեկ բարձրաձայն խոսք ուղղում ժամանակին («Իրերի դատն ու դատաստանը»):



Հիշողության խաչքար...  
Խաչքար պամյատի...

Սուտը դրսնորվելով տարբեր ձևերով՝ կեղծիք, գունազարդում, արժանիքի անտեսում, երկրորդականի գերադասում գըլխավորից, հարաբերությունների մեջ կանխամտածված դիվանագիտություն, մթագնում է մարդկանց միտքը, եռվթյունը: Սարսափելին այն է, որ սուտը դառնում է մարդկանց հաղորդակցման ձև, դառնում է հոգեբանական կապ: Սուտը դրսնորվում է կյանքում և իր շարունակությունը գտնում գրականության մեջ: Ահա այս դեպքում է, որ գերագույն պահանջ է դառնում այդ ամենի բացահայտումն ու կորուսյալ ճշմարտության հայտնաբերումը: Գրականությունը, որը «մարդկային սրտի լրտեսի» (Դոստոևսկի) դեր ունի և խոստովանության բնույթ, պետք է կարողանա պատռել այդ սուտի քղամիդը: Կարծեք նախ և առաջ գրողների համար են հնչում Ֆ. Դոստոևսկու խոսքերը. «Գըլխավորաբար դուք ձեր առաջ մի ստեք: Ով ստում է ինքն իրեն ու ականջ դնում իր սեփական սուտին՝ հասնում է այնտեղ,որ

այլևս չի կարող ոչ մի ճշմարտություն գտնել ո՞չ իր մեջ, ո՞չ էլ շրջապատում, ուստի և անհարգալից է դառնում թե՛ իր անձի, թե՛ ուրիշների նկատմամբ»:

Սուտը թե կյանքում և թե գրականության մեջ, անգամ գեղեցիկ սուտի տեսքով, խցանում է մարդու հոգին, միտքը, և մարդու բնական նկարագրի փոխարեն ստեղծվում է մի երկվորյակ, որը և հանդես է գալիս նրա անվան տակ, աստիճանաբար չեզոքացնում նրան և ինքը դառնում միակ ու անփոխարինելի:

Այս այմենը խորությամբ գիտակցում էր Սևակը, ուստի և նրա ստեղծագործության մեջ գերագույն նշանակություն ունեին ճշմարտության, ազնվության պարզ ու հասարակ, բայց կարևոր ու անփոխարինելի սկզբունքները: Այդ արմատական սկզբունքները սկզբից ևել եղել են Սևակի պոեզիայի (և ոչ միայն պոեզիայի, այլև հոդվածների ու գրախոսությունների, նաև առաջին հերթին անձնական նկարագրի) գիտակցված նախապայմանը, որի համար նա ամենայն իրավունքով իրեն կարող էր համարել ճշմարտություն «սարքող» ու «վաճառող» («Խաղալիք սարքող»):

Ահա այս նախադրյալների առկայության պայմաններում հիմնավոր պատճառաբանությամբ և անշափ բնական ձևով վերըստին հարություն է առնում մաքրության, անաղարտության, ազնվության ամենահինավորց խորհրդանշանը՝ Լույսը, որը պետք է գա ու փարատի խավարը, հալածի չարը, մոռացնել տակեղծիքը... ու բանաստեղծն այլ ելք չի գտնում, քան իրեն «լուսավորության նախարար» հոչակելը և նույնիսկ պատրաստ է խավարի հետ մեկտեղ ինքն էլ պատանդ գնալ, միայն թե արշալույսը գա: Այս նվիրումն այլ բան չէ, քան մաքրության, ազնվության, կոապաշտ — հավատացյալի բորբոքված մի բաղձանք, որը կարծեք աղոթք լինի...

Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,  
Անաղարտ մնամ  
Ա՛յն ճահճանման աղտ-աղարտի մեջ,  
Որ դժգոհություն բառով է կոչվում:

Դժգոհությունից ես շա՛տ եմ դժգոհ:  
Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,

Եկ ասեմ՝ ինչո՞վ.  
Բարեխոս եղիր ի՞մ և ի՞մ միջն,  
Որ բանն ավարտվի ինքնաճաշտությամբ:

Ես խոռվել եմ նաև աշխարհից.  
Ե՞կ ու վերստին հաշտեցրո՞ւ դու մեզ, .  
Թե չէ ես այսպես ապրել չե՞մ կարող...

Բարոյական ու հոգեբանական տարրեր բնույթի ազդակների առկայության պայմաններում մարդը օտարվում է ինքն իրենց, աշխարհից, հասարակությունից և իրեն իր հետ, իրեն աշխարհի հետ հաշտեցնող կապեր է որոնում: Ահա XX-րդ դարի մարդու նորագույն հատկանիշներ, որոնց առաջին հայտնաբերողը մեր պոեզիայում դարձավ Սևակը: Մարդկային հոգու տատանումների նոր ալիքներ է որսում բանաստեղծի սրված զգայությունը, նոր հայեցակետից հայտնաբերում իր օրերի մարդուն և դառնում նրա արդիական ապրումների ու խոհերի գյուտարարն ու հայտնագործողը:

Սևակի բանաստեղծության հերոսը այն մարդն է, որը հոգնել է արդեն ապառնիով ապրելուց և գալիքին սպասելուց: «Իսկ երազել մենք չենք ուզում», — գրում է բանաստեղծը: Երազանքըն էլ չի գոհացնում, քանի որ սուս է նաև այն, որովհետև երազողները այլ բան չեն, քան ոգու ալքիմիկոսներ, իսկ ալքիմիայով ակնկալիքը սերը չես դարձնի, գորշ օրը պայծառ օր չես դարձնի և չես իրագործի հույսերդ: Նրա բանաստեղծության հերոսը ձգտում է ներկա անհագուրդ ու կլանող կյանքի, ցանկանում ակնկալիքը դարձնել իրական հարաբերություն, որ հանկարծ չգգա, թե ինքը դուրս է մնացել կյանքից և դարձել օրվա դեկորացիա կամ անկյանք պատգամախոս:

Այս ձգտումների ու ցանկությունների կրողը բնականաբար պետք է զգա իր հոգին ծվատող մենության գոյությունը, պետք է նաև հոգնած լինի չիրագործված ձգտումներից ու ինչ-որ պահ զգա նաև ձանձրույթի ներկայությունը իր էության մեջ.

Ու ծվատված ձանձրույթն ամենցիս մեջ  
Երազում է հիմա հնավաճառ միայն:  
Այս, թե պատուհանից մեկի ձայնը խոպոտ  
Խուժեր սենյակ.  
«Զանձրույթ, հին-մին ձանձրույթ կառնեմ»...

Եվ ամենքս ենք հիմա կիսով մենակ,  
Եվ անենքս ենք հիմա կիսով տխուր՝  
Հոգնած մե՞ր իսկ բոլոր շարժումներից,  
Եվ ձևերից ամեն  
Եվ մտքերից բոլոր...

Այս տրամադրություններին գալիս խառնվում են անորոշության տարբեր նվազներ, որ ունենում է մարդկության բախտով և ժամանակակցի ճակատագրով ապրող բանաստեղծը: Անորոշության զգացողությունը դառնում է ժամանակակից մարդու հոգեկան կառուցվածքի կարևոր բաղադրամասերից մեկը այնպես, ինչպես սերը, կարոտը, տառապանքը: Այդ զգացողությունը Սևակի քնարական հերոսի քնավորության ու նկարագրի անբաժանելի հատկանիշներից մեկն է: Անորոշությունը նրա էության մեջ զգալ է տալիս կենսական վիճակների տարբեր ոլորտներում: Ե՛վ կյանքի սովորական պայմաններում՝ իր անորսալի ու անբացատրելի ներքին խլիրտն ու ցանկությունները, հոգեվիճակներն ու ապրումները որոշարկելիս («Ինչ-որ բան ես ցանկանում, թե ինչ՝ չես ել հասկանում, Ու չես կարող ըմբռնել»): Ե՛վ կյանքի բարդացված ու խճողված հարաբերությունների մեջ ամեն ինչ պարզ տեսնելու և անելիքը, վերջնական նպատակը իր առջև որոշակիորեն պարզաբանելու անխուսափելի պահանջ ունենալիս, որն աստիճանաբար վերածվում է՝ ապրած ու ապրելիք կյանքի վերջնական նպատակի անորոշության գիտակցման.

..ՉԵ՛, տալիս եմ  
Իմ բովանդակ կարողությունն ու կայքը ես  
Մի հասարակ բանի համար՝  
Պա՛րզ տեսնելու գեր այն բանուկ ճանապարհը,  
Որով քայլում ենք բոլորը  
Չիմանալով, թե մինչև ո՞ւր,  
Ինչի՞ համար  
Եվ արդյոք ի՞նչ նպատակով...

Ե՛վ պարապության ու անելիքը չիմանալու հազմադեա պահերին, որն, ի վերջո, հասնում է մտքի բազմամյուղ շարժումների ու բարդ գուգորդությունների՝ «Չգիտեմ ինչ անեմ»-ից մինչև «Հե՛յ-հե՛յ» կանչելու մղումը. «Լուս զվարթ» երգելն ու



Ճեղքերի «մտածելը»: Տարբեր հոգեվիճակներից ու գոյավիճակներից, զգայություններից ու հարաբերություններից ծնվող, աճող, օրեցօր ուժացող անորոշությունն, ի վերջո, բանաստեղծին հասցնում է այդ զգացողության հաստատուն գոյության գիտակցման և բանաձևման, որն իր մեջ ընդգրկում է կյանքի և իրականության բոլոր ծալքերը.

Անորոշության ցավով ես հիվանդ,  
Անորոշության ահարկո՞ւ ցավով...  
Եվ ինչպե՞ս ապրես միայն անցյալով,  
Եթե ներկադ էլ  
Արդեն չի ծախավում այլ բանի վրա,



Բան վաղվա մասին պարապ խորհելու...  
 Ի՞նչ է սպասվում այս մոլորակին.—  
 Ի՞նչ պատասխանես:  
 Ի՞նչ է լինելու այս աշխարհի հետ,—  
 Ի՞նչպե՞ս իմանաս:  
 Ի՞նչ է բուսնելու այս թշվառ հողին:  
 Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ...  
 Կրակն ես ընկել մտքերիդ ծեռքից:  
 Ազատո՞ւմ չկա: Եվ արծո՞ւմ չկա:

**Անորոշության հոգեբանական վիճակը Սևակի քնարական հերոսի բնավորության մեջ դրսեորվելով տարբեր ձևերով (որպես «անմեկնելի գգացում», սպասում ինչ-որ բանի, կյանքի իմաստի որոնում, մտքի ու գգայությունների բազմանյուղ շարժման կենտրոնացում, նպատակի ճշտում, ձանձրույթ ու հիասթափություն, նյարդային ջղաձգում ու հիվանդություն, մտասնեռում, ժամանակի ու դարաշրջանի հոգսեր, ի՞նչ չանելու պարտավորեցնող հարցումներ...)՝ ամբողջության մեջ ի հայտ է բերում ժամանակակից մարդու՝ կյանքի լիարյուն շարժումն իր ամբողջ էությամբ գգացող և դարաշրջանի ու մարդկության ճակատագրի հանդեպ քաղաքացիական պարտքի գիտակցումից ծնված մտահոգություններ ունեցող մարդու հոգեկան բարդ կառուցվածքի ծալքերից մեկը: Զգայական այդ վիճակը, որ գիշերային մղջավանքի ու ամենժամյա ներքին մենախոսության պես ուղեկցում է մարդուն, ըստ էության, այն բնորոշ հոգեբանական գոյացումներից մեկն է, որից դուրս դժվար է պատկրացնել այսօրվս անհատին:**

«Ի՞նչ է սպասվում այս մոլորակին», «Ի՞նչ է լինելու այս աշխարհի հետ», «Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ» անխուսափելի հարցադրումները պաշարում են մարդուն, վերջնական պատասխան պահանջում, քամում նրա ողջ էությունը և, ի վերջո, նրան դարձնում դարաշրջանի հիվանդությամբ տառապող մի գոյություն, որն իր մեջ կրում է «վիթխարի», անսահման», «որոշյալ», «ոխերիմ» անորոշությունը:

Աստիճանաբար աճում, խորանում է իր ժամանակի հոգսերով, կասկածանքներով, տագնապներով ապրող մարդու գգացողությունը և մեր աշքի առջև ամբողջանում է մի դիմանկար, որի էության մեջ կիզակետված են մեր օրերի բարձր գարգա-

ցում ունեցող մարդու Էռլթյան, հոգեբանության առանցքային գծերը: Սակայն չպետք է կարծել, թե Սևակը ստեղծում է հուսալքված ու հոռետես հերոսի կերպար: Ո՛չ, Երա հերոսը կենսասեր և մեծ կյանքով ապրող անհատ է, բայց նաև կասկածներ ու տագնապներ ունեցող անհատ: Եվ սա բնական է: Սևակը մարդուն չի ուզում գունագարդել, Երան ցանկանում է տեսնել իր բնական շարժուձևի ու մտածողության մեջ, միաժամանակ, ցանկանում է այդ մարդուն պատկերել իր զգայությունների և հոգեբանական տարողության ամբողջ տարրամիացություններով հանդերձ: Սևակը ստեղծում է ոչ թե միագիծ, պարզունակ, այլ կենսասեր ու բարդ հերոսի կերպար: Եվ բնավ էլ տարօրինակ չէ, որ տագնապալի բազում հուզումներ ունենալով հանդերձ, այդ հերոսը կարող է նաև ասել.

Եվ ինչպես եմ հաճախ իշել-ստորացել՝  
Բարկանալու և դատելու աստիճանի,  
Չարանալու և ատելու աստիճանի,  
Ու թույլ տվել, որ նողկանքը տերից հանի  
Հիացմունքի՞ն:  
Հոգով-սրտով ներողություն:

Նորագույն շրջանի մարդուն հատկանշական զգայական-մտածական այս կարգի նոր հատկանիշների հայտնաբերումով, պատկերումով՝ Սևակն ընդարձակում է մեզ արդեն ծանոթ բանաստեղծականի սահմանները և նոր չափանիշներ ու սահմաններ ստեղծում: Եվ այդ ամենը շնորհիվ այն բանի, որ նա բնական ներքնատեսությամբ կարողացավ զգալ իր ժամանակի ոգին, կարողացավ գտնել այսօրվա կյանքին հատկանշական հերոսին և պատկերել աշխարհի բեկումը Երա Էռլթյան մեջ: Իսկ այդ հերոսը մեր գրականության համար խորհրդանշում է այն բարձր մակարդակը, որը հատկանշական է ընդհանրապես զարգացած գրականությանն ու ժողովրդին: Սևակը պատուց կյանքի կեղծ պատկերացումների քղամիդը, գտավ այսօրվա կյանքի Էռլթյունը ճշմարտացի արտացոլող հերոսը, որը և իր խոհերով, մտքերով, զգայական վիճակների թարմությամբ նոր շունչ բերեց գրականության մեջ:

Մինչև այժմ խոսվեց այդ հերոսի և աշխարհի հարաբերության մասին: Հարկ է ավելացնել, որ այդ հերոսը թարմ

զգոն է նաև իր հայրենասիրությամբ ու սիրո զգացողությամբ: Հիշենք միայն մեր ժամանակի համար նրա սահմանած անշափ հատկանշական բանաձևը՝ «Ողբամ մեռելո՞ց... բեկանեմ շանթե՞ր... Կոչեմ ապրողա՞ց...»:

Հայրենիքին ուղղված ձոները, երդումներն ու հավաստիացումները, լայն ընդգրկումով ներկայացվող ժողովողի կյանքի ու պատմության տեսարանները, ազգային բախտի հանդեպ ունեցած խոհերն ու ձևակերպումները, որ տարբեր ձևերով արտահայտվել են «Երգ եռաձայն», «Անլոելի գանգակատուն», «Եռաձայն պատարագ», ինչպես նաև մայրենի լեզվին ու Մեսրոպ Մաշտոցին նվիրված ստեղծագործությունների մեջ («Մայրենի լեզու», «Հայոց լեզու», «Խոսք հավաստիքի», «Եվ այր մի՛ Մաշտոց անուն») նախ և առաջ կոչված են բացահայտելու նրա արյունակցական-ժառանգորդական կապերը հայրենի հողի ու ժողովողի պատմության հետ և այդ ամենի էությունը իրենով՝ XX դարակեսի մարդու ընկալումներով արտահայտելու կարևոր խնդիրներին: Ամեն մի ժամանակ ունի հայրենասիրական ապրումների իր յուրահատուկ նպատակներն ու սկզբունքները, որոնք պատմության դասերի նորովի ընթերցումներն են արդիականության և ապագայի համար: Սևակը պատմության կենդանի դասերի ոգին էր ցանկանում ներարկել իր ժողովողի էության մեջ և փորձում էր ներկայի հեռադիտակով տեսնել և ներկայի պահանջների տեսանկյունից իմաստավորել անցյալը:

Ինչպես հայրենասիրության, այնպես էլ սիրո հարցերում Սևակի հերոսը մեզ ներկայանում է միանգամայն նոր վիճակների մեջ: Նա այլևս ոռմանտիկ, խոստումներով, երդումներով լեցուն, մի մերժողական խոսքից տառապանք սարքող բազում գրքերից ծանոթ հայտնի սիրահար չէ, այլ կյանքը ապրած, բազում սերեր ունեցած, բայց ամեն մեկի մեջ յուրահատուկ պոեզիա հայտնաբերած մարդը: Եվ կարոտ կոչվածը նրա համար ոչ թե անտեղի լաց, հուզում ու հեկեկանք է, այլ բազում սերերի մեջ, բազում հարաբերությունների ու կապերի մեջ նախ և առաջ սեփական գոյության, լինելության լիակատար կերպի հայտնաբերումը.

Ուրվիեմ «Իմ Պարույր» (գործ՝ Գ. Խանջյանի) ►  
Реквием «Мой Паруйр» (работа Г. Ханджяна)



Майстер на Чародійку  
Г. Гайдук

...Մենք ինքներս վազում մեր ետևից  
Ու չենք կարողանում ինքներս մեզ հասնել:  
Ու չենք կարողանում ինքներս մեզ հասնել...  
Եվ հենց դա՝ չէ արդյոք, որ կոչվում է կարոտ:

Այդ հերոսը բարոյական սուտ օրենքների ու կաշկանդումների մեջ իր սիրո ազատությունը ճանաչողներից չէ: Եվ այդ վիճակի համար են ասված նրա տառապագին ու դաժան խոսքերը.

Պարտականության ու սիրո միջն  
Այդ ես եմ տնկված՝  
Ուղեփակոցի գերանի նման:

Երբ սերը պարտականություն է դառնում, երբ մաշվում ու կենցաղի մեջ մեռնում է սիրո պոեզիան, երբ նախկին սիրո երդումը դառնում է սոսկ օրինականացված հավատարմություն՝ արդեն սեր չէ սերը...

Այսպես չե՞ն սիրում:  
Այսպես... մեռնում են մի դանդաղությամբ,  
Որով փոտում են հին նավակները ծովախորշերում:

Սիրո զգացողության այս եղանակը պատահական դրսենուրում չէ Սևակի պոեզիայում: Նրա քնարերգության լիարյուն կյանքով ապրող հերոսը սիրո հարցերում այլև «երեխա» չէ (թեև շատ կցանկանար «երեխա» լինել), այդ իսկ պատճառով սիրո արբեցման զգացողությունը նրա մեջ կարող է նաև փոխվել, հասնել մերժման ու հիասթափության: Դա տարբեր առիթներով դրսենորվում է նրա հերոսի խոստովանությունների մեջ՝ «Անկեղծ ասած՝ այս ամենից ես հոգնել եմ», «Այսպես ապրելը անկարելի է», «Դու կապը դարձրիր կապանք Եվ տուն կոչեցիր այս... բանտը»: Սևակի քնարերգության հերոսը լավ է զգում և սիրո հանկարծակի բռնկումը, որը «անսպասելի փոթորիկ» է առաջացնում նրա էության մեջ, և՝ սիրո լճացումն ու հոգեկան ներքին կապի թուլացումը, և՝ հին սերերի մոգական կանչը, և՝ նոր սերերի պատճառած բերկրանքը: Այդ հերոսի հոգեբանությունը դիալեկտիկ է նաև այս հարցում, մի բան, որը դրսեվորվել է բազմաթիվ բանաստեղծությունների մեջ:

Սևակը սիրո ապրումը զգում և վերարտադրում է ոչ թե մեկ-երկու գերիշխող տարածված վիճակների մեջ (սիրո ար-

բեցում, մերժված, անպատճախան, անհասանելի սիրուց առաջացած տառապանք), այլև՝ բացահայտում տվյալ զգացմունքի բոլոր հատկանշական կողմերը: Սերը նրա քնարական հերոսի համար ոչ միայն ոգեղենացված մի պահ է, այլև՝ հոգևոր կենսագրություն: Այդ իսկ պատճառով այդ զգացողության վերապրման գերիշխող վիճակների կողքին իրենց տեղն ունեն նաև բավարարված սերը, բարոյական նորմերի մեջ դրված անկրակ սերը, սիրո խաղը, սիրո ձանձրութը, անսեր սերը, օտար սերը:

Այս ամենի մասին, անշուշտ, շատերն են մտածում, բայց անկենդությունն ու համարձակությանը բանաստեղծի խոսքում ավելի են սերտաճած և, արծարծելով այդ տրամադրությունները, նա ընթացք է տալիս այս կարգի բազում խոհերի ու կարծիքների:

Սևակը հասավ այս յուրացումներին շնորհիվ այն բանի, որ խորությամբ գիտակցում էր բանաստեղծի իր դերը: Նա համոզված էր, որ «Օրենքներ չկա՞ն, կա լոկ իրավո՞ւնք»: Իսկ երբ իրավունքը գուգակցվում է տաղանդի հետ, արդյունքը աներկբայելիորեն արժեք պետք է ներկայացնի: Եվ այն դեպքում, երբ նա խոստովանում է, թե.

Հայր սուրբ, ես կուզեի դարձնել կանոն  
Անկանոնությունը:  
Մեծ մեղք է սա:—

պետք է նրա կատարածի մեջ ոչ թե մեղք կամ անկանոնություն որոնել, և կամ նրա կատարած գործը հոչակել օրենքից դուրս, այլ ի հայտ բերել այդ անկանոնության նոր օրենքն ու կարգը, դրանով իսկ լայնացնել օրենքի սահմանները, քանի որ այդ անկանոնությունների մեջ փաստորեն մտնում էր այն, ինչ նոր էր ու չկրկնված:

Սևակը ծգտում էր Էռլթյան անմնացորդ բացահայտման, ժամանակակից մարդու բարդ ու հարուստ ապրումների բանաստեղծական լիարժեք ծևակերտման: «Յանկանում եմ գրել ամենանվիրական բաների մասին, ինչ հուզում է բոլորին, այն ամենի մասին, ինչ մենք մտածում ենք: Մի խոսքով, մարդու մասին», — գրել է նա հոդվածներից մեկում: Կյանքի բանաստեղծ լինելու, այսօրվա մարդու խոհերն ու մտքերը իրականություն բերելու հակումը Սևակի համար եղել է արմատական կողմնո-



Պ. Անակ (գլուխ Ռ. Ղազարյանի)  
Պ. Սեսակ (работа Р. Казарян)

րոշում, որն իր ձևակերպումը գտնելով դեռևս 1941 թ. գրված ամենաառաջին բանաստեղծություններից մեկի մեջ («Փընտրումներ»)։

Պիտի իմ երգը ծնվի կյանքի մեջ,  
Կյանքի գրկի մեջ... կյանքից գոյացած,  
Պիտի որ դառնամ կյանքի բանաստեղծ,  
Կյանքի զորությամբ բարձր խոյացած,—

հետագա ամբողջ կյանքում դարձավ նրա հավատո հանգանակի առաջին պատվիրաններից մեկը։ Սևակը չէր ցանկանում համարյալ կամ նախկին պատկերացումներով բացահայտել այսօրվա մարդու ներաշխարհը։ Նա բանաստեղծություն էր դարձնում միայն այն, ինչ ինքը տեսնում ու զգում էր և ոչ թե առաջնորդվում հին հերիաթներով։ Նա իրական կյանքի բանաստեղծ էր, որից էլ սկիզբ է առնում նրա խոսքի, ասելիքի իրապատում ճշմարտությունը։ Այդ իրապատում ճշմարտությունը բացահայտելու համար նա հեղաշրջում կատարեց նաև բանաստեղծական արվեստի մեջ, որն ընդգրկում է և՝ խոսքի ոիթմն ու կառուցվածքը, և՝ ոճն ու լեզվամտածողությունը, և՝ պատկերային ողջ համակարգը։ Նա ստեղծագործական ողջ կյանքում հեռու մնաց մանր ապրումների, հեշտ տրամադրությունների բանաստեղծականացման գայթակղությունից, աշխատեց հայտնաբերել իր օրերի գլխավոր, արմատական խնդիրները և դժվարին մաքառումներով բացահայտել իր ժամանակն իմաստավորող բառերի գաղտնիքները։ Բանաստեղծի դժվարին, բայց միակ ճանապարհով ընթացավ Սևակը՝ «դարի մունետիկի» կողքին իրեն հոչակելով որպես «դարի գաղտնարան»։

Թեկուզ և ծեռքդ գրչից էլ գրկեն,  
Դու, միննույնն է, պիտի՝ որ երգես:  
Թո՛ղ շտան ոչ մի լիազորություն,  
Դու, մե՛կ է, սուտը պիտի՝ որ հերքես:

...Թո՛ղ նրանք լինեն հայտնի թարգմանիչ,  
Իսկ դու ուզում ես մնալ վերծանո՞ղ:  
Թո՛ղ նրանք լինեն անցավ մանկաբարձ,  
Իսկ դու մնում ես կարեվեր ծնո՞ղ:

Թո՞ղ նրանք լինեն դարի մունետիկ,  
Իսկ դու մնում ես դարի գաղտնարան,  
Նրանք թեկուզն ծառայեցընող,  
Դու՝ ժողովրդի ինքնակամ ծառան...

...Բախտի ճամփեքը տարբեր են լինում,  
Բախտն ամեն մեկին սիրում է տարբեր.  
Նրանք ծնվել են, որ ապրեն հարբած,  
Իսկ դու՝ որ քեզնով երեսէ հարբեն...

Դնքնամոռաց ու անձնագորության աստիճանի համարձակ էր Սևակը իր գրական որոնումների և կյանքի ճշմարտությունների բացահայտման բնագավառում: Դա տաղանդի արտահայտության ձևերից մեկն է, որը կոչված էր անաղարտորեն թարգմանելու իր ժամանակի ճշմարիտ ձայները, դրանով իսկ ավելի որոշակի դարձնելու իր ժամանակակիցների ապրումներն ու խոհերը և ավելի ընդարձակելու նրանց մտահորիզոնը: Սևակի խոսքը հասավ քաղաքացիական հզոր ներգործության նախ և առաջ ժամանակի ճշմարտության բացահայտման շնորհիվ, նա կարողացավ ասել այն խոսքը, որն իմաստավորում է տվյալ ժամանակը, որը դառնում է տվյալ ժամանակի մարդու հոգևոր կենսագրությունը: Այս ամենը Սևակի համար գրական ծրագիր էր և կոչման նպատակ, քանի որ՝

Այն, ինչ կոչվում է գրականություն —  
Դեսպանատուն չէ,  
Որ զգա՞ս-խորհե՞ս-մտածե՞ս մի բան  
Եվ այլ բան ասես:

Իր զգացածն ու խորհածը կյանքի կոչելն արդեն իրականության դիալեկտիկական զարգացման և այդ ամենի գեղարվեստական մարմնավորման այն դժվարին խնդիրներից մեկն է, որի հաստատումը պահանջում է խիզախում, ուժերի լարում: Քանի որ այն, ինչը տեսնում ու զգում է ժամանակի զգայրանը դարձած բանաստեղծը, որն անպայման մարգարեւթյան հատկանիշներ ունի, ուրիշները կամ չեն զգում, կամ զգում են շատ ուշ և կամ միայն բանաստեղծի խոսքով են հայտնաբերում ու ճանաչում իրենք իրենց: Եվ ահա այդպիսի մարդկանց մտահորիզոնի սահմանափակ շրջանակները պատելով են բանաստեղծները կարողանում ասել իրենց խոսքը, որովհետև նրանք.



Պ. Սիակի դիմացանդակը (գլուխ՝ Լ. Սողոմոնյանի)  
Скульптурный портрет П. Севака (работа Л. Согомонян)

... Նախընտրում են զրկվել գլխից,  
Քան խոնարհել գույխն իրենց նրանց առաջ,  
Ովքեր լուրջ-լուրջ փորձ են անում  
Ուղեղ հատել՝ դրամի պես  
Ու միտք դաշել՝ լարի նման:


Իր գրական կողմնորոշմամբ ու կատարած գործով Պ. Սևակը ե. Չարենցից հետո հայ պոեզիայի ամենաակնառու նորարարն է, նորարարություն, որը զարգացնում և նոր տարածություն է դուրս բերում արդի պոեզիայի մայրությին: Եվ այդ ամենը շնորհիվ այն բանի, որ նա ճիշտ և դիպուկ կերպով ներթափանցեց ժամանակակից մարդու «ոգու կառուցվածքի մեջ» ու կարողացավ ասել այն «Ինչ բոլորը գիտեն, բայց բարձրածայն ասել չեն հանդգնում»:

Ամեն ժամանակաշրջան ունի իր բանաստեղծը, որը հայտնաբերում է տվյալ ժամանակի ոգին և մարգարեական ներքնատեսությամբ պատգամներ հղում իր ժողովրդին ու իր ժամանակակիցներին: Սևակը՝ դարձավ XX դարակեսի պատգամխոսը: Նրա պոեզիան դարձավ նվիրական ու թանկ գաղտնիքներով լեցուն սպասվող մի նամակ, որը հազարավոր օրինակներով հասավ հասցեատիրոջը՝ բոլորի համար վերածվելով XX դարակեսի հենքի վրա ձևավորված մի ներքին հոգեսոր կապի:



1971 թվականի հունիսի 17-ից՝ իր ողբերգական մահից անմիջապես հետո՝ Պ. Սևակն ապրում է մեծերին վիճակված մեկ ուրիշ կյանքով՝ հաստատելով հանճարի անմահության հավիտենական օրենքը: Ինքն էր ասում, որ կտրվելուց հետո է միայն երնում ծառի բուն հաստությունը: Նրա առիթով ևս կրկընվեց այս դաժան, բայց դաժանությամբ ճշգրիտ օրենքը:

Պ. Սևակն այսօր ամենաժողովրդական բանաստեղծներից մեկն է Հայաստանում և Սփյուռքում: Այսօր նրա անունը գրեթե բոլորի շուրջին է, նկարով՝ յուրաքանչյուրի աշքի առաջ: Սևակի ետմահու կյանքը եկավ ապացուցելու մի անշրջանցելի ճշմարտություն ևս՝ անցած տարիներին ոչ մի հայ գրող ու քննադատ ավելի եռանդուն ու կենդանի մասնակցություն չի ունեցել նոր



Դ Սևակ (գործ՝ Ս. Բաղդասարյանի)  
Հ Սևակ (работа С. Багдасаряна)



Բանաստեղծի ձեռցերով  
Կառուցված տունը  
Դօմ, построенный поэтом

գրականության կառուցման գործին, որքան Պ. Սևակը: Նրա բացակա, բայց և ներկա ներկայությունը զգացվել է մեր գրեթե բոլոր բանավեճերում ու ասուլիսներում, գրական զրույցներում ու զանազան հոդվածներում: Պայքարը գնացել է հանուն նրա ստեղծած գրական չափանիշների պահպանման, հանուն նրա գրական սկզբունքների հայթանակի:

Նրա ստեղծագործությունը դարձավ հետևողական ուսում-նասիրության առարկա: Լուս տեսան Ա. Արիստակեսյանի, Ն. Հովսեփյանի մենագրությունները, նրանց կազմած մատենագի-



տական ցանկերը: Տպագրվեցին Ա. Պապոյանի կազմած բառարանները, Սևակի լեզվին ու արվեստին Եվիրված մենագրությունները: Նրան բանաստեղծություններ, հոդվածներ ու առանձին մասորումներ են Եվիրել Հ. Սահյանը, Վ. Խեչումյանը, Ա. Խանզադյանը, Վ. Դավթյանը, Ա. Կապուտիկյանը, Գ. Աղյարյանը, Հ. Հովհաննիսյանը, Գ. Էմինը, Հ. Մաթևոսյանը, Ա. Ղանալյանը, Ռ. Զարյանը, Ա. Աղաբարյանը և շատ ուրիշներ: Այս տարիներին թափ առավ հուշագրությունը, ոմանք ազնվորեն Ընդունակայացրեցին իրենց մեծ ժամանակակցի դիմանկարը, ոմանք

Էլ ջանացին ետին թվով մարել իրենց պարտքը նրա հիշատակի առջև:

Նրա կյանքն ու ստեղծագործությունը ներշնչանքի աղբյուր ծառայեց նաև հայ նկարիչների ու քանդակագործների համար:

Դ. Սևակի ստեղծագործության քննության համար հրավիրվեցին գիտական նստաշրջաններ, կազմակերպվեցին ընթերցումներ, ծննդյան օրերը նշվեցին հոբելյանական մեծ հանդիսություններով:

Այս տարիներին շարունակեց աճել ու տարածվել նրա համամիութենական և համաշխարհային փառքը: Մոսկվայում ոռուսերեն լուս տեսան նրա «Ընտիր երկերը» (1975), «Անլուի զանգակատուն» պոեմը (1982): Ժողովածուներ հրատարակեցին հունգարերեն («Անձրևային սոնատ», 1966, Բուդապեշտ), բատիշերեն («Զեռքերը», 1968, «Աստծու քարտուղարը», 1989, Ռիգա), չեխերեն («Հիմն լուսին», 1972, Պրագա), անգլերեն («Ընտիր բանաստեղծություններ», 1973, Երուսաղեմ), գերմաներեն («Բանաստեղծություններ», 1987, Բեռլին): Նրա մասին իրենց դրվատանքի խոսքն ասացին խորհրդային և արտասահմանյան այնպիսի բանաստեղծներ ու քննադատներ, ինչպիսիք են՝ Է. Մեժելայտիսը, Ա. Վոզնեսենսկին, Ռ. Ռոժենեսովին, Եվ. Եվտուշենկոն, Ի. Դրաչը, Լ. Օգերովը, Յու Մորիցը, Ռ. Ռոստովցևս, Մ. Փոցխիշվիլին, Լ. Մոտալովան, Լ. Ֆերենցը, Մ. Չակլայսը...

Ամենակարևորն այն է, որ այս տարիներին Պ. Սևակի պոեզիան ոչ թե դարձավ թանգարանային նմուշ, այլ գործող ուժ՝ ի շահ գրականության զարգացման: Ահա այս կարևոր միտքն են պնդում հայ և այլազգի գրեթե բոլոր բանաստեղծներն ու քննադատները:

Ահա այսպես մեր կողքին շարունակում է իր տրոփունքայց և մեծերին վիճակված հավիտենական կյանքով ապրել մեզանից վաղաժամ հեռացած մեր մեծ ժամանակակիցը՝ Պարույր Սևակը:

Պավիլ Գասպարյան

# П. СЕВАК—ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО

---

## ВСТУПЛЕНИЕ

Памятная стела у дороги близ родного села Паруйра Севака — первое место поклонения, связанное с именем поэта. 17 июня 1971 года здесь в автомобильной аварии оборвалась его жизнь. Слева от стелы зеленью садов выделяется на опаленных горных склонах новое поселение, нареченное именем поэта. Расположенное рядом со стелой, оно будто символизирует легенду о смерти и воскресении. Стела говорит о том, что вместо вожделенного света пала трагическая тьма, село же свидетельствует о другом, напоминая о вечном творении и рождении. Встает перед глазами из небытия бытие обретшее село, и название его — Севак. А это уже то самое, что прокладывает дорогу от памятной стелы к живущей памяти.

Дорога ведет дальше — к родному селу поэта. Почти одновременно показываются два щита-указателя: по правую руку — с названием села, по левую — с надписью «Дом-музей Паруйра Севака».

С одной стороны дорога, огибая село, уходит дальше на юг, а с другой сворачивает в сторону и, словно к последнему пристанищу и цели, приводит к дому-музею Паруйра Севака. Ниже музея — дом поэта, построенный собственноручно по его же проекту, и сад, посаженный и взращенный им. В саду и могила поэта. Под надгробной плитой вместе с Паруйром Севаком лежит его супруга, разделившая с мужем и смертное ложе. Рядом похоронены родители. Все рядышком, и невольно вспоминается извечное — в землю вернулись, прародительницу свою.

Отсюда открывается широкая панорама села, раскинувшегося в котловине, как в ладонях гор. Родовое гнездо Паруйра Севака, дом, в котором жили его деды и отец, стоит в глубине села. А сам он выбрал для себя место на самой окраине, на высоте, и превратил дикую целину в цветущий сад, приводящий в восхищение всех. Но сам не успел насладиться им. Лишь труд, страдания и трагедия выпали на его долю.

Сейчас здесь всегда много посетителей, а день его смерти превратился в уже традиционный праздник поэзии, на котором выступают собратья по перу и поклонники Севака. В доме-музее хранятся священные реликвии, повествующие о его жизни и делах — фотографии, дипломы, ордена, личные вещи, книги и рукописи. На стене — большая фреска, где опять же он, в окружении друзей и односельчан, в делах своих и заботах, а еще, увы, в миг своей смерти и в начале бессмертия.

## ЖИЗНЬ

В 1950—1960-е годы Паруйр Севак был ведущей личностью в армянской поэзии, ознаменовавший своим творчеством новую качественную ступень в истории художественного мышления. Свои первые стихи он передал бумаге в то самое время, когда последние свои дни доживал его великий предшественник — Егише Чаренц. Будто некое высшее провидение озабочилось продолжением наследственной линии творческого гения древнего народа. Так оно и было.

Вот его собственное признание: «В седьмом классе я задумал невиданное дело — изложить в стихах историю армянского народа... В селе я слышал имя Егише Чаренца. Из учебника Сурхатяна знал о Чаренце... Поэтому мне стало очень горько, когда узнал, что книги Чаренца изымут из библиотеки, и я украл и унес домой один экземпляр «Книги пути». ...И первые мои серьезные опыты идут от Чаренца» («Что, как и каким образом?»).

Рядом с именем Чаренца Паруйр Севак поставит потом имена Григора Нарекаци, Даниэла Варужана, Атома



Գյուղի մեմանք շյուլի  
В приусадебном саду

Ярджаняна (Сиаманто), а затем и Уолта Уитмена и Владимира Маяковского. Севаку суждено было сочетать в себе и своем творчестве новаторский дух армянской и мировой поэзии, путь его поисков пролег к тому вечно Неведомому, которое есть Человек — со всем своим познанно-понятным и еще более неисчерпаемым неизведанно-загадочным богатством духовного существования.

Вся творческая жизнь Севака была сплошным дерзанием. И он шел по этому пути, во имя сложного и

трудного отрицая примитивное и простое, ставя рядом с удовлетворением великую неудовлетворенность, противопоставляя смирению — сопротивление, а равнодушно — пылающий огонь души. Он доказал это личной судьбой, литературной деятельностью, своей ролью в интеллектуально-культурном развитии и — почему бы и нет? — сознанием собственной общественной и историко-литературной высокой ценности и значимости. Трудный жизненный путь прошел Паруйр Севак, от одного из дальних армянских сел торя свою дорогу к... Парнасу, к вечному сообществу Муз, что и служит залогом бессмертия. Дорога эта должна была пройти через Ереван и Москву, поднимаясь и опускаясь вместе с приливами и отливами личной и творческой жизни. Ему суждено было искать выход из кошмара сталинской эпохи, увидеть и от всего сердца приветствовать хрущевскую «оттепель» и трагически завершить свою жизнь во времена брежневского застоя и нравственной деградации. Все это ему нужно было прожить как одну лишь человеческую жизнь, в кромешной тьме грезя о свете. И обо всем этом суждено было писать ему — в мучительных поисках граней примирения с собственной же раздвоенной сущностью. И все это питало в нем неуемное стремление и жажду справедливости.

## ТВОРЧЕСТВО

Издание шеститомника произведений Паруйра Севака (1972—1976, составитель А. Аристакесян, тираж 50 000, общий объем — 94 авт. листа) не только свело воедино все его творческое наследие, но и привело к общему знаменателю все те всевозможные и противоречивые мнения, которые долгие годы сопровождали его литературные поиски. Творчество Севака — это одно из самых ярких и бесспорных явлений послевоенной армянской советской поэзии — с изданием шеститомника предстало во всем своем богатстве и очевидности, и Севак единодушно был провозглашен крупнейшим представителем новейшей армянской поэзии, за спиной которого стоит Егише Чаренц, а впереди — сама жизнь,

бурная и беспокойная. Та самая жизнь, чью скрытую поэзию надо было найти.

В чем же заключается новизна, принесенная Севаком? Что за жизненную правду нашел и раскрыл он, удостоившись любви и всенародной признательности, заслужив славу подлинного и великого поэта-новатора?

Вместе с изменениями общих эстетических восприятий на каждом этапе исторического развития общественной жизни изменяется также и вся система роли и значения художественного слова. Эти изменения обуславливаются духовным богатством данной действительности, раскрытием главных, коренных принципов смысла и ценности жизни. Главной целью становится вопрос художественного освоения данной действительности. А каждая действительность, каждый новый этап требуют и того нового слова и способа выражения, которые должны быть созданы, чтобы стало возможным сформулировать сам смысл, дух данной действительности или времени. Высшей целью призыва каждого поэта (и вообще писателя или художника) должно быть глубокое и правдивое воссоздание духовной истории своего времени, то неуклонное стремление в художественной форме выразить сущность и суть времени, которое единственно и может помочь оценить сделанное им и показать его место и значение в обществе. В истории армянской поэзии новейшего периода такое ценное и важное с точки зрения общественной значимости место принадлежит Паруйру Севаку. Без его стихов осмысление духа его времени, общественных настроений и переживаний было бы во многом неполным, ущербным и несовершенным. И все это потому, что Севак не подставил свои плечи под легкую ношу. Подобно героям античной мифологии, державшим на плечах небосвод, Севак сознательно и добровольно вступил в ряды тех, кто, пусть даже ценой жизни, высоко держит свою честь преданных борцов за правду и справедливость. («За правду ссылки нету — зачем же нам молчать о лжи?»). Это называется совестью времени, верностью собственному образу бытия. И Севак не только обещал, но и выполнил это, сделав свои убеждения и кредо программой каждого дня своей жизни.

Как каждый подлинный поэт, и в первую очередь его великий предшественник, измеряемый масштабами эпохи Чарэнц, Севак попытался обнаружить в сущно-

сти, в сердцах и душах своих современников те зреющие и формирующиеся мысли и чувства, попытался найти те главные психологические состояния, взаимоотношения и насущные заботы и тревоги, которыми жили его современники, люди второй половины XX века. Люди, у которых новой и непохожей на прежнюю была не только жизнь, но и представления о жизни и сам образ мышления. Севак был из тех художников, которые стремятся творить литературу по собственным, конкретным впечатлениям и наблюдениям, которые пытаются воплотить в слово свой собственный жизненный опыт, лично ими виденное и слышанное, а не «грабить генералов классики» и идти, в силу инерции, проторенной дорогой. Он фактически привнес в литературу новый жизненный материал и воссоздал суть человека, живущего мыслями, психологией, заботами и настроениями современности, словом, создал образ нового поэтического героя. И в этом смысле Севак — наш современник и выразитель тенденций нашего времени, как был выразителем тенденций своего времени Чаренц. Именно в этом отношении Севак продолжает традиции Чаренца, а первейшая из этих традиций — быть прежде всего тесно связанным с временем, в котором живешь, жить настоящим, открыть поэзию в этом настоящем и превратить в поэзию материал настоящего.

Именно в этом следует видеть взаимосвязь поэтов, а не в сходстве лексики или образов. Своим поэтическим мировосприятием Севак был необыкновенно близок к чаренцевскому типу творческой натуры. Как Чаренц смог создать психологический облик человека своего времени, воплотить характерный для тех времен тип патриотизма, чувства любви, тоски, страдания, тем самым обобщив и очертив образ поэтического героя-современника, так и Севак смог выявить и выразить те эмоциональные и интеллектуальные черты и особенности, которые присущи человеку наших дней. Патриотизм, любовь, страдания, нравственный облик, взаимоотношения с миром героев Севака — это совершенно иное качество, чем у Чаренца. Севак продолжил Чаренца, и то, что сделал Чаренц для своего времени, для своей собственной эпохи сделал и Севак. В этом и заключается наследственная связь поэзии.

Севак смог во всей глубине изобразить и показать психологию и чувственный мир современника. И в этом



Տուն-յանձնարանի որմաններից դրվագ (գլրդ՝ Ս. Մուրադյան)   
Фрагмент фрески в доме-музее (работа С. Мурадяна)

смысле особенно характерна его книга «Да будет свет!», которую, нам кажется, можно считать вершиной севаковской поэзии, хотя она не просто самостоятельное явление — всей своей глубиной и сутью книга эта обусловлена предыдущими книгами Севака и вообще его творческой ориентацией и планами. В книге «Да будет свет!» раскрывает кавычки своей души человек второй половины XX века — блуждающий в неопределенности

и сомнениях, потерявший веру в старых идолов и ищащий новый смысл жизни. Человек, чей проницательный взгляд с жестокой правдой обесцвечивает действительность, который срывает фальшь парадности и торжественности и оказывается перед истинным и неутешительным собственным изображением. С передающейся читателю искренностью он анализирует сам себя, признается в своих болях и тревогах, «недовольствами недовольный», уставший от труда проникать в смысл всего, он пытается во всей неприукрашенной правдивости познать прежде всего самого себя, а затем уже найти для себя дороги жизни.

Своей целью Севак ставит прежде всего показать человеку его истинный портрет, помочь ему увидеть себя в естественном свете и состоянии. Это стремление имеет в творчестве Севака глубокие корни, постепенно развиваясь и обретая все большую значимость, оно от простого самопознания начального периода творчества поэта перерастает впоследствии в подлинное эстетическое кредо и критерий уточнения человеческого облика.

Поэт чувствует, что чистые проявления сущности будто подменяются задрапированной ложью и жизнь становится невыносимым маскарадом. Маскарадом, в котором в той или иной мере участвуют все — и не только у нас, но и повсюду. И с этой точки зрения совершенно очевидная близость угадывается между Севаком и другим большим поэтом нашего времени и нашей действительности — Э. Межелайтисом. «Сорвем маски с этих людей. Что увидим? Новую маску. Мaska маску маскирует — вот шекспировская трагедия, — пишет Межелайтис и продолжает: — Будь тем, кто есть, иначе будешь ничем». И он, ставший пульсом времени поэт, в третьей четверти нашего XX столетия призывает вернуть ускользающую суть человека, заклинает человека оставаться человеком, ищет пути сохранить в человеке человеческое.

Культ человечности в творчестве Севака не случайное явление или определенная тема, а, если можно так сказать, — всеохватная дума, переживание, всеохватная тема, находящая свои многообразные выражения в его произведениях разного характера. Культ человечности заставляет его искать в жизни те основные предпосылки, с помощью которых можно четкими и ясны-

ми мазками представить общее впечатление и вспышку эмоций. И корни этих предпосылок приводят к древнейшим, но извечным, первостепенным и необходимым для всех времен нравственным категориям, таким, как благородство, искренность, честность, правдивость, чистота и самый изначальный их символ — Свет.

Севак был не из тех поэтов, кто приукрашивает жизнь или равнодушно проходит мимо веселых и грустных, добрых и злых, обыденных или драматических явлений жизни («Я враг безразличия, Неуклонно-непримиримо-неистовый недруг!»). Он чувствовал себя призванным раскрыть и показать все богатство духовных, нравственных, социальных отношений своего времени («За легкость век нас не прощает, как не прощаем себе и сами») и быть верным тем требованиям честности («Всю жизнь Был я честным, как... игрушка»), искренности («...Не в силах от себя отогнать близнеца своего — Искренность») и правды, удовлетворение которых хотя и становится все труднее, но зато без этого не было и не может быть настоящей литературы.

Прежде всего правда! — вот принцип принципов. К этому вопросу Севак обращался и в своих размышлениях о проблемах поэзии, противопоставляя жизненную правду слова теории прекрасной лжи: «Лживая эта «прекрасная ложь»! И именно эта лживая формулировка душит поэзию... Тогда как истинной поэзией должно становиться только верное и правдивое, здоровое и честное» («За и против «первооснов реализма»).

Севак сорвал завесу ложных представлений о жизни, нашел правдиво отображающего суть сегодняшней жизни героя, который своими раздумьями, мыслями, свежестью эмоциональных состояний принес в литературу новое дыхание.

Посвященные родине оды, клятвы, и заверения Севака, показанные им на широком плане картины жизни и истории народа, раздумья и формулировки относительно национальной судьбы, которые в различных формах проявились в его «Трехголосой песне», «Несмолкаемой колокольне», «Трехголосой мессе», а также в произведениях, посвященных родному языку и Месропу Маштоцу («Родной язык», «Армянский язык», «Слово уверения», «И муж по имени Маштоц»), были призваны прежде всего раскрыть его кровные и наследственные связи с родным народом и землей — через восприятия



Сдвоенные, пятиугольные, квадратные...



человека второй половины XX века высвечивалась и глубинная суть этих связей и отношений. У каждого времени есть свои особенные цели и принципы патриотических взглядов и чувств, являющиеся новым прочтением в аспектах современности и будущего уроков истории. Севак желал привнести в сущность народа дух жи-

вых уроков истории и пытался через подзорную трубу современности увидеть и с точки зрения требований современности осмыслить историю родного народа.

Каждая эпоха являет своего поэта, который открывает дух данного времени и с пророческим ясновидением оставляет заветы своему народу и своим современникам. Севак стал оракулом XX века — его трудной второй половины. А поэзия его превратилась в полное заветных и дорогих тайн долгожданное письмо, что в тысячах экземпляров дошло до своего адресата, став для всего народа внутренним медиумом, связующим звеном, выкованным из поэтического золота второй половины XX века.



После трагической смерти 17 июня 1971 года Паруйр Севак, подтверждая извечный закон бессмертия гениев, воскрес для иной, сужденной лишь великим жизни. Это его слова, что истинная толщина дерева является глазу после того, как его срубят. Эта жестокая, но верная истина в очередной раз, увы, подтвердила — уже по отношению к нему самому.

В Армении и Спюрке (армянская диаспора) Паруйр Севак сегодня — один из самых народных поэтов. Сегодня слова его звучат на устах чуть ли не каждого армянина, портрет его — у каждого перед глазами. Жизнь, которую обрел Севак после своей смерти, будто вновь подтвердила еще одну неоспоримую истину: ни один армянский писатель или критик прошлых лет не принимал такого активного и живого участия в строительстве новейшей армянской литературы, как Паруйр Севак. Нет его, но живое присутствие Севака ощущается во всех наших спорах, дискуссиях, литературных беседах и статьях. Борьба шла за сохранение созданных им литературных критериев, во имя победы его литературных принципов. Творчество Севака стало предметом пристального исследования и изучения. Вышли в свет монографии А. Аристакесяна и Н. Овсепяна, составленная последним двухтомная библиография. Изданы составленные А. Папояном словари, монографии, посвященные языку и стилю Севака. Стихи, статьи и отдельные размышления посвятили ему А. Сагиян, В. Хечумян, С. Ханзадян, В. Даатян, С. Капутиян, Г. Адарян,

Р. Ованнисян, Г. Эмин, Г. Матевосян, А. Ганаланян, Р. Зарян, С. Агабабян и многие другие. В те же годы появилось и немало мемуаров — некоторые честно представили портрет и облик своего великого современника, а кое-кто постарался задним числом оправдаться перед его памятью.

Жизнь и творчество Севака стали источником вдохновения и для многих армянских художников и скульпторов.

Для изучения творческого наследия Севака созывались научные симпозиумы и сессии, были организованы севаковские чтения, его юбилеи отмечались с большой торжественностью.

И все эти годы продолжала расти и простираться все дальше по всему Союзу и миру слава Севака. В Москве на русском языке вышли в свет его «Избранное» (1975) и поэма «Несмолкаемая колокольня» (1982).

Сборники его стихов выходили на венгерском («Дождевая соната», 1966, Будапешт), латышском («Руки», 1968, «Божий секретарь», 1989, Рига), чешском («Гимн свету», 1972, Прага), английском («Избранные стихи», 1973, Иерусалим), немецком («Стихи», 1987, Берлин) языках.

Теплые и сердечные слова признания сказали о нем такие видные советские и зарубежные поэты и критики, как Э. Межелайтис, А. Воэнесенский, Р. Рождественский, Е. Евтушенко, И. Драч, Л. Озеров, Ю. Мориц, И. Ростовцева, М. Потчишвили, Л. Моталова, Л. Ференц, М. Чаклайс...

Но самое главное в том, что за все эти годы поэзия Севака не превратилась в музейный экспонат, а стала действенным оружием на благо развития литературы. Именно эту важную мысль подчеркивают практически все армянские и иноязычные поэты и критики.

Вот так рядом с нами продолжает жить своей трепетной и чуткой жизнью безвременно ушедший от нас, но только гениям сужденное бессмертие обретший наш великий современник — Паруйр Севак.

**Д. В. Гаспарян**

## ԱՆՁՅԱԼԸ ՆԵՐԿԱՅԱՑԱԾ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

... Իմ համագյուղացիք իրենց գյուղի մասին առածանման խոսք ունեն. «Քառասուն ձոր, ամեն ձորում էլ՝ քառասուն ձոր»: Իսկ որտեղ ձոր, այնտեղ էլ սար: Եվ ահա առաջին ձյունը եկավ այդ քառասուն անգամ քառասուն ձոր ու սարի վայրիվերում-ները փոքր-ինչ հարթելու. հողն ու քարը (դժվար է ասել, թե այստեղ սրանցից ո՞րն է շատ) հաճանվել են սպիտակի պաղ մեղսագործությանը: Միայն տերևաթափ ծառերն են համառաբար ընդգծում իրենց սկը՝ վանականների պես իրենց հավատարմությունը վկայելով երկնքին...

...Գարնանը թզաշափ խոտ էր ծփում տանիքների վրա և նրանց մեջ եկեղեցին, իր թիթեղե դեղինով, հիշեցնում էր կանաչի մեջ ծնրած ուղտ: Չիներ նա՝ կարելի էր կարծել, թե գյուղն ունի մի ընդհանուր տափակ տանիք. տները մեջք-մեջքի էին տվել, հավել իրար, ինչպես բուքից հալածված անասունները, իսկ եղած ծուտիկ-մուտիկ փողոցներն էլ (ամոթ է փողոց ասելը) այնքան էին նեղլիկ, որ Տեառնդառաջի տոնին չափահաս երեխանները, խարուկների վրայից թռչկոտելով՝ կրակ էին տանում գյուղի մի ծայրից մյուսը՝ ոչ թե փողոցներով, այլ տանիքների վրայով...

Այն տունը, որտեղ ես ծնվել եմ... Բայց տուն չպիտի ասեի, այլ նկուղ՝ այս բառի ոչ պատկերավոր իմաստով...

Եվ եթե իմ պապերի հսկայական գրադարանից մնացել էր միայն Նարեկը՝ հրոերի սպին կաշվե դեմքի վրա և որբացած՝ զրկված ընթերցողից, ապա նրանց երկիրականի տնից էլ մնացել էր լոկ այն, ինչ չի վառվում՝ գետնափոր նկուղը...

...Զարթոնքի տարիներն էին, բայց և դժվարին տարիներ: Չկար թուղթ ու մատիտ: Չկար դասագիրք: Հաճախ ամբողջ դասարանը սովորում էր մեկ հատիկ դասագրքով: Պակասում էին ուսուցիչները: Եղածներն էլ՝ միջնակարգ և նույնիսկ թերի միջնակարգ կրթության տեր: Իններորդ դասարանում, օրինակ, մեր Ֆիզկուլտուրայի դասատուն էր որքան հաղթանդամ, նույնքան համակրելի մի երիտասարդ: Նույն այդ երիտասարդը

տասներորդ դասարանում ստիպված էր մեզ գրականություն ավանդել: Երեկ՝ ֆիզկուլտուրա, այսօր՝ գրականություն: Եվ դասավանդեց. գիշերները ես գրում էի հաջորդ օրվա մեր անցնելիք գրողի «կյանքն ու գրական գործունեությունը» և առավոտյան նա թելադրում էր մեզ իմ գրածը, ըստ որում բոլորի հետ մեկտեղ նրա թելադրածը գրում էի նաև ես: Եվ այդպես՝ կլոր տարին...

...Գյուղից գյուղ էինք գնում՝ գիրք խնդրելու: Կյանքումս մեծ գողություն էլ եմ արել. երեք-չորս հոգով «կտրեցինք» շոջակա երեք-չորս գյուղի դպրոցական գրադարանները՝ կեսգիշերին, գողության բոլոր կանոնների համաձայն: Գողություն՝ կարդալու ժարավից: Գլխավորը ես էի: Ու գրքերի մեծագույն մասն էլ ինձ էր հասնում: Ու կարդում էի ամեն ինչ. արգելված Ռաֆֆու բզկտված վեպը (կեսն արտագրեցի), Դարվինի «Տեսակների ծագումը» (կոնսավեկտավորեցի), մենագրություն Դավիթ Ռիկարդոյի և Ադամ Սմիթի մասին (ինչպես հասկանայի) և նույնիսկ... «Ռազմական արվեստ» (ի՞նչ հասկանայի)...

...Ախար ես միջնակարգն ավարտեցի՝ այդպես էլ չիմանալով, թե ինչ բան է աթոռ ու սեղան:— Մորս հացի տախտակն էր իմ սեղանը, պառկում էի բերանքս ի վար և հացի տախտակի վրա արտագրում կամ շարադրում, խնդիր լուծում կամ գծագրություն անում: Եվ գրտնակն էր իմ քանոնը, ինչպես որ խմորով էի թուղթ կպցնում: Եվ ունեի մի երազ, որ այցելում էր քուն թե արթմնի՝ տունը մինչև օճորք լցված էր գիրք ու տետրակով, ըստ որում գրքեր կան պատկերազարդ և քարտեզավոր, իսկ տետրակների մեջ՝ նաև հաստակազմ «ընդհանուր տետր»-եր. ունեմ մատիտների մի ամբողջ խորձ, ամեն գուցից՝ մի-մի ցախավել, և բուրում են այնպես...

...Դեռ չէի ածիլվում, երբ ընդունվեցի Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքը՝ հիասթափեցնելով իմ բոլոր դասատուներին, բացի գրականության ուսուցչից և... մորիցս, եթե սա իմանար, թե ի՞նչ բան է բանասիրականը և ինչո՞ւ եմ ընդունվել այդ բաժանմունքը: Ուսուցիչներիցս յուրաքանչյուրը համոզված էր, որ պիտի ուսումս շարունակեմ իր առարկայի խորացմամբ...

...Ավարտեցի համալսարանը: Ընդունվեցի ասպիրանտուրա՝ հայոց հին և միջնադարյան գրականության մասնագիտությամբ:

Վերջացել էր արյունոտ պատերազմը, բայց միայն պատերազմական վերքերը չեին, որ միտում էին. բացվում էին նորանոր վերքեր...

«Հայրենիքի հայրը» Հայրենիք ասելով սեփական կալվածք էր հասկանում: «Բոլոր ժամանակների հանճարը» երդվելով պատմության անվամբ, չեր հասկանում, որ անհնարին է կովել պատմության հետ: Եվ «բոլոր ժամանակների հայրը» չեր ուզում հասկանալ, որ պետք չե բոլոր ժողովուրդների հերն ու մերն անհծել՝ «ժողովուրդ» բառը դարձնելով դիմակ աբսոլյուտիզմի համար: Ասում էր «կադրերն են որոշում ամեն ինչ», բայց այդ կադրերի ֆիզիկական կամ բարոյական ոչնչացումը իր հաճույքներից մեծագույնն էր: Մարդուն կոչում էր «ամենաթանկ կապիտալ», բայց այդ կապիտալը ծախսում էր այնպես, կարծես թշնամական երկրի ավարը լիներ: Մի անգամ անկեղծ եղավ՝ մարդուն կոչեց «պտուտակ»: Բայց դա էլ կիսատ անկեղծություն էր, որովհետև նա մարդուն ոչ միայն «պտուտակ» էր համարում, այլև կեղտոտ բուրդ կամ փալաս, որոնք լվացվում մաքրվում են, ինչպես գիտեք, ծեծելով: Բայց մարդը, նույնպես գիտեք, որքան «պտուտակ» չե, առավել ևս՝ կեղտոտ բուրդ կամ փալաս:

Գեղեցիկը միշտ չե, որ առողջ է, մինչդեռ առողջը միշտ գեղեցիկ է: Գեղեցիկ էր մեր երազանքը, գեղեցիկ էր մեր նպատակը, գեղեցիկ էին մեր խոսքերն ու կոչերը: Բայց անառողջ էր կյանքն ու իրականությունը:

1937 թվականի աշունը ողջ աշխարհի համար ունի միայն մեկ նշանակություն: 37-ը մարդու նորմալ ջերմաստիճանն է, իսկ մեզ համար դա, «37 թվականը», ջերմաստիճանի մի այնպիսի աննորմալ բարձրացում էր, որ միլիոնավոր մարդկանց սառցահարեց մենախցերում, Սիբիրում, քեռամերձ գոտում, իսկ մնացածներին էլ՝ իրենց տանը, իրենց սրտի մեջ: Շքահանդեսներ ու հոբելյաններ սիրող «հայրենիքի հայրը» չկարողացավ չկատարել 1937-ի տասնամյա հոբելյանը՝ 1946—48 թվականները դարձնելով 1937-ի վերահրատարակություն:

Այս ամենը առավել սուր էր զգացվում արվեստի և գիտության աշխարհում, որտեղ գործողներին նա կոչում էր «օգնական» վսեմ բառով, բայց փաստորեն դա նվաստացուցիչ, «պոչ»-ի հմաստն ուներ:

Մեր կյանքն էլ այլ բան չեր, քան պարտքի վեհ գիտակցություն, և մի՞թե արժեր, որ մեր կյանքն անցներ պարտքի այդ վեհ գիտակցության և մահատագնապի արանքում։ Մեր կյանքն այլ բան չեր, քան անմնացորդ ծառայություն երկրին ու ժողովրդին, և արժե՞ր այդ վսեմ ծառայությունը հանել լեզվագուրկ ծառայի դերին։ Այդ տարիներին ամեն ազնիվ մարդ, եթե պիտի ծիծաղեր, ապա՝ արցունքների միջից, այնինչ ստիպված ծիծաղում էին արցունքոտվելու չափ։

...Բոլոր թվերից երջանկագույնը դարձել էր երեքը, որովհետև դա էր խորհրդանիշը Նորին Մեծություն Միջակության։ Լավագույն անտառի նմուշը... գազոնն էր։ Արվեստագետի ստեղծագործությունը նմանվել էր թվաբանական խնդիր լուծող աշակերտի գործի։ Խնդրագրքի վերջում տրված էր խնդրի պատասխանը. արվեստագետի գործն էր ամեն ինչ անել, որպեսզի ստացվի ճախապես տրված պատասխանը...

...Սեփական կարծիք ունենալը հավասարվել էր հերետիկոսության։ Չեր կարելի ունենալ նույնիսկ սեփական բառապաշար. համանիշների խրձից ընդունելի էր միայն մեկը՝ այն, որ մաշվում էր լրագրերի մեջ. հարյուրավոր բառերի և դարձվածքների վրա դրված էր տարու, այդ թվում նաև «Ես»-ի՝ իր բոլոր հոլովածներով...

...Իմ կյանքի լավագույն տասնամյակը անցավ ինքնամաքառման մեջ. ամեն ինչ գնաց երկու բանի վրա։ Նախ՝ դիմանալու։ Դիմացա, բայց ի՞նչ գնով։ Իմ տասը տարվա աշխատանքը մնաց ու մնում է գզրոցում. իր ժամանակին՝ չեր կարելի, իսկ հիմա չարժի։ Այդ տարիներին ես հասկացա, որ մի բան մտածել և այլ բան ասելը անբարոյականության վատթարագույն տեսակն է, ինչպես որ հարկադրաբար սիրելն էլ վատթարագույն շնականությունն է...

...Ահա թե ինչու իմ կյանքի լավագույն տասնամյակը գնաց ոչ միայն դիմանալու, այլև... հարկադրի համակերպության վրա։ 50-ական թվականների սկզբին ես գրադված էի սիզիֆյան աշխատանքից էլ դժվարին գործով. աշխատում էի... ձայնս փոխել...

...Այդ տարիներին ես արդեն ավարտել էի ասպիրանտուրան, համարյա վերջացրել իմ դիսերտացիոն մենագրությունը, որի պաշտպանությունը, սակայն, նույնպես անհնարին դարձավ,

որովհետև ամբողջ Երկրով մեկ ծավալվել էր հերթական կամպանիան՝ այս անգամ էլ ընդդեմ պատմական թեմատիկայի... ...«Եթե ժամանակը սրտովդ չէ՝ դու ժամանակի սրտովը եղիր»: Ես չկարողացա և... կրկին դարձա առաջին կուրսի ուսանող՝ այս անգամ արդեն Մոսկվայի Գորկու անվան գրականության ինստիտուտում: Մոսկվյան կյանքիս առաջին տարիները լցված էին նույն հոգեկան ճգնաժամով: Յոթ ինստիտուտ ու համալսարան չեն կարող տալ այն, ինչ տալիս է ուսուցիչներից մեծագույնը՝ տառապանքը: Հիմա ես գիտեմ, որ մեծ և անծանոթ քաղաքի փողոցներում, սառնամանիքի ու բջի մեջ շոշելիս, ոչ թե ես էի փնտրում իմ կորուստը, այլ իմ փախստական էությունն էր փնտրում ինձ: Եվ մենք, վերջ ի վերջո հանդիպեցինք՝ չորս մետրանոց մի սենյակում, որտեղ սեղան դնելու տեղ էլ չկար: Հանդիպեցինք և որոշեցինք վերջ տալ մեր խոռվությանը՝ մեկ վճռական պայմանով. գրել այնպես, կարծես աշխարհում ոչ Գուտենբերգ է եղել, ոչ էլ ընթերցող կա...

...Ճիշտ է, որ գրողը դրսնորում է այն, ինչ ուրիշները նկատել՝ բայց չեն տեսել, զգացել՝ բայց չեն հասկացել, ապրել՝ բայց չեն կարողացել արտահայտել: Ճիշտ է՝ բայց թերատ է: Իսկական գրողը նա է, ով նաև տեսնում է բաներ, որ այլոք չեն տեսել, զգում է բաներ, որ ուրիշները չեն զգացել, ապրում է բաներ, որ ամեն ոք չի ապրել և չի կարող ապրել: Անցյալ և արդի գրականության տարրերությունը, ընդհանուր և կոպիտ սահմանագծումով, ըստ իս այն է, որ եթե հները ասում էին այնպիսի բաներ, որ ամեն մարդ կարող է իմանալ, բայց չգիտի, ապա նորերը պիտի հոգ տանեն ասելու այնպիսի բաներ, որոնք, իրենց կարծիքով, մենք չգիտենք և չենք կարող իմանալ, եթե իրենք չլինեին: Ուստի և եթե որևէ մեկը ասում է այնպիսի բան, որ ես գիտեմ, կարող է ինձ իր ընթերցողը շրամարել, որովհետև ես՝ ընթերցողս, ավելի անճարակ չեմ, քան ռադիոռունկիրը, կարող եմ «անջատել ռադիոն», այսինքն՝ փակել գիրքը...

...Երանի նրան, ով մարդկանց գլխապտույտ է պատճառում, և վայ նրան, ով պատճառում է սրտխառնուք...

...Իսկ բա՛ռը: Նա նման է նորահաս աղջկա, որ միշտ հագած-կապած է, կոճկված ու ամոթխած, զգույշ ու խրտչուն: Եվ նրան մերկ կարող է տեսնել այն տառապյալը միայն, որ

սիրում է նրան իր կյանքից առավել և որին՝ երջանիկին, այդ  
պատճառով էլ սիրում է ինքը՝ բառը, —որ... ամեն բառ իր  
գործածության տեղը պիտի ունենա...

Առայսօր՝ այսպես:  
Իսկ վա՞ղը:  
Գրողը չէ, որ գրելիք է փնտրում:  
Գրելիքն է գրող փնտրում:  
Ես սպասում եմ, որ գրելիքս ինձ գտնի:  
Չե՛ որ նա գիտի իմ հասցեն...

1965 թ.

1 դեկտեմբերի  
Չանախչի

(Տպագրվում է կրճատումներով)





## ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղցրանո՛ւն,  
Իմ բարձրանո՛ւն,  
Իմ տառապա՛ծ,  
Իմ փառապա՛նծ:  
Հների մեջ՝ դու ալննար,  
Նորերի մեջ՝ նոր ու ջաճել.  
Դու՝ խաղողի խչմարված վազ,  
Վշտերըդ՝ ջուր, ինքըդ ավազ.  
Դու՝ բարդենի սաղարթաշատ,  
Առուն ի վար փոված փշատ.  
Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,  
Մագա լաթյա մատյանի թերթ.  
Դու՝ Զվարթնոց — ավեր տաճար,  
Կոմիտասյան Ծիրանի ծառ.  
Դու՝ ջրաղաց խորունկ ձորում,  
Դու՝ հորովել անուշ ծորուն,  
Փայլ գութանի արծաթ խոփի.  
Դու՝ Եե՛տ, Եիզա՛կ, մկո՛ւնդ կոպիտ,  
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,  
Դու՝ անգի՛ր վեպ, դու՝ Սասնա ծո՛ւռ...  
Իմ փառապա՛նծ,  
Իմ տառապա՛ծ,  
Իմ բարձրանո՛ւն,  
Իմ քաղցրանո՛ւն:  
Դու՝ մրգերի շտեմարան,  
Ոսկեվազյան ահնու մառան.  
Դու՝ թավշե դեղձ, դու՝ փրփուր հաց,  
Արտաշատյան խաղող սևաչ.  
Դու՝ Սևանի վառվող կոհակ,  
Երևանի սյուն ու խոյակ.  
Դու՝ հանգրվան, կանչող փարոս,  
Դու՝ հայկական գերբ ու դրոշ.  
Խոսուն վկա կոտորածի  
Ու վճիտ աչք ցամքած լացի.  
Արդարության ահեղ ատյան,  
Սրի պատյան,  
Սիրո ւատյան —  
Միշտ հի՛ն ու նո՛ր իմ Հայաստան:




Հանդիպումից հետո...

После встречи...

6 Նորից քեզ հետ



Эпри шүбнөштөрө мпиүптијашн կјашнքһиг...  
Четыре мгновения из московской жизни...







## ՆԱԳՐԱԾՈՒՆ

Վճռել եմ այսօր ձեզ գվարժացնել...

Ես, ինչ խոսք, այսօր պիտի որոց չուտեմ  
Կամ կուկ տամ դաշում  
Ու կլլածիս տեղ  
Թերենիցը համեմ թաշկինակ կամ ծիտ,  
Ինչպես անում են  
Չատ սովորական ձեռնածուները:

Եվ գլխիս վրա չպիտի դնեմ  
Մի հսկայական երկարժ գերան  
Ու կախ տամ վրան  
Ճուփ-ճուփ կիսամերկ կանայք սիրունիկ,  
Ինչպես անում են, գիտե՞ք, կրկնում:

Եվ ո՞չ էլ պիտի ես արջ պար ածեմ  
Մի զույգ շնիկի հաշոց-նվագով...

Կարող եմ նաև դրումից սարքել  
Արև՝ թե կուզեք, թե կուզեք՝ գլուխ...  
Սատունից սարքել լայնեզր գլխարկ  
Եվ տեղն ու տեղն էլ նվիրել սիրով  
Ծխախոտագործ մի ընկերունու...  
Իսկ գլխարկից էլ կարդինալ սարքել  
Կամ մարշալ  
Եվ կամ...  
Ախար, բարեկա՞մ,  
Ախար ինձ համար ո՞չ մի բան չարժի  
Փայտին տալ, ասենք, ուղեղի ծալքեր,  
Ուղեղից... հավի համեղ կուտ սարքել  
Կուտից՝ կերակուր հասարակական...

Սակայն ես այսօր  
Չե՛մ զբաղվելու նման բաներով:

Ես այսօր պիտի ձեզ հավատացնեմ,  
Չե՛զ հավատացնեմ — ի՞նձ վհատեցնեմ,  
Որ հենց վաղվանից,  
Պատվով ու հարգով,  
Բանտարկյալները գազանանոցի  
(Փղից սկսած ու հասած օձին),  
Առաջ խորության ու տարբերության,  
Բոլո՞րը պիտի ստանան կարգով  
Համապատասխան շքանշաններ  
Եվ... ինչի՞ համար.  
Լոկ համբերության...

Շքանշաններ կստանան, այսպե՞ս,  
Բոլո՞րը,  
Գուցե զերբերից՝ բացի՝  
Այն հին էշերից, որ մինչև այսօր  
Չեն դարձել կարգին լավ քաղաքացի.  
Երբեմն, դարձյա՞լ տաշխ են քացի՝  
Իրենց վանդակի ճաղերին թեպետ,  
Բայց մեկ չէ՝ միթե, քացի է քացին...  
Հույս ունեմ, որ դուք  
Ինձ հավատացիք,  
Ուստի թույլ տվեք՝ շարունակելով՝  
Չե՛զ հավատացնել — ի՞նձ վհատեցնել,  
Որ ճշմարտություն իսկույն ասելը  
Դարձել է մի բան՝ այնքան հասարակ,  
Որքան... ներեցե՞ք... որքան... միզելք:

Ուստի ասեմ ձեզ՝ բարեկամների՝ ս,  
Որ այսու և ետ բացառված հաշվեք  
Հիվանդությունը երիկամների՝  
Կա՞պ կոչվի, թե՝ մապ,  
Քա՞ր կոչվի, թե՝ մար,  
Մեկ չէ՝ ձեզ համար...  
Ուստի ո՞նց չասեմ բարեկամներիս,  
Որ այսու և ետ պետք չէ սուս ծախել,  
Այլ, ինչպես ինքըս, մեջքից պոչ կախել  
Ու... քշե՛լ կծող ճանճերին բոլոր՝  
Դրանք կոչվեն մի՛տք, մտատանջությո՞ւն,  
Թե՛ հոգետագնապ,—  
Մի՞թե նույնը չէ...

Եվ ես,  
Վերջապե՞ս,  
Էլ ինչպե՞ս, ինչպե՞ս  
Ձե՛զ վրատեցնեմ — ի՞նձ հավատացնեմ,  
Որ ահա այսպե՞ս,  
Ճի՛շտ ու ճի՛շտ այսպես,  
Այն դեղին ցուլ,  
Որ ուզում էի աշնանը գնել,  
Կերավ ա՛յն կանաչ բանջարեղենը,  
Որ ուզում էի գարնանը ցանել:

Ի՞նչ չտեսություն,  
Ի՞նչ չտեսություն...

Ուրիշ ի՞նչ:  
Ոչի՞նչ:  
Ոչինչն էլ՝ քո պինչ,  
Քո պինչն էլ՝ իմ պոչ  
Եվ... ցտեսություն...

XXX

Ու մաստիք, ու տարու սիս-  
թ ու այս ջաղաց, ու բաշխած,  
Դու բարեկայ օգոս, պատուի կոչում  
Կունցիս է և առ առ ազգական  
Հայութեա առ առ այդ այդ այդ այդ  
Ենայ առ այդ առ առ այդ այդ,  
Բու բառը առ այդ այդ այդ,  
Բու բառը առ այդ այդ, առ այդ այդ,  
Տարե վան այսու այս այս այս  
Տ ա ս տ ա ս տ ա ս տ ա ս տ ա ս  
Տ ա ս տ ա ս տ ա ս տ ա ս տ ա ս  
Տ ա ս տ ա ս տ ա ս տ ա ս տ ա ս  
Տ ա ս տ ա ս տ ա ս տ ա ս տ ա ս

Բանաստեղի ձեռագիրը  
Рукопись поэта

## **ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՎԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ԵՎ ՇԾԳՐԻՏ ՍԱՐՔԵՐԻՆ**

**Հաշվում եք, հաշվում...**

Հաշվեցե՞ք հապա,  
թե ի՞նչ ալիքավ, քանի՞ վայրկյանում  
Եվ քանի՞ գրամ արյուն է հոսում աղջըկա սրտից  
Դեպի ամորիսած այտերը նրա՝  
Առաջ բերելով այն բռնկումը ջերմամիջուկյան,  
Որ մինչև այսօր, միամտաբա՛ր, շիկնանք ենք կոչել:  
Եվ կոսմիկական ճառագայթների ի՞նչ հոսք է անցնում  
Մեր մթնոլորտված աշքերի միջով,  
Երբ հանկարծակի նրանք դիպանում են ուրիշ աշքերի,  
Եվ այս փոխադարձ ճառագայթումը  
Կտանգավո՞ր է մեր սրտի համար,  
Թե՞ օգտակար է:

**Հաշվում եք, հաշվում...**

Հաշվեցե՞ք հապա, թե մեր ափերով  
Քանի՞ կիլովատտ հոսանք ենք տվել  
Երեխաների մազերին փափլիկ ու թաթիկներին,  
Մեր սիրածների իրանին ճկուն,  
Ուսերին նկուն մեր տատիկների,  
Եվ մեր ստացածն ինչքա՞ն է պակաս  
Կամ ինչքա՞ն ավել:

**Թե չէ՝ հաշվում եք, հաշվում եք, հաշվում...**

Հաշվեցե՞ք, խնդրե՛մ, հաշվեցե՞ք նաև,  
Թե մեզնից գոնե մե՛կը իր կյանքում  
Քանի՞ կնոջ է տենչանքով նայել,  
Քանիսի՛՛ մաքուր մի հիացմունքով,  
Քանիսի՛՛ միայն եղբոր քնքշությամբ...  
Նշեցեք նաև տեղերն այն կանանց,  
Որ կարող էին մեզ խորունկ սիրել,  
Բայց մենք այդպես էլ չհանդիպեցի՛՛:  
Պ. Սևակը ձայնագրություններում և ազդագրերում  
Պ. Севак в фонограммах и афишах

— Каковы, по вашему мнению, национальные признаки в поэзии, в литературе вообще?

— Национален прежде всего язык, представляющий собой не скопление слов, но психологию, и это не просто красное словцо, это осязаемая реальность. Произведение, в котором национальная психология выражена только посредством языка, уже настолько национально, что, если даже сам предмет изображения не национален, произведение все равно выдаст свою национальную принадлежность.

Самый яркий пример — армянский поэт X века Григор Нарекаци. Его великая «Книга скорбных песнопений» по своему материалу не имеет никакой видимой связи с армянским народом. В поэме даже не встречаются слова «армянин», «армянский», но так молиться, так говорить о страданиях и бедствиях человека мог лишь сын народа, который к тому времени уже более пятисот лет был лишен государственности...


В «Книге скорбных песнопений» нет прямого отражения исторических событий, и слава богу, что нет: такая конкретность, как камень на шее, давно бы «утопила» книгу Нарекаци. Но все это преломилось в ней настолько мощно, настолько зrimo, с такими изгибами национальной биографии, что Нарекаци трудно переводить не только на другие языки, но даже с древнеармянского на современный язык армян. Фигуры, подобные Нарекаци, встречаются не часто. С этой точки зрения его можно было бы сравнить с его современником — великим Фирдоуси, с гениальными Руставели, Низами, Данте.

Интервью вел литературовед

А. АРИСТАКЕСЯН

(печатается с сокращениями)





## Պ. ՍԵՎԱԿԻ ԱՍՈՒՅԹՆԵՐԻՑ

Բանաստեղծ լինել և չունենալ ազգային պատկանելիություն՝ անհնարին է, ինչպես հնարավոր չէ լինել լուսի ճառագայթ և չանդրադառնալ ջրում:

Այո՛, մեր նախնիները մեզ և աշխարհին փոքր ժառանգություն չեն կտակել: Բայց մենք պիտի հասկանանք և հասկանալով չմոռանանք երբեք, որ մեր ժառանգության մեծագույն գանձը մեր լեզուն է:

Արվեստի բնագավառ մտնելն ու չփնտրելը նույնն է, ինչ որսի գնալն ու շուրջը-չնայելն: Բայց ամեն դեպքում կարևորը որսածն է և ոչ թե շուրջը նայելը, ինչպես որ կարևորը գտնելն է և ոչ թե փնտրելը:

...Նյարդերը արվեստագետի նվագարանն են, բայց ոչ երբեք դահլիճը: Իրավ արվեստագետը նվագում է ոչ թե նյարդերի վրա, այլ նյարդերով սեփական, ոչ թե արցունք կորզելով, այլ արտասվելով ինքն իր մեջ. ոչ թե տանջելով, այլ տանջվելով ինքնին:

Համաշխարհային արվեստի պատմությունը, վերջին հաշվով, այլ բան չէ, քան պատմությունը նորարարության: Ըստ որում, լինել նորարար՝ չի նշանակում ասել «ոչ»: «Ոչ» են գոռում պոռոտախոսները կամ պարզապես հովկովները: Նորարարը «ոչ» չի գոռում, նորարարն ասում է «այո, բայց...»: Եվ չի ասում «Օվսաննա», այլ հարցնում է՝ «Ի՞ն երթաս»: Եվ մըր-

մընջում՝ «փառքդ շատ, տե՛ր», այլ գոչում է՝ «շօշափեցե՛ք զիս  
և տեսեք...»:

Գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի  
միջով, շփվելով բազմաթիվ ազգերի լեզուներին՝ հայոց լեզուն  
մի յուրատեսակ հանրագիտարան է անհիշելի ժամանակների,  
բազում դարերի և բազմաթիվ այլ ազգերի: Այսպես դատելով՝  
մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլև աշխարհին: Նա  
միայն մեր սրբությունը չէ, այլև մասունքը հանուր մարդկու-  
թյան:

Չկա ավելի խոր զգացում, քան հայրենասիրությունը: Եվ  
սխալվում էին հները, կարծելով, թե «սերը կույր է»: Համենայն  
դեպս չի կարող կույր լինել սիրո այն տեսակը, որ հայրենիքն  
է հարուցում, այն էլ մի այնպիսի հայրենիք, որպիսին մերն է:  
Նա կարիք չունի այն սիրույն, որ գործում է կույր հավատի  
օրենքով, նա արժանի է այն սիրույն, որ ենթակա է ըմբռնո-  
դության օրենքներին:

Հայոց աշխարհն ունի շատ վայրեր, որտեղ ապրելո ու աշ-  
խատելը մեծ պատիվ է: Օշականում ապրելը, մեր Առաջին  
Ուսուցչի անունը կրող դպրոցում սովորելը մեծ պատիվ՝ և  
նույնքան էլ մեծ պարտականություն է: Զանացեք արժանի  
դառնալ այդ մեծ պատվին և ձգտեցեք հնարավորին չափ կա-  
տարել այդ մեծ պարտականությունը:

Իբրև մոր նայել և իբրև մոր են պահել իրենց մայրենի  
լեզուն հայ ժողովրդի մայրասեր և մայրախնամ զավակները՝  
սկսած Մաշտոցից ու մեր առաջին թարգմանիչներից մինչև...  
Վարուժան ու Զարենց:

Մեր դարում չի կարելի լինել գրող և բանաստեղծ, առանց  
կրթության...

Զպիտի մոռանալ, որ եթե գիճին հնությունից թնդանում է,  
ապա պոեզիան հնությունից քաղցրանում է, մանավանդ, երբ  
նրա մեջ է մտնում օդը՝ ժամանակի կենդանի շունչը:

«ԹՎԱԲԱՆՈՎԵՅՈՒՆԸ» դուրս է պոեզիայի ոլորտից: Բանաստեղծը պիտի մտածի «հանրահաշվորեն»:

Ես ինձ շատ ավելի հուզական-զգացմունքային բանաստեղծ եմ համարում, քան իմ այն բանաստեղծ-ընդդիմախոսները, որոնք երդվում են հույզի ու զգացմունքի անունով:

Զննադատը... պիտի գրողից հասակով լինի՝ եթե ոչ բարձր, ապա գոնե նրա չափ:

Արվեստագետն ունի միայն մեկ մտահոգություն՝ իր ասելիքն արտահայտելու մտահոգությունը: Երբ կա ասելիք, ապա դա չի կարող չբերել իր արտահայտման ձևը:

Ով կարծում է, թե անհանգ բանաստեղծություն գրելն առավել դժվար չէ՝, քան հանգավորը, նա տակավին չի գրել ո՞չ մի բանաստեղծություն:

Ամեն մի ճշմարիտ ու մեծ արվեստագետի մեջ ննջում է հեղափոխականը:

Մեծի մեծարումը կարող է գովք կարծվել, բայց չի կարող հասնել գովարանության, որովհետև մեծը դրա կարիքը չունի — նա բարձր է գովքից էլ, գովարանությունից էլ:

Սիմֆոնիզմը ամենին էլ բանաստեղծական մեծ կտավների մենաշնորհ չէ. «սիմֆոնիզմը» կարող է դրսնորվել նաև 15—20 տողանոց բանաստեղծության մեջ, որովհետև սիմֆոնիզմը ոչ այնքան ժանր է, որքան մտածողության ձև:

Այո՛, դասականներից պետք է սովորել, բայց առաջին հերթին պետք է սովորել նրանց նորարարական «խնությունը»:

Եթե նրանք՝ գիտնականները, ուզում են Աշխարհը բացատրել, բանաստեղծն ուզում է Աշխարհը գնահատել: Իսկ գնահատելու մեկ չափ ու կշիռ կա՝ «ճշմարտությունը...»:



Դ. Անդր գրականագիտուրյան մեջ  
Դ. Հանք և լիտերատուրավեճութեան

«Չուշանա՞լ, ետ չմնա՞լ»,— այս պիտի լինի ամեն մի հայի նշանաբանը՝ ինչ գործի տեր էլ որ լինի:

Խաղալ գրականության հետ, նշանակում է խաղալ ժողովրդի ոչ միայն ներկայի, այլև ապագայի հետ, է՛լ առավել մի այնպիսի ժողովրդի, որպիսին է մերը, որի համար գրականությունը շատ հաճախ փոխարինել է պետությանն ու ազգային կյանքի վարչությանը:

Գրականությունը եթե ենթակա է որևէ օրենքի, ապա ենթակա է անտառի օրենքին, անտառի՝ և ոչ թե գաղոնի՝...

Մեր արմատները թերևս խորհ են ավելի, քան բարձր է մեր սաղարթը:

Ով պատմություն ունի՝ չի կարող ետ չնայել:

Ով անցյալ ունի՝ չի կարող հիշողություն չունենալ:

## **Պ. ՍԵՎԱԿԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

---

Մաշտոցը եկավ դառնալու մեր պատկերացումը. պատկերացումը մեր իսկ գոյության, մեր իսկության:

Այն, ինչ մարդու կյանքում չափվում է տարով, ժողովուրդ-ների կյանքում չափվում է դարով: Նախամաշտոցյան մեր կյանքը անցավ առանց «հնջնահիշողության»: Եվ Մաշտոցն էր, որ եկավ դառնալու մեր հիշողությունը. հիշողությունը մեր իսկ գոյության, մեր իսկ մասին:


Գրականության պատմությունը նման է լեռնապարի, որքան հեռանում ենք այս ու այն բլուրից կամ սարից՝ նույնքան փոքրանում են դրանք: Սա, դժբախտաբար, ընդհանուր կարգ է: Իսկ արտակարգերը սակավ են այնքան, որ յուրաքանչյուր ժողովրդի մեկ հատ էլ չի ընկնում: Մենք, իբրև ժողովուրդ, մեզ կարող ենք բախտավոր համարել, որովհետև ունենք այդպիսի մեկը. անունը՝ Գրիգոր Նարեկացի:

Կան բանաստեղծներ, որոնք իրենց փառքը թաղված են տեսնում իրենց թաղումից առաջ:

Եվ կան բանաստեղծներ, որոնք իրենց փառքը իրենց հետ գերեզման են տանում:

Սայաթ-Նովան այն երջանիկներից է, որոնք կենդանության ժամանակ էլ ստիպված են լինում փակել իրենց ականջները՝ փառքի աղմուկից պաշտպանվելու համար:

Բայց Սայաթ-Նովան այն հազվագյուտներից է նաև, որոնց փառքը ելնում է իրենց գերեզմանից՝ ինչպես անխուսի թոնրից,



Դեպի Անականա  
В сторону Севакавана



որ ծուխը հանձնել է իր ժամանակի երդիկին՝ զուտ բոցը պահելով գալիք ժամանակներին:

Այդպիսիք են, որ ազատագրվում, բարձրանում են տեղից ու ցեղից, պահից ու մահից:

...Պետրոս Դուրյան...

Սա աշխարհ չպատկերեց: Եվ աշխարհ չստեղծեց սա:

Սա բացեց իր աշխարհը, որ իրենից հետո կոչվեց ու կոչվելու է իր իսկ անունով՝ դուրյանական:

Արվեստագետը, եթե մինչև իսկ փոքր է, բայց այսուհանդերձ ճշմարիտ, չի կարող ապրել օրացուցով: Նրանը տարին է՝ զգայական, ամբողջական, քառեղանակյա: Իսկ եթե նա ոչ միայն ճշմարիտ, այլև մեծ արվեստագետ է, ապա չի կարող գոհանալ նաև տարով. նրանը ժամանակն է, դարաշրջանը: Այսպիսի դարաշրջանային արվեստագետ էր Ադամյանը:

Այսօր, երբ իր դառն հիշատակը նորից է քաղցրանում մեր սրտերում՝ այս անգամ իր հոբելյանի առիթով, անկարելի է շհիշել ծերուկ էսքիլեսի այն խոսքը, որ դարձել է «Հոգեվարքի և հույսի շահեր»-ի բնաբանը. «Արյունը և եղբայրակցությունը ամենամեծ ուժերն են»: Սիամանթոն ինքն էլ հենց դարձավ երգիչը այդ ամենամեծ ուժերի՝ արյան և եղբայրակցության, մի երգիչ, որի ձայնից այսօր էլ պղպջում է մեր արյունը, և մեր եղբայրակցությունը չի ճանաչում քարտեզի օրենքները՝ կոխսկրտելով բոլոր այն սահմանագծերը, որ մեզ անջատում են մեզնից:

Վարուժանը մեկն է հայ ամենամեծ քանաստեղծներից, որոնք ոտնահարում են ազգային սահմանները՝ դեպի համաշխարհային գրականության սահմանները ելնելու համար... Իրենց հոգեկան ներհակությունները լուծում են ազգայինից դեպի միջազգայինը, մասնավորից դեպի ընդհանուրը, կոնկրետից դեպի վերացականը բարձրանալու իմաստով:

Ինչպես ամեն անհատ, այնպես էլ ամեն ազգ ունենում է իր կենսագրությունը: Ու եթե ամեն անհատի կենսագրությունը չէ, որ գրվում է, ապա ամեն ազգի կենսագրություն գրվում է անպայման՝ վաղ թե ուշ: Եվ ահա Թումանյանի ճակատին էր գրված՝ լինել հայ ժողովրդի ետմիջնադարյան պատմության կենսագիրը: Այստեղ է Թումանյանի անհամատեղելի մեծությունը, այստեղ է նա անզուգական, այստեղ է նա միակ, ուստի և՝ անփոխարինելի:

Հանդիպել է քեզ պատանության շեմին, ուղեկցել ամբողջ երիտասարդությունունու և այնուհետև դարձել մշտական բարեկամդ: Նրան ծանոթանալուց է սկսվել գիտակցական կյանքը, որի թարգմանիչն է դարձել, երբ ինքը տակավին եղել ես «անլեզու». սերդ ես խոստովանել՝ նրա լեզվով, կարոտդ թեթևացրել՝ նրա բառերով, թախծել ես՝ նա՛ քեզ հետ, երջանկությունունու ու բերկրանքը է խոսել՝ նրա բերանով: Նրա մտքերն ու խոհերը, ապրումներն ու հուզգերը գիտես անգիր...

(Վահան Տերյանի մասին)

Բովանդակ աշխարհի վրա վառվող մի հարավային արև, բովանդակ աշխարհի վրա սփոված մի նախրական անծայր տիսրություն և բովանդակ աշխարհը իր ոգու համար հայրենիք ընտրած մի ուղեղ՝ մոսկովյան կարմիր-կարմիր հրով այրված. ահա Չարենցը:

Մայակովսկին հեռու է սառն հայեցումից, երևույթների և փաստերի «օրյեկտիվ» նկարագրությունից: Ո՞ս պարզ նկարագրությունը և ո՞չ էլ հանդարտ պատումը, այլ բողոքն ու վրդովմունքը, բանավեճն ու կոչն են բնորոշում ինչպես Մայակովսկու պաթուը, այնպես էլ ոճը:

Նա գրում է հյութեղ, պարզ ու հասկանալի, ժողովրդական բառ ու բանով հարուստ, հետաքրքիր լեզվով: Նրա լեզվամոածողությունը գերազանցապես հայերեն է՝ զերծ օտարաբանություններից: Այս իմաստով՝ թերևս մեր գրողներից ամենից ժողովրդայինն է նրա լեզուն:

(Կախթանգ Անանյանի մասին)


Տաղանդը նման է սիրո, բոլոր սերերը մի ընդհանրություն ունեն, բայց նրանցից յուրաքանչյուրը նման չէ մյուսին՝ յուրովի միակն է և անկրկնելի:


Այդպես է նաև Վիգեն Խեչումյանի տաղանդը: Այն, ինչ նա է տեսնում, լսում, ընկալում ոչ ոք չի լսում և չի ընկալում, ինչ նա է անում ոչ ոք չի կարող անել:

Միլվա Կապուտիկյանը բազմաթիվ անթերի-մնայունապրելիք բանաստեղծությունների հեղինակ է... Նա արդեն մտել է մեր քերթության պատմության մեջ: Հայ բանաստեղծության ապագա ծաղկաքաղերի մեջ նա արդեն ունի իր էջը:

Սարոյանը օժտված է մի այնպիսի ձիրքով, որ շատ քչերն են ունենում՝ մարդկանց սիրելու դժվարագութ տաղանդով: Նա մարդկանց չի դատապարտում, այլ սիրում է նրանց: Ահա թե ինչու նա բացասական կերպարներ չունի: Նրա բնավորության ամենաբնորոշ գիծը բարությունն է: Բայց այդ բարությունը ոչ թե սառը հայեցողական է, այլ զարմանալի գործոն, իսկ սերը՝ այնքան արտահայտիչ, որ ցուց է տալիս նաև, թե նա ի՞նչ չի սիրում և չի՝ կարող սիրել: Նրա երկերը լեցուն են հազար ու մի զուկանքներով, և նրա հեղոսները հազար ու մի դժվարություն են կրում: Բայց այս ամենը չերմացած է սրտի մի այնպիսի կրակով, որ ապրել ես ուզում և ոչ թե մեռնել, փառաբանում ես կյանքը և ոչ թե անհծում:

«Իմ սիրտը լեռներում է» դրամայի բեմադրությունն ամենից առաջ ցույց է տալիս, թե ինչ մեծ կարելիություններ ունի Վարդան Աճեմյանի տաղանդը: Մի բոլորովին ուրիշ առիթով էլ երևաց ու հաստատվեց, որ նրա միտքը որոնող է, որ նրա մեծ ձիրքը չի սիրում հանգստանալ, որ նա մեկն է այն հազվագյուտ արվեստագետներից, որոնց կոչում են «մշտապես երիտասարդ»:





## **Պ. ՍԵՎԱԿԻ ՄԱՍԻՆ**

---

Պարույր Սևակի ծնունդը՝ մեր կյանքի, մեր մշակույթի, մեր ներկայի ու մեր ապագայի համար եղավ ճշմարտապես մի պայծառ «Եղիցի լուս»: ...Պարույր Սևակն այնպիսիներից եղավ, որ պիտի ապրի այնքան ժամանակ, ինչքան ժամանակ պիտի ապրի հայ ժողովուրդը, իսկ հայ ժողովուրդը անմահ ժողովուրդ-ներից մեկն է աշխարհի վրա:

ՎԱԶԳԵՆ Ա  
Ամենայն հայոց կաթողիկոս

Պարույր Սևակ բախտ է, աստղ է: Ես հիացեր եմ անոր գրությունեն: Սևակ թանկ է հային համար...

ՎԻԼԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Պարույր Սևակը մեծ կրքերի երգիս է. քնարանույք չէ «կոպիտ համարվող, նույնիսկ արգելված» բառերի գործածությունը, ինչպես նաև կենդանական կամ բուսական աշխարհի օգտագործումը: Բառը բանաստեղծի համար զենք է՝ նվաճելու ընթերցողին, և որքան բազմաքառ, հարուստ էր նրա բառարանը, այնքան հարուստ է նա ու կարող, պայմանով, որ բանաստեղծը կարողանա հնչեցնել իր բառերը, նրանց տեղին գործածությամբ հասնել արվեստի կատարելության:

Բայց հիշենք, որ հանձին Սևակի մենք գործ ունենք քոլորովին տարբեր կառուցվածքի և տարբեր ժամանակի բանաս-

տեղծի հետ. վերոհիշյալ «ոչ բանաստեղծական» բառերը ոչ մի գնով և ոչ մի տքնությամբ չէին մերկի Տերյանի բանարվեստին, իսկ Սևակի մոտ, ոչ միշտ հաջողությամբ, գտել են իրենց տեղը խաղաղ համակեցությամբ:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱԶԱՐԻ

Հայկական բանաստեղծության մեր ժամանակին պատկանող պատմությունը, այն, որ առավել իրավունք ունի հպարտանալու XX դարին իր պատկանելիությամբ, Եղիշե Չարենցից հետո ու նրա կողքին չի կարող չտեղավորել Պարույր Սևակ բանաստեղծի անունը: Այդ բանն արել է ինքը՝ ժամանակը, որ ասպարեզ է հրավիրում շատերին, բայց ընտրում ու կոչում է քչերին:

ՎԻԳԵՆ ԽԵՂՈՒՄՅԱՆ

Աշխարհում լավ բանաստեղծները քիչ չեն, բայց քիչ է թիվն այն բանաստեղծների, ովքեր նոր ակոս են բացում գրականության մեջ և դառնում ժամանակի գեղագիտական մտքի օրենսդիրներ: Պարույր Սևակը ընդլայնեց մեր ժողովրդի հոգևոր սահմանները, դուրս բերեց 30 հազար քառ. կմ. տարածությունից և այն դիտեց դարի ու ժամանակի բարձունքներից: Եվ մենք, որ Սևակի ժամանակակիցներն ու հնատնորդներն ենք միաժամանակ, այլևս իրավունք չունենք «ատոմային էներգիայի բարում կրակ ստանալ... շփումով»:


ՊԵՐՁ ԶԵՅԹՈՒՆՅՅԱՆ

Մարդ մը և գրող մը՝ որ իր կյանքով ու գործով դարձավ շունչը, խորհրդանիշը իր ժամանակին, լավագույնս արտահայտեց իր ժողովրդի ազգային ու մարդկային խոհերն ու զգացումները, եղավ անցյալի ժառանգորդն ու ապագայի բանքերը, իր գոյությամբ իսկ տվակ փաստը մեր ժողովրդի հրաշալի վերածնունդին՝ հայրենի հողին վրա, տվակ երաշխիքը մեր ժողովրդի մեծ երազի ամբողջական իրականացման:

ԳԱՌՆԻԿ ԱՐԴԱՐՅԱՆ



Անակի անվան փողոցը Երևանում  
Улица имени Севака в Ереване



Պարույր Սևակի ասելիքը չի սահմանափակվել ազգային շրջանակներում: Նա դուրս է եկել և թևածել համամարդկայինի ու համաշխարհայինի ոլորտներում: Ազգայինի և համամարդկայինի ներդաշնակումը նա համարում էր մեր ժողովրդի աշխարհայեցողությանը ներհատուկ:

ՄՐԱՄ ԻՆՑԻԿՅԱՆ

Նրա մեծությունը գնահատողը ժամանակներն են, որ կան ու լինելու են: Ժողովրդի անբիծ սերը այն հուշարձանն է, որ ստեղծել է ինքը՝ մեծ բանաստեղծ Պարույր Սևակը: Լոդ սերը մաքուր ու հավերժական է: Գնալով այդ սերը կթանձրանա և կծավալվի գարնան զարթոնքի նման՝ հիացմունք և ուրախություն բերելով ժամանակի ու տարածության հեռուներում իրար հաջորդող սերունդներին:

ՄԵՐՈ ԽԱՆՁԱՂՅԱՆ

Պարույր Սևակը սերվում է Եղիշե Չարենցի պոետական գորեղ զարմից: Մեծ է նրա նման և նրա նման մաքրատենչ: Իր ոչ երկար ստեղծագործական կյանքում նա երազեց ու պայքարեց, որ Եղիշի լույս և մանկան մաքրություն: Երգեց մեր հանճարեղ ժողովրդի արդար ու բարձրագնա ճանապարհը և նրան բաժին ընկած անարդար, դժվար ճակատագիրը: Երազեց, խոկաց, հուսաց, հավատաց, որ իր ժողովուրդը կստանա իր տառապանքների և կորուստների արժանի հատուցումը: Նրա մեծ տաղանդի ճշմարիտ ուղղությունը, անհանդուրժողականությունը կյանքի ստվերների, բոնությունների նկատմամբ, լավատեսությունը նրան մղում են բանաստեղծական աստվածության ոլորտները, դարձնում նրան «աստծո քարտուղարը»: Սևակի սինհատականության հգոր կնիքը որոշմված է մեր դարի հայ բանաստեղծության վրա:

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆ

Պարույր Սևակ ծնող ժողովրդի արգանդը երբեք ամուլ չի մնա: Նա իր օրինաչափ դադարներն ունի միայն: Թող զանգակատունը շեն մնա, նոր ժամհար աշխարհ կգա անպայման:

ՈՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

Նա իր մեծ հոգում Շերդաշնակեց Ասիան ու Եվրոպան, Արևելքն ու Արևմուտքը, հողն ու հոգին, հասկի շնորհալի խոնարհությունը և լեռնային գետի անկաղապար ըմբոստությունը: Նա իր փոքրիկ սրտաչափ սենյակում հեռուներից բերեց-բնակեցրեց աշխարհի խորհող մեծերին, դարձավ նրանց թարգմանը և խնկարկուն, իսկ երբ գնաց աշխարհի հեռուները՝ իրենով տարավ-ներկայացրեց Հայաստանը՝ իր բիբլիական իմաստնությամբ ու իր մանուկ երազանքներով: Նա ապրեց գեղեցիկ, հախուտն, անհաջիկ մտքի ու զգացմունքների արքայական մի շոայլությամբ իր շուրջը սփռելով սեր, դաշնություն, հրճվանք և օրինություն: Ու եթե ճնշեց նա մեզ, ապա միայն իր մահվան այս ահոելի, անդարմանալի, սիրտ և սյուն փլեցնող վերջով...

#### ՄԻԼՎԱԿԱՊՈՒՏՏԻԿՅԱՆ

Բազմադարյան պատմություն ունեցող հայ բանաստեղծությունը այնքան է հարուստ ստեղծագործական վառ անհատականություններով, գեղարվեստական խոսքի կոթողներով, որ մեր օրերում դժվար է արժանի կերպով կանգնել նրա խոշորագույն դեմքերի կողքին, նոր էջ բացել նրա «ոսկե մատյանում»: Դրա համար ոչ միայն բնատուր մեծ տաղանդ է հարկավոր, այլև ժամանակի սուր և խոր զգացողություն, գեղարվեստական մշակույթի բազմակողմանի իմացություն, ավանդույթների և համարձակ նորարարության զուգակցման կարողություն:

Պարույր Սևակը այդ հազվագյուտներից էր...

#### ԱԼՔԵՐՏ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Պարույր Սևակը մեծ բանաստեղծ չէր միայն, այլև բազմակողմանիորեն զարգացած, խոր գիտելիքների տեր հետազոտող-գիտնական:

Ինչ որ անում էր գիտության մարգում, անում էր բացառիկ նվիրումով ու խորացումով, անում էր փաստերի մի ամբողջ շտեմարան տեղից շարժելով:

#### ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ



Պ. Սևակի անվան դպրոցը Երևանում  
Школа имени П. Севака в Ереване

Պարույր Սևակի անվան ու ստեղծագործության հետ է առնչվում այն վերածնունդը, որ ապրեց հարուստ անցյալ ունեցող հայ պոեզիան վերջին 15 տարում: Իր ստեղծագործություններով նա կապված էր միջնադարի խոշոր դասական Նարեկացու և ՀՀ դարի մեծ բանաստեղծ Չարենցի հետ: Սևակը միայն բանաստեղծ չէր, նաև բանասիրական գիտությունների դոկտոր էր և ուներ բանասիրական հրաշալի ուսումնասիրություններ, որոնցով մեծ ազդեցություն էր ունեցել երիտասարդ բանաստեղծների վրա, նրանց մղել դեպի նոր ուղիներ:

«Հունգարական ազգ» օրաթերթից

Պարույր Սևակը, ըստ Էության, ժառանգորդն է Եղիշե Չարենցի: Մերձավորագույնը անոր՝ իր խառնվածքով, իր մտածին լայն պաշարով, իր անհանդարտ գրական բնավորությամբ: Պարույրը, իր նախորդին պես, բանաստեղծ է շարժումի, կիրքի, բողոքի:

ՀԱԿՈԲ ԱՍՏՈՒՐՅԱՆ

Իր մեծ նախորդների՝ Նարեկացու և Շնորհալու, Աբովյանի ու՝ Ալիշանի, Սիամանթոյի ու Չարենցի ոգին էր, որ հարազատ որդու իրավունքով ժառանգել էր նա: Կոմիտասյան անլոելի գանգակատան արձագանքներն էին նիրհում նրա արյան մեջ, որ արթնացան ու հնչեցին այնքան ուժգին, այնքան հարազատ ու հայրենաշունչ... Հնչեցին, իրենց ղողաճները փլելով ամբողջ հայ ժողովրդի հոգում: Մայր Հայաստանից մինչև Սփյուռքի ամենահեռավոր ծայրերը...

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

Պարույրի թողածը անգնահատելի է ու շատ, բայց տարավ իր հետ անհամեմատ ավելին: Նա ուներ ասելիք, լի էր ամենով: Պարույրը ժողովրդի ծնունդն էր, նրա հոգու պահանջը, նրա հույզերի երգիչը: Պարույրը քաղաքացի էր, ինտերնացիոնալիստ, մեծ հայրենասեր:

Հավատում եմ, որ ամեն հայ և օտարազգի նրա պոեզիայի մեջ իր սրտի, իր հույզերի լարը կգտնի...

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՉՅԱՆ



ცელის მანავსტებელის  
კლეთა პირე

(ავტ. უ. ცელის)  
(работа А. Ширвази)

**Մատադ սերունդը ծարավ է ճշմարտության:**

**Պարույր Սևակը երիտասարդության հոգու Մաքրությունն է, նրա սրտի Զարկերակը, Բողոքը, Պայքարը, Հավատը և Վերջապես ճշմարտությունը:**

**ՍՈՒԱ ՉԱԽԱՅԱՆ**

**...Պարույր Սևակը հայ ժողովրդի հավատարիմ զավակն ու նրա ճշմարիտ բանաստեղծն է: Նա կարողանում է լինել ամբողջ համաշխարհային պոեզիայի ժառանգորդը:**

**ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԴԻՆ**

**Աշխարհում ոչ մի բան օտար չի նրան, ամեն ինչ նրան հուզում է, ամեն ինչ կարևոր է ու մոտիկ: Նրա քնարերգության մեջ դժվար չէ նկատել գենետիկական ազդակները, որ գալիս են հանճարեղ նարեկացու փիլիսոփայական խորհրդածություններից, Սայաթ-Նովայի և հայկական միջնադարի մյուս մեծ քնարերգուների տաղերից, ինչպես նաև Եղիշե Զարենցի նորարարական ստեղծագործություններից: Բայց այնտեղ հնչում են նաև Պուշկինի բանաստեղծական քնարի լարերը, զգացվում է Ռիխմենի բանաստեղծական ազատությունը, տրիբուն Մայակովսկու հասարակական ավանդույթների և Ռիլկեի մտորումների ազդեցությունը: Ուսկու այդ հատիկները նա վերածուիլ են իր աշխատանոցում, ստանալով բավականին ինքնատիպ բանաստեղծական մի ձուլվածք: Նա, ինչպես ասել է Պոլ Էլուարը, մեկ մարդու հորիզոնից գնում է դեպի բոլոր մարդկանց հորիզոնը: Պարույր Սևակը հայկական բանաստեղծական խոսքի համար ճանապարհ հարթելով դեպի լայն աշխարհ, շարունակեց իր հախորդների ավանդույթները:**

**ԷՐՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՆ**

**Այդպիսիների մասին ասում են՝ «աստծո ողորմածությամբ բանաստեղծ» էր: Սևակը բանաստեղծ էր երկնքի ողորմածությամբ. Սևանի ողորմածությամբ, սարերի հովհանքների, ինքնաթիռային անքուն կրակների և մարդկային մտքի ողորմածությամբ:**

**ԱՆԴՐԵՅ ՎՈԶՆԵՍԵՆՅԿԻ**

Նրա մեջ մի այրող բան կար: Բորբոքող, անկասելի, ձգող մի բան: Թուխ, լայնաշուրթ, լարված, զգայուն: Խոշոր աչքերում՝ մշտական անհանգստություն: Մշտասնեռ վիճակ: Շատ կարևոր մի մտքի հետամուտ մշտապես, որը կուհել չէի կարողանում: Պարույր Սևակը այդպես էլ գաղտնիք մնաց: Բայց մի՞թե գաղտնիք չեն մնացել Լերմոնտովը, Բողվերը, Չարենցը...

ԵԵՎ ՕԶԵՐՈՎ

Մենք անընդհատ մոտենում ենք բանաստեղծին, իսկ մեր միջև եղած տարածությունը մեծանում է տարեցտարի: Եվ քանի որ «Մեծը հեռվից է երևում», տարածության ավելացման հետ, Պարույր Սևակ երևույթը խոշոր մասշտաբներ է ընդունում:

...Նա պատկանում է այն երևույթների թվին, որոնք աճում են ժամանակի մեջ:

ԻՎԱՆ ԴՐԱԶ

Նա բանաստեղծ էր բառիս այն նախնական իմաստով, որը հաճախ այնքան հեշտորեն տարրալուծվում է գոյության պայքարում: Այդ պատճառով էլ նա երբեք գոյության համար չէր պայքարում. նա պալքարում էր ոչնչության, ստորության, գազանության, բռնության, դաժանության գոյության դեմ: Նա ոգի էր և նա բացառվում էր՝ իր բանաստեղծական համաստեղծությունը ստեղծելով ինքն իրենից: Այժմ այդ համաստեղծությունը լիցքավորված է նրա մտքով ու հոգևոր կամքով և առավել ուժգին է ազդում մեր մշակույթի եղանակի վրա, քան այն ժամանակ, երբ Պարույրը կենդանի էր ու երիտասարդ:

ՅՈՒՆՍԱ ՄՈՐԻՑ

Բարենք, Պարույր:

Ես քեզ ասում եմ «Բարենք» և գիտեմ, որ ի պատասխան կլսեմ քո ձայնը: Քո ձայնով ինձ կապտախանեն երգեցիկ, կարևոշուն գետերը Հայաստանի: Անհանգիստ, ինչպես դու: Շոայլ, ինչպես դու, իմաստուն, ինչպես դու: Եվ հավերժ, ինչպես դու: Ինձ կպատասխանեն քո արևոտ հողի աշխատավորները՝ մար-

դիկ, որոնց ձեռքի ափերը կոշտ են քարի պես, իսկ սրտերը թրթուն ու բաց, ինչպես Սևանի հարթությունը: Ինձ կպատասխանեն հազարամյա պատմության հզոր որոտները, կյանքը հաստատող, ցնուն ձայները, որ լսվում են ծննդատներից: Անցյալը կպատասխանի և ներկան: Թոշունները և աստղերը: Ցողի կաթիլները և անձրևի կաթիլները: Ինձ կպատասխանեն այսօրվա և վաղվա սիրահարված հողերը: Զո ձայնով կպատասխանեն: Զո բանաստեղծություններով: Դրա համար՝ միշտ բարև, մեր Պարունակությունը եմ քեզ ծննդյանդ օրվա առթիվ:

ՈՂԲԵՐԸ ՈՂԺԵՍՎԵՆՍԿԻ  
Նամակ Պարունակին՝ նրա ծննդյան 50-ամյակի օրը

...Ես հիմա պարզապես չեմ գիտակցում, որ դու չկաս: Մեր կապը միշտ էլ եղել է առանց իրականի և անիրականի սահմանազատման: Միշտ էլ, չհաշված մի քանի կարճատև հանդիպություններ, մենք ապրել ենք իրարից հեռու: Բայց այդ հեռավորությունը մենք չենք զգում, կարողանում էինք սրտի ու կամքի ուժով այն հաղթահարել:

ԼՅՈՒՂՄԻԼԱ ՄՈՏԱԼՈՎԱ

Չեխ ընթերցողը հայ բանաստեղծի մեջ գտնում է իր մարդուն: Պ. Սևակին սքանչացնում է գժությունը, առանց որի «սերմերը բերք չեն դառնալու», «թաթերը ձեռք չեն դառնալու»: Սևակի պոեզիայի քնարական հերոսը տղամարդկանց զտարյուն ցեղից է, ոչ մի բանի համար չի դավաճանի իր իդեալներին, իր սիրուն և աշխարհի իր նոր հայտնությանը: Նրա պոեզիայում ներբանները միջնորմ են երկրի և մարդու միջև, իսկ արևի ճառագայթները՝ արևային ներարկումներ: Սևակի «Հիմն լուսինը», Նելմանի խոսքերով ասած, «լուսեղեն նյութից է» և կարող է դրականորեն ազդել մեր պոեզիայի կողմնորոշման վրա:

ՄԻԼԱՆ ԲԼԱԶԻՆԿԱ

# О ПАРУЙРЕ СЕВАКЕ

---

Рождение Паруйра Севака стало для нас, нашей культуры, нашего настоящего и нашего будущего поистине явлением Света. Паруйр Севак—из тех, кто будет жить столько, сколько жив будет армянский народ, а армянский народ—один из бессмертных на земле.

ВАЗГЕН I, КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН

Паруйр Севак—судьба, звезда. Я восхищен его творчеством. Севак дорог армянам...

ВИЛЬЯМ САРОЯН

— Ничто в мире для него не было чужим, все его волновало, все было важным и близким. В его лирике нетрудно уловить генетические импульсы, идущие от философских размышлений гениального Нарекаци, из песен Саят-Новы и других великих лириков армянского средневековья, а также новаторского творчества Егише Чаренца. Но в них звучат и струны поэтической лиры Пушкина, чувствуется поэтическая свобода Уитмена, и общественные традиции трибуна Маяковского, и влияние раздумий Рильке. Эти крупики золота он переплавил в своей лаборатории в достаточно своеобразный поэтический сплав. Он шел, как говорил Поль Элюар, от горизонта одного к горизонту всех людей. Паруйр Севак, проложив дорогу армянскому поэтическому слову в широкий мир, продолжил традицию своих предшественников.

ЭДУАРДАС МЕЖЕЛАЙТИС

Здравствуй Паруйр!  
Я говорю тебе «здравствуй!» и знаю, что в ответ обязательно услышу твой голос.  
Твоим голосом ответят мне песенные, клокочущие реки Армении. Беспокойные, как ты. И как ты—щедрые.  
Твоим голосом ответят мне легендарные горы Армении. Мудрые, как ты. И как ты—вечные. Мне ответят солнечные люди твоей земли—труженики, чьи ладо-

ни тверды, как камень, а сердца — трепетны и распахнуты, как севанский простор. Мне ответят величавые гулы тысячелетней истории и торжествующие голоса, летящие из окон родильных домов. Мне прошлое ответит и будущее. Птицы ответят и звезды. Капли росы ответят и капли дождя. Мне ответят сегодняшние и завтрашние влюбленные земли. Твоим голосом ответят. Твоими стихами. Поэтому — здравствуй всегда, наш Паруйр!

Поздравляю тебя с днем рождения!

РОБЕРТ РОЖДЕСТВЕНСКИЙ

### Письмо Паруйру Севаку в день его пятидесятилетия

Про таких говорят: «поэт милостью божьей». Севак был поэт милостью небосклона, милостью Сева'а, высокогорных чабанов, бесконных самолетных огней и человечьей мысли.

АНДРЕЙ ВОЗНЕСЕНСКИЙ

Мы все время приближаемся к поэту, а расстояние между нами увеличивается с каждым годом. И так как «большое видится на расстоянии», с увеличением расстояния творчество Паруйра Севака как явление обретает большой масштаб.

ИВАН ДРАЧ

Сегодня мы учимся жить так, чтобы не судить о Поэте, как судят о толщине дерева после того, как его срубят. Поэт и срубленный останется Поэтом. Но что за животное недоверие владеет нами, приводящее нас к топору?

Срубили, свалили, сгубили, стоим вокруг этого великоканского дерева и дружно, согласно вздыхаем: да, и вправду большое было оно...

ПЕТР ВЕГИН

«Да будет свет!» П. Севака, говоря словами Неймана,— из «светового материала» и может иметь позитивное значение для ориентации чешской поэзии.

МИЛАН БЛАГИНКА

# ՎԵՐԱԴԱՐՁ ԼՈՒՅՍՈՎ

«Այսօր հանուր գիտակցությանը հասնում է, որ չի կարելի բանաստեղծի, նրա արժեքի ու մեծության մասին դատել փայտահատի իմացածի պես, բանաստեղծի ասած՝ ծառի բունը կտրելուց հետո միայն. Ճիշտ է, բանաստեղծը բանաստեղծ է մնում կյանքը հատվելուց հետո Էլ. Բայց նախնադարյան այդ ինչ թերահավատություն է, որ էլի բանաստեղծի ասած, մեր ձեռքը տանում է սղոցակացնին.. Կտրեցինք, վար գցեցինք, կործանեցինք և ահա կանգնած ենք այդ վիթխարի ծառի շուրջը և խմբովին հոգոց ենք հանում համա թե մեծ էր իսկապես...»:

ՊՅՈՒՏԸ ՎԵԳԻՆ

Պ. Սևակը մեզ հետ է ամեն օր ու ժամ: Նրա կյանքը, որպես լեգենդ-առեղծված, շատ ու շատ գաղտնիքներ է պարփակում: Կենտրոնացնելով, մեկտեղելով նրա անձին, կյանքին, ստեղծագործությանը նվիրված հրապարակումները, ես ցանկանում եմ մեր ժամանակակիցներին ու ժառանգորդներին համահավաք հասցնել Պ. Սևակի ոչ միայն գրական, այլև փաստական այն նյութերը, որ կարող են օգնել մոտիկից ճանաչելու, հարազատանալու, շոշափելիորեն զգալու այն մարդուն, ով դեռ 1965-ին դիմում, ճշում էր.

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի  
Ես վախենում եմ,  
Շան եմ վախենում  
Բյուրավոր ու բո'կթ հավատացյալից,  
Բյուրատեսք ու սո'ւտ հավատացյալից,  
Եթե աստված եք՝  
Փշեցե՛ք նրանց բոլոր մոմերը,  
Մարեցե՛ք նրանց ջահերն այլազան,  
Որ... եղիցի լո՛ւս:

Մի առիթով Ա. Պ. Չեխովը գրել է, որ «Մեծագործ մարդիկ պետք են ինչպես արևը: Կազմելով հասարակության ամենաբանաստեղծական ու կենսախինդ տարրը, նրանք արթնաց-



Այսօն օր բարձր ծաղկման (Երևան, Կամոյի փ. 3)  
Վсегда свежие цветы (Ереван, ул. Касянна, 3)

նում են, հանգստացնում և վեհացնում: Նրանց անհատականությունները կենդանի փաստաթղթեր են»: Այս է, որ պարտավորեցնում ու զգուշացնում է յուրաքանչյուրիս հանուն այն ամենի պահպանման, ինչ կապված է մեծերի անվան ու գործի հետ, ավելին. անհրաժեշտ է վառ պահել հանճարների հիշատակը, անհրաժեշտ է ո՞չ նրանց, այլ մեզ...

Դեռևս 1969 թ. Հ. Թումանյանի՝ մեծանուն բանաստեղծի 100-ամյակի կապակցությամբ ունեցած իր ելույթում Պ. Սևակը նշում է, որ «Ինչ-որ թանգարանվելու Է՝ պիտի թանգարանվի: Սա մտահոգությունից վեր հարց է և մտահոգություն էլ չպիտի հարուցի»:

Եվ արդ. Պ. Սևակ բանաստեղծ-քաղաքացու աֆորիզմ դարձած նման մտահոգությունը մեծերի կյանքի, ստեղծագործության և ժառանգության պահպանման նման գնահատական-չափանիշն ինչ-որ չափով եկան լրացրին իմ այն ձեռնարկումը, որի մասին կփորձեմ պատմել, շարադրել:

Պ. Սևակը 1971 թ. հունիսի 17-ին, 47 տարեկան հասակում, ավտովթարի զոհ դարձավ, ողջ հայ ժողովուրդը սգաց բանաստեղծի մահը: Նույն այդ թվին, երկու տարվա կալանքից հետո, վաճառքի հանվեց Սևակի «Եղիցի լույս» բանաստեղծությունների ժողովածուն, որն, ավա՞ղ, նրա կարապի երգ-ժողովածուն դարձավ: Այս փաստը ևս որոշակի դեր խաղաց Սևակ-մարդու կյանքի մանրանասների էլ առավել խորքից իմանալու համար:

Մյուս կողմից, բանաստեղծ-մտածողի մասին եղան բազմաթիվ հոդվածներ, հրապարակումներ՝ անդրադառնալով, ներկայացնելով նրա կորուստը թե՛ որպես բանաստեղծի, մտավորականի, քաղաքացու, թե՛ որպես մարդկային ափսոսանք և մխացող ցավ: Եվ ակամայից, ամեն անգամվա պես մտաբերում ես նրա իսկ բանաստեղծական խոսքի ճշմարտացիությունը.

Այն էլ զգացի, ցավո՛վ զգացի,  
Որ կտրվելուց հետո է միայն  
Երևում ծառի բուն հաստությունը:

Այդ՝ «Ծառի բուն հաստության» անհայտ մնացած, անհայտ շերտերից յուրաքանչյուր բեկոր, յուրաքանչյուրն՝ ինչպես մի կտոր հանածո ոսկի, ողջ փայլով խիստ կարևոր են բանաս-

տեղծ-մտածողի դիմանկարի ամբողջացման համար: Դրանով է պայմանավորվում այսօրվա իսկ մտահոգությունը մասունքների ձեռքբերման, պահպանման գործում, անդառնալի կորուստներից խուսափելու համար: Այլ կերպ ասած՝ «Մեկ այսօրը արժեն երկու վաղվան» սկզբունքն ուղենիշ դարձավ հետագա բոլոր տարիներին՝ իմ այս կատարած աշխատանքների ընթացքում, որի հանրագումարը շուտով երկու տասնամյակ կկազմի:

Այն բազմաթիվ հրապարակումները, որոնք ես կարդում եի, իրողություններ, որոնց հետ ես շփվեցի բանաստեղծի ողբերգական մարդկան կապակցությամբ, դրանք ես, անկախ մի որևէ նպատակի, պահում եի, դժվարանում բաժանվել դրանցից և, որպես ինձ համար թանկագին նյութեր, հիշողություններ, առանձնացրել եի առանձին թղթապանակներում, որոնք գնալով ավելի ընդգրկուն և շոշափելի եին դառնում:

Բանաստեղծի կյանքի մանրամասների, անցուդարձերի ամեն մի տեղեկություն, ինֆորմացիա, լեզենդի պես հարազատորեն էր ընկալվում: Ինձ հանգիստ չէր տալիս նաև բանաստեղծի մարդկանից բառացիորեն երկու շաբաթ առաջ տեղի ունեցած մի ողբերգական միջադեպ:

Հայաստանի գրողների վեցերորդ համագումարում (1—3. 6. 71 թ.), Միության գրողների հինգերորդ համագումարի աշխատանքներին, որպես պատվիրակ մեկնողների ցուցակում իր անունը թողնելու դեմ առարկելու փաստը,— իբր՝ «Ֆիզիկապես ես չեմ լինի», այսինքն՝ ոչ ավել, ոչ պակաս 14 օրվա կյանք էր մնացել ապրելու..., այս փաստը էլ ավելի խորացրեց իմ մեջ նրա կերպարը, նրա ապրած կյանքը: Իսկ նրա կյանքին վերաբերող նյութերի ամբողջական ընդգրկման գաղափարը այլս օր ու գիշեր հանգիստ չէր տալիս ինձ:

Հանուն դրա է, որ տարիներ շարունակ ամեն օր և այսօր էլ հարկավոր է եղել հետամուտ լինել, շարունակաբար ի մի բերելու Պ. Սևակի կյանքն արտացոլող մասունքների և գրականստեղծագործական ժառանգության գանձարանի մաս-մաս հա-



վաքմանն ու կենտրոնացմանը (և ընդհանրապես հավաքել նրա մասին հարուստ գրականություն, նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող նյութեր):

Իսկ որոնման, փնտրելու ու գտնելու ճանապարհին հարկավոր է եղել թերթել, ընթերցել տարբեր լեզուներով թե՛ բազմազիվ թերթեր ու ամսագրեր, թե՛ պարբերականներ և թե՛ գրքեր մասնագիտական ու գեղարվեստական բնույթի: Այն նյութերը, որոնք ես հասցնում էի ընթերցել, հետևելով թերթերի հրապարակումներին, հաճախում էի գրադարաններ, լրացնում բաց թողնվածը, ձեռք բերելով թերթը կամ էլ ինֆորմացիան, հաճախ նաև նման նյութեր ինձ անհատ մարդիկ էին տրամադրում:

Դ. Սևակի եղերական մահվանից հետո, նրա մասին առանձնապես շատ էր տպագրվում: Հարկավոր էր աչալուրջ լինել չվորպելու և որևէ նյութ բաց չթողնելու համար: Հետևապես էլ ավելի հետևողական պետք էր գտնվել թե հանրապետական մամուլին և թե նոր գրքերին: Եթք որևէ գրքի մասին թերթում հրապարակված գրախոսականից պարզվում էր, որ այստեղ ինձ անհրաժեշտ ինֆորմացիա կա, ես աշխատում էի ձեռք բերել այդ գիրքը: Ինձ շրջապատողներից շատերը տեղյակ էին իմ այդ ձեռնարկմանը, և նրանք նույնպես իրենց հերթին ժամանակ առ ժամանակ օգնում էին: 1989 թ. տարվա ապրիլից Եղեգնաձորի շրջանում հայտարարված էր «Սևակյան տարի»: Բանաստեղծ Մկրտիչ Մկրտչյանը հավաքել էր Եղեգնաձորի շրջանային «Վերելք» թերթի այն համարները, ուր տեղ էին գտել «Սևակյան ընթերցումներ» խորագրով նյութերի, հոդվածների, հիշողությունների հրապարակումները, որը սիրով տրամադրեց այս ֆոնդ-արխիվին: Օտար լեզվով հրապարակումներին ծանոթանում էի ոչ միայն հանրապետական թերթերի տրված ինֆորմացիաներից, այլև գրողների միության, հանրային գրադարանի, հանրապետական հեղինակային իրավունքների գործակալության համապատասխան բաժիններից: Այս կապակցությամբ, օրինակ, Մոսկվայում «Սովետսկայա լիտերատուրա» ամսագրի խմբագրությունում սիրով ինձ տրամադրեցին այն քարտարանը, որտեղ նշված էին տարբեր տարիներին ամսագրում հրապարակված գրողների անունները և գործերը: Ասեմ, որ հատկապես վերջին տարիների ամսագրերի

համարներից նվիրեցին, ընդ որում տարբեր՝ գերմաներեն, չեխարեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով, որի համար, առիթը օգտագործելով, հայտնում եմ նրանց իմ խորին շնորհակալությունը: Հետագայում այս գործի բերումով ինձ համար ուղեցուց հանդիսացան Ն. Հովսեփյանի, «Պ. Սևակ — Կենսամատենագիտություն» գրքի 1-ին, (Երևան 1968 թ.), իսկ 1983 թ. 2-րդ գրքի մասերը, ինչպես նաև Ա. Արիստակեսյանի «Պ. Սևակ — Կենսամատենագիտություն» (Երևան 1983 թ.) գիրքը, որոնք ինձ օգնեցին ֆոնդի նյութերը առանձին բաժինների տարբերակելու գործում: Վերը հիշատակված գրքերը նյութեր ձեռք բերելու խնդրում ինձ այնքան էլ չօգնեցին, քանի որ ֆոնդ-արխիվի ստեղծման համար պետք էր ունենալ արդեն ձեռք բերված, հավաքագրված նյութեր իր ամբողջության մեջ: Չե որ փաստական հարուստ նյութերը դասդասված ու քարտավորված տեսքով, ըստ տարբերակված բաժինների, այն, որ նման ֆոնդ-արխիվը գրողի կյանքի գիտական տարեգրության համար հիմնարար նշանակություն ձեռք կբերի, որ կստեղծվեն հնարավորություններ ուսումնասիրելու գրողի ստեղծագործական լաբորատորիան, նրա կյանքին ու գործին պատկանող նյութերը:

Էլ չեմ ասում գիտական-ճանաչողական այն արժեք նշանակության մասին, որ ունի մասունքների նման համահավաք հավաքածուն: Հույս ունենք, որ այն հիմք կդառնա ապագա սևակագիտության մշակութային օջախի ստեղծման կորիզը, կդառնա մի յուրօրինակ կենտրոն-հաստատություն: Եվ եթե մի պահ պատկերացնելու լինենք, թե ինչ ահոելի ժամանակ ու եռանդ պետք է վատնել որևէ գրողի վերաբերյալ գրականության, նյութերի հայթայթման համար, և եթե ֆոնդն էլ տեխնիկապես ապահովված լինի միջոցներով, դիաֆիլմերով, լուսապատճենման սարքերով և այլն, ապա պարզ կդառնա նման ֆոնդ-արխիվի գոյության կարևորությունը: Իսկ թե ի՞նչ հնարավորություններ կընձեռի այն Սևակ-բանաստեղծ-քաղաքացու դիմանկարի ամբողջացման համար, չարժե վիճարկել: Իսկ, եթե տարբերակելու լինենք այն հանգամանքը, թե մատենագիտական գրականությունը ի՞նչ կարող է տալ հետագոտողին, պատասխանը միակն է, թերևս ոչ այնքան շատ բան, ինչ կոչված է տալու այն ֆոնդ-արխիվը, ուր ի մի են բերված և կենտրոնացված հեղինակի ողջ կյանքն արտացոլող ժառանգությունը:

Մատենագիտական տեղեկատուի մեջ թերևս ամփոփված են հրապարակումների անուններ, ամսագրերի ու թերթերի անվանումներ, տարեթվեր և այլն: Ֆոնդ-արխիվում հավաքված, դասդասված ու քարտավորված է այն ամենը՝ ինչ կապված է տվյալ հեղինակի կյանքի ամեն մի մանրամասին:

Տարիների հետևողական և ջանադիր աշխատանքը ավելի ամբողջական կներկայացնի այն իրականությունը, միջավայրը, որտեղ ապրել, ստեղծագործել է գրողը: Բնականաբար եղածը կլոացվի, կամբողջացվի այն մարդկանց հիշողությունների, վկայությունների ձեռքբերման, գրասման շնորհիվ, ովքեր հանդիսացել են գրողի սերնդակիցները և նրան շրջապատողները: Քանի որ թանգարանային արժեք հասկացությունը վերաբերում է միայն հիշատակային (մեմորիալ) նյութերին, որոնք անմիջական տվյալ անձին են պատկանելիս եղել, հետևապես գրողի կյանքի, ստեղծագործության ամբողջական պատկերը լրացնելու համար քիչ կարևոր չեն նաև այն նյութերը, որոնք կապված են ժամանակակիցների հուշերի և ընդհանրապես նրա ապրած կյանքի անցուդարձի հետ: Ֆոնդ-արխիվում տեղ են գտել նաև այդպիսի նյութեր:

Նմանատիպ նյութեր կան նաև ձայնագրություններում՝ գրական հանդիպումների, հավաքույթների, պոեզիայի երեկոների ելույթներում, որոնք ոչ լրիվ ամբողջությամբ է շատ դեպքերում տվյալ հեղինակի կողմից մշակվում և տպագրվում: Դրանք և այն նյութերը, որոնք ես ձեռք եմ բերում, ինձ օգնում են ել ավելի ամբողջական դարձնելու Սևակի կերպարը: Մենք հավաքել ենք նաև Պ. Սևակի կողմից արված բազմաթիվ մակագրություններ, դրանց ֆոտոպատճենները թեկուզ և «հապճեպ» ձևով արված, և ըստ ժամանակագրության ամփոփել: Այն դեպքում, երբ չեն համաձայնվել գիրքը տրամադրել, մենք ֆոտոպատճենել ենք հիշյալ մակագրությունները: Այստեղ է, որ մտահոգվելու կարիք իրոք զգացվում է, չե՞տ ոչ ոչ բոլորն են այն ի վիճակի պահել և որպես ժառանգություն հանձնել սերունդներին:

Ձեռագրերի, առանձին նյութերի, արխիվալին փաստաթութերի, մի խոսքով այն ամենը, ինչ կապված է գրողի անվան հետ, դրանց գիտական մշակումը, ուսումնասիրումն ու մասսայականացումը հնարավորություն կընձեռի գրողի ողջ ստեղծա-



Պ. Սևակի տապանաքարը  
Надгробный камень П. Севака

գործության և նրա մասին լուս տեսած բոլոր կարգի նյութերի, հոդվածների՝ հակիրճ ու սեղմ բովանդակության կազմելուն՝ հանգամանալի ծանուցմամբ, ներառելով փոքրիկ տեղեկությունն անգամ: Նման ֆոնդ-արխիվի առկայության, մյուս կողմից էլ՝ հավաքչական, գիտահետազոտական աշխատանքների շնորհիվ այն ձեռք կբերի գիտական անհրաժեշտ մակարդակ: Այսքանից հետո մնում է ավելացնել, որ հարկավոր ու անհրաժեշտ հոգատարություն և կարելվուց չափ հետևողականություն պետք է ցուցաբերել անվանի մարդկանց մասունքների պահպանման գործում՝ լինի դա անձնական մղումներից՝ հետաքրքրությունների բավարարում, թե գիտական օջախ-հաստատության աշխատակցի կողմից, որպես ուղղակի մասնագիտական աշխատանքի կատարում:

Պարույր Սևակի կյանքին ու գործունեությանը վերաբերող վերոհիշյալ ֆոնդ-արխիվը բաղկացած է 17 բաժնից: Հունիսի 17-ը էլ բանաստեղծի կյանքի վերջին օրն է: Ֆոնդ-արխիվի նյութերը կազմում են շուրջ 10.000 միավոր, այն ամբողջովին բարտավորված է ըստ առանձին-առանձին բաժինների, որոնք են.

— Պ. Սևակի երկերը առանձին գրքերով, (ընդ որում գրքեր՝ լուս տեսած տարբեր լեզուներով՝ թե Միությունում և թե արտասահմանում. այս հանգամանքն ընդհանրական է բոլոր բաժնի նյութերի համար).

— Ստեղծագործությունները՝ հրապարակված պարբերական մամուլում և ժողովածուներում.

— Գրական-քննադատական և հրապարակախոսական հոդվածները.

— Հոդվածներ, գրախոսականներ, ելույթներ, կարծիքներ բանաստեղծի ստեղծագործության և ժառանգության վերաբերյալ.

— Բանաստեղծի կատարած թարգմանությունները.

— Խմբագրած գրքերը.

— Բանաստեղծի խոսքը տարբեր առիթներով, պոեզիայի երեկոների, ռադիո-հեռուստատեսային հաղորդումների ձայնագրությունները.

— Բանաստեղծների, գրողների, արվեստի մշակների այն գործերը, որոնք նվիրված են Պ. Սևակին.

— Բանաստեղծի կերպարը կերպարվեստի գործերում.

— Երեկոների, հավաքույթների քարտավորում, որտեղ ընթերցվել են Պ. Սևակի գործերից.

— Բանաստեղծը լուսանկարներում, հրապարակված պարբերական մամուկում, ժողովածուներում (նաև նեգատիվներ).

— Բանաստեղծի հետ առնչվող լուսանկարներ.

— Երաժշտական ստեղծագործություններ՝ գրված բանաստեղծի խոսքերով.

— Կինոնկարներ, թատերական ստեղծագործություններ, որտեղ հնչել են բանաստեղծի գործերից կամ Էլ ստեղծագործություններ, որոնք թատերականացվել են.

— Երեկոների, հավաքույթների, համերգների ծրագրեր, աֆիշաներ, բուկլետներ, հրավիրատոմսեր, գրքերի պրոսպեկտներ և այլն.

— Հոդվածներ, ելույթներ, հարցազրույցներ և այլ կարգի նյութեր, որտեղ թեկուզ մեկ անգամ նշվել է բանաստեղծի անունը.

— Պ. Սևակի անվան ֆոնդ-արխիվին կատարված նվիրատվություններ, դրանց անվանական քարտավորումը.

Ֆոնդի նյութերից ցանկացած տեղեկություն իմանալու համար օգնում են օժանդակ այն քարտերը, որոնք տարբերակված են ոչ միայն ամեն մի հեղինակի անվանական քարտի լրացման, նյութերի խմբավորում ըստ լեզուների, նյութերի խմբավորում ըստ տարեթվերի, այլև քարտարան պարբերական մամուլի համար:

Տարբերակված բաժնի նյութերն ունեն իրենց գրանցված քարտերը, ըստ իրենց բաժնի համարի և ըստ նյութի համարի:

Նշված օժանդակ քարտերն են.

ա. ըստ հեղինակի՝ անվանական.

— այսինքն այդ հեղինակի քարտի վրա գրանցվում են այն բաժնի համարները և նյութի հերթական համարները, որտեղ նա իր անվամբ նյութ է ունեցել, չէ որ մի հեղինակը կարող է տարբեր բաժիններում նյութեր ունենալ:

բ. ըստ լեզուների խմբավորման.

— առանձին քարտի վրա նշվում են այն բաժնի համարները և նյութի համարները, որոնք եղել են տարբեր լեզուներով,

ասենք՝ ոռւսերեն, անգլերեն, ֆրանսերեն և այլն, և սրա հիման  
վրա, թե որ բաժնում ինչ լեզվով նյութեր կան:

**գ. ըստ տարեթվերի.**

— քարտի վրա նշվում են նյութերի հրատարակման տարե-  
թվերը, ըստ առանձին-առանձին բաժինների: Ասենք № 1 բաժ-  
նում 1971 թվականին քանի ինֆորմացիա կա, չև որ կարող է  
1990 թ-ին ի հայտ գա 1971 թ-ի մի բաց թողնված ինֆորմա-  
ցիա. այդ դեպքում այն կգրանցվի այդ բաժնի բակի քարտի  
վրա, ըստ բաժնի և հերթական համարի:

**դ. ըստ թերթերի և ամսագրերի.**

— այս քարտերի վրա նշված են ըստ ժամանակագրության  
դրանց հերթական համարները: Այսպիսի գործողություններով է  
մեկ միավոր ինֆորմացիան վերջնական քարտավորվում: Այ-  
սինքն այս ամենի առկայությունն ինքնին հեշտացնում է որևէ  
նյութի վերաբերյալ մեկ իսկ տեղեկության դեպքում նյութի  
դուրս բերումը:



Մոտ երկու մասնամյակ շարունակ հավաքագրելով և հա-  
մակարգելով Պ. Սևակի կյանքին ու գործին նվիրված շուրջ  
10.000 միավոր պարունակող ֆոնդ-արխիվը, անշուշտ, միայն  
սիրողական մղումներից չե, որ առաջնորդվել ենք: Այդ գործը  
շարունակվում է նաև այսօր, քանզի համոզված ենք, որ մեծ  
է դրա նշանակությունը սևակագիտության ասպարեզում: Այս-  
տեղ տեղին է հիշատակել Պ. Սևակի մահվան կապակցությամբ  
բանաստեղծ Համո Սահյանի խոսքը. «Դեռ ապագան է Պարույր  
Սևակը: Գրավոր Սևակի տեղը թափուր չի մնալու, դեռ շատ  
պիտի մեծանա այդ տեղը: Մեր պարտքն է՝ մասունք առ մա-  
սունք հավաքել, ամբողջացնել անգիր Սևակի առօրեական և  
աստվածային կերպարը և հանձնել սերունդներին...»:

Պարույր Սևակի ծննդավայրում՝ Սովետաշենում է գտնվում  
և գործում բանաստեղծի տուն-թանգարանը: Սակայն այն Սևակ-  
բանաստեղծի պարագայում չափազանց քիչ է և այսօր կա-



Վերջին լուսանկարը բանաստեղծ Մ. Մկրտչյանի հետ  
Последняя фотография с поэтом М. Мкртчяном

մա-ակամա օրավուր պահանջ է դառնում նաև քաղաքամայր  
Երևանում սևակյան հարկ ունենալը:

Ժամանակի անողոք պահանջով ձեռագրերի, բազմապիսի  
այլ նյութերի ճակատագիրը՝ խունացումն ու տեսքից ընկնելն  
է, պետք է աշխատանք և հոգ տանել, դրանք փոխարինելով  
ֆոտոպատճենների, և աշխատել միմիայն դրանց վրա: Այս  
կապակցությամբ արժե հիշատակել, որ ի թիվս այլ թան-  
գարանների, այսօր Ե. Չարենցի անվան գրականության և  
արվեստի թանգարանում, Հայատանի, Վրաստանի, Լենինգրա-  
դի և Մոսկվայի պետական արխիվներում պահվող Հ. Թուման-  
յանի ձեռագրային ողջ ժառանգությունը լուսապատճենված և  
կենտրոնացված է Թումանյանի երևանյան թանգարանում, մի  
բան, որ չենք կարող ասել ոչ միայն Պ. Սևակի երևանյան  
թանգարանա-գիտամշակութային օջախի գոյության, այլև նրա  
ժառանգության պահպանման ընդունված մեթոդների և ձևերի  
մասին:

Էլ չեմ ասում այն փաստի մասին, որ Սովետաշենի տուն-թանգարանի կազմավորման շրջանում մի շարք նյութեր մասնակի դարսել էին մկների բաժին: Այո, Երևանում սևակյան գիտամշակութային օջախի հիմնադրման հարցն այսօր ծառացել է, որ Սովետաշենում եղած տուն-թանգարանը մեզ չի բավարում և հնարավորություններ էլ չունի բավարարելու, ապագայում այդ վայրը ո՞չ Վայմար, ո՞չ Էլ Յասնայա Պոլյանա դառնալու հավակնություն կունենա, ուստի մնում է մտահոգվել Երևանյան սևակյան հարկի մասին: Հույս ունենք, որ ստեղծված այս հավաքածուն կնպաստի այդ մեծ գործին՝ ստեղծել Պ. Սևակի թանգարան՝ գիտամշակութային օջախ Երևանում, այն քաղաքում, ուր նա ապրել է, ստեղծագործել որպես բանաստեղծ, քաղաքացի և հասարակական գործիչ, ի վերջո այն Երեվանում, որին նա նվիրել է իր սքանչելի «Երերունի—Երևան» երգ-հիմնը...

Պ. Սևակի արխիվն ունի տարբեր հասցեներ, դրա մի մասը գտնվում է բանաստեղծի ծննդավայրում գործող տուն-թանգարանում, մի մասը՝ Երևանում, գրականության և արվեստի թանգարանում, իսկ մեծ մասը՝ Սևակի ժառանգների մոտ: Իհարկե, կան նաև առանձին անհատներ, որոնք նույնպես իրենց անձնական նյութերում ունեն սևակյան առանձին ձեռագրեր ու մասունքներ: Ահա այս ամենը մի առանձին Երևանյան սևակյան տաճարում կենտրոնացնելու խնդիրն է, որ մտահոգություն է դարձել շատ-շատերիս համար:

Հայտնի է, որ Սևակը ապրել է Երևանում Երեք տարբեր հասցեներով, առաջինը՝ Սպանդարյան փողոցի բուն Երևանյան հին հարկն է, որը նախատեսվում է քանդել նոր շինությունների համար: Բայց ինչպես ճիշտ ու տեղին բողոքում էր Կարեն Սիմոնյանը (մամուկում և հեռուստատեսային հաղորդումներում), մի՞թե Երևանում հենց դարասկզբի շունչ ու միջավայրը սքանչելիորեն պահպանած այդ և հարակից մեկ-երկու փողոցները պիտի քանդվեն նոր կառուցի համար: Բավական չէ՝ պատմությունը մկրտելով ու վերաձևելով սնանկացնենք ոչ միայն մեր ներկան, այլև գալիքը աղավաղենք...

Կա նաև Կասյան փողոցի այն շենքի բնակարանը, որտեղ մինչև կյանքի վերջին օրերը ապրեց բանաստեղծը, որը սա-

կայն համապատասխան հարմարություններ չունի: Եվ վերջապես Երևանում՝ Ղուկասյան փողոցում՝ Պ. Սևակը նույնպես ապրել է իր աներոջ տանը, որի բնակարանային պայմանները թերևս կարող են թանգարանային սրահի ծառայել: Վերջապես առավել նպատակահարմար է այն տեսանկյունից, որ այս ապագա թանգարանը հարևան կլինի Մարտիրոս Սարյանի, Հովհաննես Թումանյանի, Երվանդ Քոչարի, Արամ Խաչատրյանի, Արամ Աբրահամյանի թանգարաններին (այս գաղափարը Շահեն Թաթիկյանն է հուշել):

Բանաստեղծի հիշատակի հետ կապված այս և նման հարցերի լուծման համար թերևս անհրաժեշտ է պետական բանկերից մեկում հատուկ հաշիվ բացել Պ. Սևակի անվամբ: Հետագայում հավաքված այդ գումարն էլ ձեռնադրել թանգարանի շենքի թե կազմակերպման և թե կառուցման գործին: Այս ֆոնդ-արխիվին որևէ մասունք կամ նյութ տրամադրողների մեջ Գրացիա Բաղդասարյանն առայժմ միակն է, որ կատարել է նաև նյութական օգնություն: Գ. Բաղդասարյանը գրադպում է Սևակի ստեղծագործությամբ, և վերջերս եղել էր Հունգարիայում, հանդիպումներ ունեցել հունգար այն գրողների հետ, որոնք Սևակի Հունգարիա այցելած ժամանակ եղել են նրա հետ, նրա կողքին: Այդ հիշողությունները նյութ էին դարձել նաև հայկական հեռուստատեսության հաղորդման համար: Ինչպես այս հաղորդման, այնպես էլ սևակյան ստեղծագործություններից արված ծաղկաքաղի հրապարակումից («Ավանգարդ» 14. 04. 88 թ.) ստացված հոնորարները նա տրամադրել է սևակյան ֆոնդ-արխիվին, այն ինչ-որ մի բանով համալրելու համար: Իսկ նման ցանկություն ունեցողների թիվը քիչ չէ: Հետևապես պետական տնօրինությամբ հարկավոր է ձեռնարկել նման գործ, որը ավելի կհեշտացնի թանգարանամշակութային օջախի հիմնադրումը:

Ահա նման մտահոգությամբ այսօր չի կարելի աշքաթող անել բանաստեղծի անունը կրող ավանի կառուցապատման շինարարության հետ կապված օրավուր աճող հարցերը: Այս կապակցությամբ արժե հիշատակել այն հրապարակումները, որտեղ խոսք է գնացել, անշուշտ, քննադատական առումով, Սևակսկանի շինարարությունում տիրող անմիջարական վիճակի մասին:

Գյուղական վայրերում շինարարական օբյեկտների ընթացքի մասին հեռուստատեսային հաղորդումներից մեկի ժամանակ հաղորդավարը անդրադարձավ նաև Սևակավանի շինարարության պրոբլեմներին, նշեց թերությունները, դրանց շուտափությունը՝ վերացնելու անհրաժեշտությունը։<sup>1</sup>

